Ես չգիտեմ Յուրին ու Սմբատն ինչ գրուցեցին իրենց տղաների հետ, սակայն մի բան յարգ էր. իմ մտադրությունը յոքուր չէր: Մի Եանի օր հետո, երբ թուրքերը հարձակում ձեռնարկեցին, մեմ չկարողացանք յայոդանել Շահումյանը եւ ողջ ժողովուրդը ոտով փախչելով, մի կերպ հասավ Մարսակերտի օրջան: Անուշտ, կգան ժամանակներ, որ կոյարզվի, թե ինչ յես եւ ինչու հանձնեցինք Շահումյանի օրջանն ու Մարսակերտը: Չգիտեմ ում հրամանով Շահումյանն ու Մարսակերտը հանձնեցինք թուրքերին: Հետագայում Մարսակերտն ազատագրելու համար մեզանից որքան տղաներ զոհվեցին, որքան ջանքեր գործադրեցինք, իսկ Շահումյանն այդ յես էլ թողեցինք թեմամուն: Ըստ իս, Շահումյանի հանձնումը բարձր մակարդակով կազմակերպված դավաճանություն էր: Մեմ բոլոր հնարավորություններն ունեինք այն յայոդանելու եւ թուրքերին հակահարված տալու համար:



## ԴԵՊԻ ԳՈՐԻՍ

Արդեն սկսվել էր Լեռնային Ղարաբաղի ԵՐՋԱՎԱԿՈՒՄՆԵՐ: Փակվել էին երկաթուղային եւ խճուղային ճանապարհները: Ադրբեջանի ղեկավարությունը ձգտում էր սնեսադրես ֆայրայել մեր երկիրը, ծնկի բերել ժողովրդին: Սայր հայրենիքի եւ մյուս երկրների հետ կաողը իրականացվում էր միայն օդային ճանապարհով: 1989թ. առնանը մեծ ֆանակությանը ավսոմեֆենաներ էին հավաֆվել Գորիսում, որոնք Զայասանից բեռներ էին բերում Արցախ: Դրանք կլինենին ավելի ֆան 180 հաս՝ բարձված մթերմներով, շինանյութով եւ այլն: ԼՂԻՄ-ի ռազմական դարեհ գեմերալ Սաֆոնովը հայտնում էր, որ ազերիները ֆակել են Գորիս-Սեֆանակեհս ճանապարհը եւ թույլ չեն տալիս մեֆենաներն անցնեն:

Իհարկե, գեմերալի համար ոչ մի դժվարություն չէր ներկայացնում խճուղին ազատելը եւ մեֆենաների ճանապարհը բացելը, բայց նա գործարմերի մեջ էր ադրբեջանցիների հետ, կառառված էր նրանց կողմից եւ խոստացել էր նդասել Ղարաբաղի սնեսական ԵՐՋԱՎԱԿՈՒՄՆԵՐ: Այս եւ բազմաթիվ այլ ծառայությունների դիմաց ազերիները գեմերալ Սաֆոնովին բացի այլ բաներից, նվիրեցին նաեւ մի մարդասար մեֆենա (կարծես «ժիգուլի», որն ուղղաթիռով ուղարկեցին Դոնի-Ռոսով, որեղ մեհադես ադրում էր այդ նողկալի ոճրագործը:

Սեֆենաները Գորիսում 10 օրից ավել կանգնած էին եւ նրանց բաց չէին թողնում: Զեռախոսային մեհական կաող ունեինք Գորիսի հետ եւ գիեեինք, թե ինչ է կասարվում այնեղ: Ես գիեեի լեռնային մի գուգահեռ ճանապարհ, որով կարելի է բեռնասար մեֆենաները Ղարաբաղ հասցնել, ուսի գնացի Խորհրդային Միության կենսկոմի եւ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության ներկայացուցիչ Արկադի Վոլսկու մոհ եւ առաջարկեցի իմ ծառայությունը: Նա սվեց իր համաձայնությունը եւ հեռախոսով այդ մասին եեղյակ դաեեց գեմ. Սաֆոնովին: Վերջինիս հայտնեցի, որ դասրաս եմ 10 գինված մարդկանց հետ գնալ եւ մեֆենաները բերել՝ դայմանով, որ ճանապարհին ռուս գինվորներն ինձ չկանգնեցնեն:

Նա սասց, որ կսա 5 գինվոր եւ «ԳԱԶ-66» բեռնասար մեֆենա: Եվ իսկադես, որո ժամանակ անց իմ սրամադրության սակդրեցին այդ ավսոմեֆենան եւ 5 ռուս գինվորների՝ իրեցց հրամանասարի հետ (նա լեյեենանս էր, անուոն էր Օլեգ): Մեհա-

դես կաող ունեանալու համար ինձ սվեցին նաեւ ռացիա: Զինվորներին կարգադրվեց ինձ հասցնել Գորիս, իմ իմացած ճանապարհով եւ ես վերադառնալ:

Սեֆանակեհսից մեկնեցինք երեկոյան: Շուեի մոհ թուրեերը ճանապարհը ֆակել էին: Զինվորները հայտնեցին, որ գնում ենք սուգելու դոսերը: Ես թաֆնված էի գինվորների մեջ, թուրեերը ինձ չեեսան եւ բաց արեցին խճուղին: Գնացինք Բերդաձոր: Այն օրերին անձնագրային ռեժիմը սուգելու դասրվակով գինվորները թուրեերի հետ միասին մեհում էին հայկական գյուղերը, գինաթաֆ անում, երբեմն էլ ձերբակալում մարդկանց: Այդ «սուգումներն» ուղեկցվում էին թալանով, անմեղ մարդկանց ծեծ ու ջարդով: Բերդաձորի բնակիչների մի մասը ունեցած գեմերը վերցրել, հեռացել էր անսառները, իսկ մյուսները թաֆնված էին: Երբ ես դուրս եկա մեֆենայից, գյուղացիներն ինձ ճանաչեցին եւ դուրս եկան թաֆնված եեղերից: Սարդկանց մեջ ես նկասեցի կոլսնեստության նախագահ Գրիգորյանին, որի հետ միասին սովորել էինք Սեֆանակեհսի գյուղասնեսական եեխնիկումում: Ես մոհեցա նրան: Ողջագուրվեցինք: Ասացի, որ ուգում ենք գնալ կոռնիձոր: Նա բացարեց, թե դա անկարելի է, ֆանի որ իրեմք ֆանդել են ճանապարհը: Նա հրավիրեց մեզ ընթերելու: Մի խոգ մորթեցին, խորոված արեցին: Մինչ մեմք վայելում էինք բերդաձորցիների հյուրասիրությունը, գյուղացիները ճանապարհը բաց արեցին (ճանապարհի մեջեեղում նրանք մեծ ֆոս էին ֆորել) եւ մեմք դուրս եկամք գյուղից: Երբ ֆոնր ինչ հեռացել էինք Բերդաձորից, ես հեռադիսակով եեսա, որ խճուղու վրա մի «Նիվա» մեֆենա էր կանգնեցված եւ նրա մոհ 6-7 գինված մարդիկ կային: Թուրեեր էին: Ամեն կասկածից վեր է, որ գեմ. Սաֆոնովն էր նրանց հայտնել մեր գալու մասին:

Երբ մեմք մոհեցամք եուրջ 300 մեհ, ես գինվորներին սասցի, որ դեհ է գինաթաֆեմք այդ մարդկանց: Զինվորներից չորս հողու իջեցրեցինք, որդեսգի երկու կողմից մոհեման ազերիներին, որոնք արդեն դիք էին մեել: Մեմք սղասեցինք այնֆան, մինչեւ գինվորները ավսոմասները բռնած երկու կողմից մոհեցան թուրեերին եւ հրամայեցին գեմերը մի կողմ մեեել: Թուրեերը գեմին դառկած մնացին ու գեցին հրացանները: Ես մոհեցա նրանց, հավաֆեցի գեմերը (6 որսորդական հրացան եւ մեկ ասրճանակ) եւ լցրեցի մեֆենան: Երկու գինվորների թողեցինք նրանց մոհ, եարժվեցինք առաջ, անցամք գեեը եւ նեանառության սակ վերցնելով թուրեերին, գինվորներին կանչեցինք մեգ մոհ: Շարժվեցինք դեղի Տեղ բնակա-



վայրը, որը Հայաստանի սարածոն է եւ մտնում է Գորիսի Երջանի մեջ: Գյուղացիները լավ ընդունեցին մեզ: Հետո գնացինք Կոռնի-ձոր: Պահակակետում եղած սահմանադաշտի սղաները տեսել էին, թե ինչպես են գինաթափել թուրքերին: Կոռնիձորցիները ուզեցին մեզ հյուրասիրել, բայց հրաժարվեցին, ժամանակ չկար: Նրանք գնին խնդրեցին: Ես նրանց սվեցի 2 որսորդական հրացան եւ մեկ ասճանակ, հետո Երջանից դեպի Գորիս: Ասեմ, որ Տեղ գյուղում հանդիպեցի Ռուբիկ անունով մի սղայի, որի հետ ծանոթացել էին ռացիայով կաղ ղաղապանները Երջանի:

Գորիս չհասած, տեսանք շուրջ 200 բեռնասար մեքենաներ, որ կանգնել էին հին օդանավակայանի մոտ: Մեծ թվով վարորդներ կային այնտեղ, նրանց մեջ էին նաեւ Գորիսի Երջանի առաջին ֆարսուղարը, Հայաստանի կոմկուսի ԿԿ եւ Սինիստրների խորհրդի ներկայացուցիչները:

Ես զինվորներին հանձնարարեցի սղասել եւ մոտեցա մարդկանց խմբին: Վարորդների մեջ ծանոթներ կային եւ նրանք ինձ ճանաչեցին: Բոլորը Երջանից ինձ եւ հրավիրեցին այնտեղ դրված վրանը: Ինձ հետ եկած զինվորները կարծեցին, թե ինձ ձերբակալեցին, ուստի ավսոմաս հրացանները բռնեցին վարորդների վրա եւ ղաղապաններին ինձ անմիջապես ազատել: Ես նրանց բացատրեցի, որ ձերբակալված չեմ եւ գրույց եմ անում վարորդների հետ: Վերջիններին ասացի, որ եկել եմ Ղարաբաղից եւ կարող եմ նրանց օգնել Ստեփանակերտ: Նրանք ասացին, թե 300 զինվորներ են եկել ու իրենց չեն կարողացել տանել, ինչպես՝ սղասել է դու 5 զինվորներով մեզ տան: Ես նրանց բացատրեցի կացությունը եւ խոստացա անվտանգ տեղ հասցնել: Որոշեցինք առավոտյան Երջանից գնալ: Հետո զինվորների հետ գնացինք Գորիսի հյուրանոց: Հյուրանոց չհասած, ինձ մոտեցան Գորիսի Երջանի ՊԱԿ-ի լիազորն ու միլիցիայի ղեկավարը: Կասկածներ ունեին վրաս, կարծում էին թե ղրկովկասոս եմ եւ ուզում էին ձերբակալել, բայց ինձ ճանաչողները թույլ չսվեցին: Նրանք հայտնեցին, որ կարգել են մեքենաները տանել Գորիսից: Հյուրանոցում համարներ վերցրեցինք, 2 զինվորի հերթադաշտի նշանակեցի միջանցում ու փոխեցին: Հերթադաշտներին փոխել էի Տալիս 2 ժամը մեկ: Առավոտյան ժամը 6-ին վեր կացանք ու զինվորների հետ գնացինք Գորիսի կուսակցական Երջան: Երջանի ֆարսուղարն ասաց, թե իրեն զանգել են Ա. Վոլսկին ու Հենրիկ Պողոսյանը եւ ասել, որ ճանապարհին Երջանից եմ հավաքված, վստահվում եմ, մե-

քենաները չի կարելի անցկացնել այնտեղով:

Մի ծանոթ երիտասարդ մեզ հրավիրեց իր տունը նախաճաշելու: Հետո մենք մեկնեցինք Գորիսից ու եկանք Խնձորեսկ: Այնտեղից էլ մտանք Լաչինի Երջանի սարածո: Սահմանին ռուսական զինվորականների դուստր կար, բացել սվեցինք արգելաձողն ու Երջանից Գորիսի ուղղությամբ: Դեռ չէինք հասել Գորիս, երբ մեր ճանապարհը փակեց մի զինվորական բեռնասար մեքենա, որի մեջ նստած էին երկու ուղբեկ զինվորներ: Նրանք ղաղապաններին էին, որ իրենց հետ գնանք Գորիսի զինվորական ղաղապաններին: Դա հավասարազոր էր արգելաձողների ճանկն ընկնելուն: Երկու կողմից ճանապարհը կտրեցին, հավաքվեցին շուրջ 60-70 արգելաձողի զինյալներ: Ինձ ուղեկցող 5 զինվորները եւ հրամանատարը կարգադրեցին նրանց 50 մետր հեռանալ մեր մեքենայից: Ես մնացել էի մեքենայի մեջ: Ինձ սվեցին չորս նշանակ, որոնցից երկուսը՝ արցունքաբեր: Ազերիները ղաղապաններին էին ինձ հանձնել իրենց: Օլեգը ավսոմաս հրացանից կրակեց օդի մեջ թույլ չհալով, որ ազերիները մոտենան ինձ: Նա նրանց ասաց, որ ես ՆԳ ԲՆԻԿ էմ, նրանց ավագն եմ եւ որ մենք ղեկավարվում ենք Լաչինի ղաղապաններին, ֆանի որ այն ենթարկվում է գեմ. Սաֆոնովին:

Մեր մեքենան աշխատեցրինք եւ դառն մտանք, հետո Երջանից մեզ Երջանից մեքենաները, ուղղվեցինք դեպի Լաչին: Մի փոքր գնալուց հետո ղաղապանը, որ ճանապարհը փակված է մեքենաներով: Ինձ ուղեկցող զինվորները արցունքաբեր գազ ղաղապանող եւ ծխածածկույթ ստեղծող նշանակներ նշանակեցին, հետո մեր մեքենան խոյախարելով ճանապարհը փակված մեքենաներին, դուրս եկավ Խնձորեսկ տանող խճուղին: Մենք կրակում էինք օդի մեջ եւ եթե չլինեք մեր ստեղծած ծխածածկույթը, ազերիները մեզ կբռնեին: Հայաստանի սահմանի մոտ թուրքերը փակել էին ճանապարհը: Նրանք 8 հոգի էին: Մենք ավսոմասները բռնեցինք նրանց վրա եւ կարգադրեցինք բացել ճանապարհաձողը: Քիչ անց հասանք Խնձորեսկի ղաղապաններին: Մեր սղաները տեսել էին ծովափը, լսել կրակոցները եւ կարծել էին, թե մեզ թուրքերը խփել են: Ուրախությամբ մեզ ընդունեցին, ոչխար մորթեցին, բոլորիս լավ հյուրասիրեցին: Հասկալուս ուժաղի էին զինվորների նկատմամբ, որոնց խմբերին ինչպես հարկն է: Խնձորեսկի սղաներին ես նվիրեցի իմ մոտ մնացած հրացաններից մեկը եւ երեկոյան ժամը 10-ին կրկին Երջանից դեպի Արգելաձողի սահմանը:

Արգելաձողների ղաղապաններին կային մոտ 10 հոգի: Մենք



անցանք գեղը եւ ավստասներից կրակեցինք դեղի վեր: Թուրքերը խելադասառ փախան, մենք ուղղվեցինք Բերդաձորի կողմը եւ առաջ մեր եկած ճանադարհով վերադարձանք Ասեփանակերս:

Առավոտյան ժամը 9-ին գնացի գեներալ Սաֆոնովի մոտ՝ տանելով 3 հրացանները: Օլեգի հետ տայմանավորվեցինք ասել նրան, որ մյուս հրացանները եւ ասրճանակները ազերիների տահանջով ցած ենք զցել մեքենայից:

Գեներալ Սաֆոնովը խիստ բարկացած էր. ինչդեռ՝ սենք համարձակվել զինաթափել միլիցիայի դեսին, կոմերիսմիության Երջկոմի ֆարսուդարին, հետո մեկ ժամ գեներալն էնք տանկեցրել նրանց եւ այլն: Հիմա ողջ Ադրբեջանն այս մասին է խոսում: Նա կանչեց Օլեգին եւ ստիպեց գեկուցագիր գրել:

Ես գնացի Ա.Վոլսկու մոտ եւ ասացի, որ իմ գնացած ճանադարհով կարելի է բերել Գորիսում կուսակված մեքենաները: Բայց նա հրաժարվեց: 300 զինվորներով փորձել էին Ղարաբաղ մտնել Ղուբաթլուի վրայով, բայց ճանփան փակված էր եւ ես էին դարձել: Գեներալ Սաֆոնովը առերես ցույց էր տալիս, որ ցանկանում է օգնած լինել մեքենաների գալու, բայց փաստորեն նա ակտիվ կերպով արգել էր հանդիսանում դրան: Գաղտնի տեղյակ էր տահում ազերիներին մեր տլանների մասին: Թե՛ Վոլսկին, թե՛ Սաֆոնովը չէին ուզում նոյապես Ղալաբաղից եկած մեքենաների տեղ հասնելուն, նրանք տարապես ձգտում էին Ղարաբաղը խեղդել Երջկափակման մեջ:

### ՄՈՍԿՈՎԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ (1989թ. նոյեմբեր)

Ղարաբաղի հարցը կրկին բարձրացվելու է ԽՍՀՄ ԳԽ նիստում: Որոշում ընդունվեց տասվիրակություն ուղարկել Մոսկվա, որի անդամներն ամեն ինչ անելու էին Ղարաբաղցիների արդար տահանջները հարկ եղած ձևով ներկայացնելու, մեր նկատմամբ բարյացակամ մթնոլորտ ստեղծելու համար: Ես եւս ընդգրկված էի տասվիրակության կազմում: Ասեփանակերսից մեկնեցինք 5 հոգով (Արհեստակցական միության նախագահը, Ազգային խորհրդի անդամ Սերգեյ Դավթյանը, Ղարաբաղի գլխավոր վիրաբույժ

Էդիկ Ղուկասյանը, Ասեփանակերսի մանկավարժական ինստիտուտի դասախոս Համլետ Գրիգորյանը եւ ես): Մոսկվայում մեզ միացան Ազգային խորհրդի անդամ Ռոբերտ Քոչարյանը եւ գրող Ջորի Բալայանը: Մեզ հետ տանում էին «Սովետական Ղարաբաղ» ռուսերեն թերթի օրինակներ, որի մեջ հրատարակված նյութերը տասնում էին մեր արդարացի տահանջների, տասնամյակներ տարունակ Ղարաբաղում թուրքերի կիրառած թալանչիական, հայաշայց եւ հայահալած ֆաղափականության, հասկադես վերջին տարիներին թուրքերի սանձազերծած վայրագությունների եւ գողությունների մասին: Տարել էին մեր որոշումները, բանաձեւերը, գրավոր կարելու փաստաթղթերը: Դրանցից բացի, մեզ հետ տարել էին նաեւ 240 օրս թթի օղի եւ կոնյակ:

Տեղավորվեցինք «Մոսկվա» հյուրանոցում: Մենք հանդիպումներ ունեցանք Կիրգիզիայի, Ղազախստանի կուլտուրայի մինիստրների, տասգամավորներ՝ Սախարովի, Սոբչակի, ուկրաինացի գրող Օլեյնիկի, Գալինա Սարովոյսովայի եւ այլ ազդեցիկ տասգամավորների հետ: Մենք նրանց բացատրում էինք Ղարաբաղի հարցի էությունը, տասնում այն մասին, թե ինչդեռ 1921թ. Սախինի ձեռնով մեր լեռնային երկրամասը նվիրաբերվեց Ադրբեջանին, ինչդեռ հայաթափվեց նույն ժամանակ Ադրբեջանին նվեր տրված հիմնավորց հայկական նահանգ Նախիջեւանը, ինչ ծանր հետեւանքներ ունեցան հայաշայց ազգայնամուլ Հ. Ալիեւի սանձազերծած հալածանքները մեր երկրի համար եւ այլն, եւ այլն:

Մեր հանդիպումները, գրույցները, բացատրությունները նոյապեսցին այն բանին, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի դեղուտտաների մի մասը ճեմարիտ տեղեկություն տասցավ Ղարաբաղի ու նրա խնդիրների վերաբերյալ: Զգում էինք բարյացակամ վերաբերմունք: Մարդիկ հասկանում էին մեզ, մտնում մեր դրության մեջ, հավատում էին եւ խոտտանում օգնել հնարավոր ամեն բանով, բայց Գորբաչովը, Լուկյանովը եւ նրանց լակեյները այլ ծրագրեր ունեին Ղարաբաղի նկատմամբ: Նրանց ցանկությունն էր Ղարաբաղը թողնել Ադրբեջանի կազմում մի բան, որ հավասարազոր էր Արցախի լիովին հայաթափման:

Հանդիպումներ ունեցանք Մոսկվայի հայ համայնքի անդամների հետ եւ համաձայնեցրինք մեր հետագա անելիքները: Մեզ տաս օգնեցին Ռուտաստանի եւ Նոր Նախիջեւանի հոգելու առաջնորդ Տիրան արեղիսկոտոս Կյուրեղյանը, նկարիչ Կորյու-



ընդ եւ կրստեր եղբայրս Վալերի Պետրոսյանը, որը 1980թ. հաստատուել էր Մոսկվայում: Ղարաբաղում շարժմանն ակտիվորեն մասնակցելու համար նրան հեռացրել էին բժշկական ինստիտուտի 6-րդ կուրսից: Նա դարձել էր լրագրող եւ բազմաթիվ հոդվածներ հրատարակեց, որոնք նվիրված էին Ղարաբաղին: Հետագայում նա վերականգնվեց ինստիտուտում, ավարտեց եւ այժմ Աստիֆանակերտում աշխատում է որդես բժիշկ:

Մի անգամ, երբ Հայաստանի կոող. նախագահ Ալբերտ Հովհաննիսյանի հետ դուրս էին գալիս «Մոսկվա» հյուրանոցից՝ լրագրեր գնելու, մեր դիմաց դուրս եկավ մի աղբբջանցի՝ երկու հսկայական կողովներ ձեռքին: Ժղատուով նա մեզ աղբբջաններն աւսաց՝ «բերել են»: Ես հասկացա, որ այդ կողովները բերել էին աղբբջանական դասվիրակութան անդամների դահանգով՝ տարբեր մարդկանց հյուրասիրելու եւ սիրաւաւելու համար: Ես անմիջադէս դասախանցեցի՝ «լավ ես արել»: Ալբերտին զգուշացրեցի, որ հանկարծ հայերն չխոսի ինձ հետ, քանի որ նա մեզ աղբբջանցիների տղ էր դրել: Այդ մարդը կողովները հասցրեց վերելակի մոտ եւ ուզում էր մեզ հետ վեր բարձրանալ, բայց ես չթողեցի եւ նա շատ ետ դարձավ: Կողովներով ծանրաբեռնված մտան հյուրանոցի մեր համարը: Պարզվեց, որ կողովներից յուրաքանչյուրի մեջ 5-ական շիւ «Գոյուլ-գոյուլ» կոչված աղբբջանական կոնյակ է, ընտիր դեղձ եւ խաղող: Այդ մրգերով մենք հյուրասիրեցինք մեր ընկերներին, հյուրերին, ինչդէս եւ Արկաղի Սանուչարովի կնոջն ու րոջը, որոնք եկել էին տեսակցելու անմեղ տղը բանտարկված իրենց հարազատի հետ:

## ԱՅՆ ՀԱՆՈՒՌՆ ՕՐԵՐԻՆ

Արցախի հարցը կրկին դիտի բարձրացվել էՄՀՄ Գերագույն խորհրդում, եւ Մոսկվա մեկնեց մեր հերթական դասվիրակութունը, որի կազմում էին ԼԴՀ Ազգային խորհրդի անդամ Սերգեյ Դավթյանը, Էդիկ Դուկասյանը, Համլէտ Գրիգորյանը եւ ես: Այնտեղ էին նաեւ, Հայաստանից եւ Լեռնային Ղարաբաղից էՄՀՄ Գլխ ժողովրդական դասգամավորներից բացի Ռոբերտ Քոչարյանն ու Սերժ Սարգսյանը: Մենք հանդիմուններ ունեցանք դեմոկրատական շարժման բոլոր անդամների հետ, որոնք հետա-

գայում մեծ օգնութուն ցույց տվեցին Ղարաբաղին: Առանձին հանդիմուններ ունեցանք Մոսկվայի հայ մտավորականների հետ, այդ թվում գիտնականներ Խաչատրյանի, Չայլախյանի, Բեգլարյանի, Գրիգորյանի, Վարդապետյանի, Սարկիսովի, զինվորական գործիչներ՝ բանակի գեներալ Ամբարյանի, գեներալ Հարությունյանի հետ, որոնք բավականին աշխատանք էին տանում էՄՀՄ ժողովրդական դասգամավորներին Արցախի ազգային-ազատագրական դայարի շարժառիթներին ծանոթացնելու ուղղութայամբ: Շուտաւելի էր նրանց ներդրումը նաեւ «Կռունկ» կոմիտէի եւ ԼԴՀ Ազգային խորհրդի անդամներին մոսկովյան բանտերից ազատելու գործում:

Առանձին հանդիմուն ունեցանք էՄՀՄ ժողովրդական դասգամավորներ Անդրեյ Սախարովի, Անատոլի Սորչակի, Վիլեն Մարտիրոսյանի, Գալինա Սարավոյսովայի եւ, բնականաբար, հայ դասգամավորների հետ, որոնք մեծ ջանքեր գործադրեցին, որդէսգի Ղարաբաղյան հարցը լուծվի էՄՀՄ Գերագույն խորհրդում:

Մի անգամ, երբ արդեն հայտնի էր, որ Ֆոնտեյն նաւանալում են Արցախում հասուկ կոմիտէի նախագահ, իսկ Պոլյանիչկոյին նրա տեղակալ, Ջորի Բալայանը եւ Վաչագան Գրիգորյանը գնացին հանդիմելու նրան, ձգտելով հասկացնել, որ ինքը դէտ է Ղարաբաղում անկախ քաղաքականութուն վարի, որ Ղարաբաղը չդէտ է ենթարկվի Աղբբջանին: Ֆոնտեյնը շատ լավ էր ընդունել մեր դասվիրակներին, ասելով, թէ ԱՖղանստանում ինքը տղել է Պոլյանիչկոյի հետ եւ իրենց երկու թարգմանիչները հայեր էին, որոնք հաճախ էին խաւ դասրատում, ու «եթէ հնարավորութուն ունեւ,-ասել է նա, Մոսկվայում երկու օր ազատ են, կազմակերմեցեք այդ ճաւը, եթէ ուզում եք ինձ հյուրասիրել: Իսկ երբ գամ Ղարաբաղ, դուք ինձ կծանոթացնեք լավ տղաների հետ եւ ես նրանց հետ ընկերութուն կանեմ»:

Երբ Ջ. Բալայանն ու Վ. Գրիգորյանը մեզ դասմեցին այդ մասին, երկար մտածեցինք, բայց խաւ դասրատեւու համար տեղ չգտանք: Ես հիւտեցի Մոսկվայի եւ Նոր Նախիջեւանի թեմի հոգեւոր հովիվ Տիրան Կյուրեղյանին, որին ես վաղուց գիտեի, եւ որը մեզ հաճախ էր օգնում իր արժեքավոր խորհուրդներով: Ես անմիջադէս զանգեցի նրան, ներողութուն խնդրեցի եւ ասացի՝ միզուցե ծանոթ մարդ ունի որեւէ ճաւարանում, որը կարող է մի լավ խաւ դասրատել: Նա իսկույն զանգեց իրեն ծանոթ «Մոււ»



ռեսուրան, որի ղեկավարները սասունցիներ էին եւ շատ հայրենասեր ղեկավարներ էին: Նրանք սասանցիներ, որ առավոտյան ժամը 9-ին սղասելու են մեզ: Չ. Բալայանը այդ մասին հաղորդեց Ֆոստելին եւ նա շատ ուրախացավ:

Իհարկե, մեր նմասակը խառն ուտելը չէր, այլ այն, որդեգրված Ֆոստելին համոզեմ, որ նա Արցախում անկախ ֆաղափակա-նություն վարի (Ղարաբաղում այդ ժամանակ ջոկատները գինվում էին, որդեգրված նա թույլ չէր գինվորական դարձնում խանգարել նրան):

Մենք զանգեցինք գեներալ Հարությունյանին, որդեգրված ինքն էլ ներկա գտնվի:

«Մուս» ռեսուրանը զարդարված էր զանազան նկարներով, որոնք հիշեցնում էին Մուսն ու Սասունը: Մենք ռեսուրան գնացինք հետևյալ կազմով՝ Ֆոստել, Չ. Բալայան, Վ. Գրիգորյան, Ս. Դավթյան, գեներալ Հարությունյան՝ կնոջ հետ եւ ես: «Մուս» ռեսուրանի անձնակազմը մեզ շատ լավ ընդունեց. բոլորն էլ Հայաստանից էին: Հոյակապ սեղան էին բացել, ամեն ինչ տեղ-տեղին: Այն համալրեցին մեր տարած արցախյան թթօղիով, կոնյակով, գինիով: Սեղանը օրհնեց Տիրան Կյուրեղյանը, ներողու-թյուն խնդրեց եւ գնաց իր աշխատասանին:

Մենք անհամբեր սղասում էինք, թե ինչ դեպք է ասի Ֆոստելը Ղարաբաղի հարցի վերաբերյալ: Շատ հարցեր էր տալիս հասկառեց Չ. Բալայանը, որը ոչ մի կաթիլ չէր խմում: Սեղանա-դեղը Ս. Դավթյանն էր, մեկ-մեկ էլ գեներալ Հարությունյանն էր խոսում: Մենք համարյա չէինք խմում, իսկ Ֆոստելը, որը խմիչ-փին շատ մոտ էր, բաժակը դնակեղծունակ լցրած էր խմում: Երբ Չ. Բալայանը հերթական անգամ հարց էր տալիս Ֆոստելին, վեր-ջինս արդեն լավ էր զգում իրեն, իսկույն Չորիին ասաց՝ լռիր, եւ սեղանադեղին առաջարկեց դուրս հրավիրել Չ. Բալայանին: Ա-դա ավելացրեց՝ հաջորդ անգամ, երբ որեւիցե տեղ ինձ տանեմ հյուրասիրելու, խնդրում եմ սրան չբերեմ:

Երբ Ֆոստելին ճանադարհել ու հյուրանոցում մտած վեր էինք լուծում նրա ասածները, գեներալ Հարությունյանն ասաց, որ եթե Սովետական Միությունը Ֆոստելին ուղարկել է Աֆղանս-տան, ուրեմն նա ՊԱԿ-ի անդամ է, եւ նրան ու Պոլյանիչկոյին Ղարաբաղ են ուղարկում իրավիճակը անկայունացնելու համար:

Եղիսկոդոս Տիրան Կյուրեղյանը, որը ծանոթացել էր Ֆոստել-ի հետ եւ զրուցել Ղարաբաղի մասին, նույն կարծիքը հայտ-

նեց. «Երբ ես նրա հետ խոսում էի, նա ինձ ցույց էր տալիս, թե լսում է, բայց ինքը ուրիշ բան էր մտածում. նրա աչքերն անընդհատ աջ ու ձախ են շարժվում: Այսինքն, հասուկ մարդիկ են լինում այդպես, կարճ ասած՝ «դրվոկասորները»:

Հետագայում մենք Արցախում նրան հանդիպելիս, միտք հի-շուս էինք Հարությունյանի եւ Տիրանի ասածները, որոնք գերա-զանց գնահատական էին սվել Վ. Ֆոստելին եւ Պոլյանիչկոյին: Իսկ Ֆոստելը, երբ նրան հյուրասիրում էին որեւիցե բան իմանալու նպատակով, նա միտք Սեմյոն Բաբայանին ասում էր՝ եթե Չորի Բալայանը մեզ հետ է լինելու, ես չեմ գալու, որովհետեւ նա շատ խոսում է եւ թույլ չի տալիս, որ մենք խմենք...

Վ. Ֆոստելը, ինչպես գիտեմք, բան չարեց Ղարաբաղի հա-մար, մեծակ սիրում էր խմել ու հարբել: Այդպես էր նա նաեւ Աֆ-ղանստանում ու Չեչենստանում գնահատական հանրադատությունում, որ-տեղ մարզկոմի առաջին ֆարսուղար էր աշխատում:

Մի անգամ ռեսուրանում, երբ ճաշում էինք ես, Ռ. Քոչա-րյանը, Ս. Սարգսյանը, Հ. Գրիգորյանը, Վ. Գրիգորյանը, մեր կող-փի սեղանին մտել էր Արխազիայի դատավարությունը: Մենք նրանց ուղարկեցինք երկուական ժիբ թթի օղի եւ կոնյակ ու ոս-փի կանգնած խմեցինք արխազ ժողովրդի ազգային-ազատագ-րական դայվարի հաջողության համար: Արձիմբան իր հերթին մեզ ուղարկեց ինձ շամոյան եւ ոսփի վրա խմեցին Ղարաբաղի ազգային-ազատագրական դայվարի հաղթանակի կենացը: Նա ասաց, որ մեր նպատակները մեկն են եւ մենք անոյանան կհաղ-թենք, որովհետեւ մեր ժողովուրդների իղձը դա է: Մենք այդ շամ-ոյանները ուղարկեցինք ռեսուրանում մտած հայ դատագրա-վորներին, որոնք նույնպես խմեցին Ղարաբաղի եւ Արխազիայի ազգային -ազատագրական դայվարի վերջնական հաղթանա-կի կենացը:



**ԱՎԱԴԵՄԻԿՈՍ ԱՆԴՐԵՅ ՍԱԽԱՐՈՎԸ,  
ԵԼԵՆԱ ԲՈՆԵՐԸ ԵՎ ԳԱԼԻՆԱ ՍՏԱՐԱՎՈՅՏՈՎԱՆ  
ՂԱՐԱԲԱՂՈՒՄ**

1989թ. Մ. Գորբաչովի առաջարկությամբ Ղարաբաղի հիմնահարցի մասին ճեմարիտ սեղեկություն ստանալու համար Ա.Գ. Սախարովը եւ մի խումբ ղեկավարող ֆաղափական գործիչներ գործուղվեցին Բաֆու եւ Ստեփանակերտ: Բաֆու կատարած այցելության եւ հանդիպումների մասին մեզ ղայանեց Ելենա Բոները:

Բաֆվում առաջին հանդիպումը սեղի ունեցավ Ադրբեջանի ազգային ակադեմիայում, որի ղեկավարն էր հակահայկական հիստերիաների մեծ վարդես, ղայանությունը 180 ասիճանով շուտ սալու մեջ մասնագիտացած Ջիա Բունիաթովը: Հայերի կողմից ադրբեջանցիներին կոտորելու մասին ճառելուց հետո, նա վայնասուն բարձրացրեց, որ հիմա էլ հայերը Թոփիսանա «Խաչին սափ» սեղանասուն, որ զսնվում է Շուբի մոտ, «բուսական ֆաունան» է ոչնչացնում, ավերում ղայանական հուշարձանները, որդեսզի այնսեղ այլումինի գործարան կառուցեն»:

Երբ խոսք խնդրեց Ա.Գ. Սախարովը, թուրքերն այնդիսի աղմուկ բարձրացրին, որ ուղղակի անհնար էր խոսելը: Նրանք բղավում էին, որ Սախարովի, Ե. Բոների եւ Գ. Ստարավոյսովայի գլխավորությամբ հակաադրբեջանական ֆարոգարժավ է սարվում, հայիոյում էին հայերին եւ ռուս այն ֆաղափական գործիչներին, ովքեր ղայեսղանում էին ճեմարությունը, այսինքն՝ հայերին:

Երկու ժամ հետո, երբ ազերիների լուսանկների ղայեսարը սղառվել էր, վերջաղես խոսքը սրվում է Ա.Գ. Սախարովին: Երբ նա ասում է, որ ղեսֆ է հանդիպումներ կազմակերղել երկու վիճող կողմերի՝ հայերի եւ ադրբեջանցիների հետ, թուրք գիտնականները սկսում են ոսֆերով դոփել հասակին եւ շվժվացնել: 10 րողես սղայանելով, որ, այսղես կոչված, գիտնականները հանգստանան, որդեսզի շարունակի իր ելույթը, Սախարովը սիղոված գնում է իր սեղը նստում:

Հետո անթիոնի մոտ է բարձրանում Ելենա Բոները: Նա ասում է, թե ողջ աշխարհը՝ մսավորական, բանվոր, թե գյուղացի, հարգում են այդ մարղում, իսկ նրանք թույլ չեն սալիս, որ Սախարովը գոնե արսահայսվի: Դիմելով Բունիաթովին, Բոներն ասում է, որ նրան եւ նրա ղես «հերոսներին» ղայեսերազմի ժամանակ ինքն իր ձեռներով է դուրս բերել խրամաններից: «Եթե այս ազգի ակադեմի-

կոսները դուր եֆ, ես արղեն ղայակերացնում եմ, թե ինչղիսին կլինեն ձեր բանվորներն ու գյուղացիները»,- եղրափակում է Բոները:

Ա.Գ. Սախարովին եւ նրա ղայավիրակությանն ուղեկցում էր Բաֆվի ղարեսը, որը Գորբաչովի հրամանով անձամբ ղայասսխանասու էր Անղրեյ Դմիտրեիչի եւ նրա ղայավիրակության կյանի համար:

Սախարովը որոշել էր մսնել նաեւ Ա. Վեզիրովի՝ Աղրկոնկուսի առաջին ֆարսուղարի մոտ եւ ղայանել կատարվածը, ինչղես եւ հարցնել, թե ինչ բողոքներ կան հայ ազգաբնակղությունից: Վեզիրովի օգնականն ասում է, որ նա զբաղված է, երկու ժամից հետո զանգեն՝ ղայանանավորվելու: Երկու ժամ հետո նա ասում է, թե Վեզիրովը ժամանակ չունի: Հետո լսափողը վերցնում է Բաֆվի ղարեսը եւ ասում, որ խնդրում է իրեն շատ միացնել Վեզիրովի հետ: Օգնականը շփոթվում է եւ ասում. «Լավ, եկեֆ այսեղ, կփորձեն կազմակերղել ձեր հանդիպումը»:

Երբ ղայավիրակությունը մսնում է Վեզիրովի ընղունարան, օգնականն ասում է, որ ինքը ղայանանավորվել է առաջին ֆարսուղարի հետ եւ նա Սախարովին եւ ղայավիրակությանը կընղունի միայն 15 րողետով: Երբ մսնում են Վեզիրովի մոտ, նա սկսում է նույն բաներն ասել, ինչ ակադեմիկոսները: Մոտ մի ժամ հայերի եւ ղայավիրակության հասցեին թափելով նույն կեղեսաջրերը, Վեզիրովն ասում է, որ հանդիպումն ավարսված է, 15 րողեսի փոխարեն ինքն ընղունել է ուղղիղ մեկ ժամ: Սակայն նա մոռանում է ասել, որ այդ մի ժամում միայն ինքն է խոսել՝ թույլ չսալով, որեւէ մեկը մի բառ ասի:

Հոգնած եւ զրեթե ոչինչ չհասկանալով, Սախարովն եւ իր ղայավիրակությունը զինվորական ուղղաթիռով ժամանում են Ստեփանակերտ: Ողջ ֆաղափը, հարյուրավոր ղարաբաղցիներ մարզի սարբեր շրջաններից հավաֆվել էին կենսրոնական հրաղարակում՝ սեսնելու աշխարհահռչակ գիտնականին եւ ականավոր ռուս գործիչներին:

Հյուրերը հանղիղեցին մարզկոնի առաջին ֆարսուղար Հենրիխ Պողոսյանի, այնուհետեւ Ղարաբաղի ազգային-ազատարական շարժան ակիղիսների հետ: Խոսակղությունների ժամանակ մեք փորձում էինք մեր հյուրերին՝ Ա. Սախարովին, Ելենա Բոներին, Գալինա Ստարավոյսովային, միջազգային ֆրիսոնեական կազմակերղության ներկայացուցչին բացարել, թե որն է շարժան նղայակը, շարժան ակունֆների, արմասների մա-



սին էին մասնում, ստեղծված իրավիճակի, ազգային թեմանամ-  
փի ու ժողովրդի վրդովմունքի մասին դասնում եւ ներկայացնում  
ստեղծված ճգնաժամից դուրս գալու մեր ծրագիրը:

Սախարովը, Բոները եւ Սարավոյսովան իրենց ելույթնե-  
րում ֆննդատեսցին Ադրբեջանի նախկին եւ ներկա իշխանու-  
թյունների վարած ֆաղափականությունը մարզի նկատմամբ եւ  
խոստացան ամեն ինչ հաղորդել Միխայիլ Գորբաչովին:

Հանդիպումներից հետո, երբ Սախարովին առաջարկեցին  
հանգստանալ, նա խնդրեց, որ իրենց սանեն Թոփխանա «Խա-  
չին սափ», որդեսոսի սեննեն, թե ինչ են կատարել այնտեղ:  
Երբ ավստնեմաներով նրանց տարան Խաչին սափ, որ գտնվում է  
Շոք գյուղի եւ Շուշիի միջեւ, ուր բնակելի տներ կառուցելու հա-  
մար մի ֆանի բեռնատար ֆար ու ավազ էր թափված: Այնտեղ ոչ  
անտառ կար, ոչ գեղեցիկ ծառեր ու դասնական հուշարձաններ,  
ինչդեռ ներկայացրել էին թուրքերը: Մեր հյուրերը մնացին զարմա-  
ցած: Աղա որսե՞ղ են այլու՞մի գործարանն ու հասուկ գեղեցիկ  
ծառերը, հարցրեց Սախարովը: Մենք մասնացույց արեցինք մի ֆա-  
նի մոտի թփերը, ասելով՝ ահա ֆաունան: Նրանք իսկապես շատ  
զարմացած էին, իսկ Սախարովը խնդրեց խոստովանել. գուցե ի-  
րեն ուրիշ տեղ ենք բերել:

Մենք երդվեցինք, որ ինչդե՞ս կարող ենք խաբել աշխար-  
հահռչակ մարդկանց: Նրանք զարմացած, գլուխներն էին շար-  
ժում եւ ասում, թե ինչդե՞ս կարելի է իջնել այդ ասիճան, իսկ  
միջազգային ֆրիստենական կազմակերպության ներկայացու-  
ցիչն ասաց, որ այդ ադրբեջանցիները ավանսյուրիստներ են:

Երեկոյան մենք վերադարձանք Ստեփանակերտ: Հյուրերին  
տեղավորեցինք Ղարմեսաֆսկոմբինաշի հյուրանոցում, ուր ար-  
դեն սղասում էր կոմբինաշի սնորեն Ռազմիկ Աթայանը: Այս-  
տեղ էլ դայմանավորվեցինք, որ նրանք հանգստանան, այնու-  
հետեւ ժամը 10-ին հանդիպեն Ղարաբաղյան շարժման ակտի-  
վիստների հետ: Այդ ժամանակ ինձ մոտեցավ Գալինա Վասիլե-  
նան եւ խնդրեց իրեն տանել մի գյուղ եւ ցույց տալ, թե ինչդեռ են  
աղբում, ինչդեռ դիտվում էր Ղարաբաղ, ինձ խնդրել էր  
տանել Շուշի, որդեսոսի ծանոթանար հայերի վիճակին, ինչդեռ  
նաեւ տեսներ ԽՍՀՄ կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի եւ  
Թեոսյանի թուրքերի կողմից ավերված հուշարձանները: Ես, իհար-  
կե, մեքենա տրամադրեցի: Ավստվարորդը՝ Հաննեսը, որ նման դեմո-

ներում կազմ ու դաստատու օգնում էր թե Չորի Բալայանին, Սոս  
Սարգսյանին կամ Արցախ եկած մեր մյուս բարեկամներին, այդ  
անգամ Գալինա Սարավոյսովային եւ Բակուր Կարադեսյանին,  
տարավ Շուշի:

Այդ օրերին Գալինա Վասիլենայի եւ Բակուր Կարադեսյա-  
նի կատարած իսկապես հերոսություն էր: Առավելապես թուր-  
քերով բնակեցված Շուշիում նրանք նկարահանեցին հայկական  
եկեղեցին՝ ֆանդված գմբեթով, ԽՍՀՄ հայազգի հերոսների դրո-  
ված արձանները: Այդ նկարահանումները Սարավոյսովան տա-  
րել էր Մոսկվա եւ ցույց տվել հասարակությանը, որը վրդովվել էր  
ազերիների կատարած վայրագություններից: Այդ նկարահանում-  
ները ժամանակին ցույց էին տվել նաեւ հարյուրավոր արտասահ-  
մանյան գործիչների: Այդ ամենը, ցավոք, մինչեւ այսօր արժանի-  
րեն չի գնահատվել:

Այսօր մենք գլուխ ենք խոնարհում այդ խիզախ մարդկանց՝  
Սախարովի, Սարավոյսովայի, Բոների եւ մի ֆանի տասնյակ  
ազնիվ ու համարձակ մարդկանց առջեւ, որ դժվարին օրերին  
մեզ ձեռք են մեկնել եւ հնարավոր ամեն ինչ արել մեր հիմնա-  
հարցը բարձրագույն ամբիոններից հնչեցնելու համար: Ընդհան-  
րապես 1988-89թթ. , եթե չլինեին այդ մարդիկ, ովքեր զենք են  
հայթայթել եւ ուղարկել Արցախ, աղա մենք հազիվ թե կարողա-  
նայինք կազմակերպել Ղարաբաղի դաշտամարտությունը, դուրս վա-  
նդել թեմանիներին եւ ստեղծել տարածաշրջանի ամենամարտու-  
նակ բանակներից մեկը: Այսֆանն ի միջիայլոց:

Ուրեմն, երբ Անդրեյ Դմիտրևիչն, Ելենա Բոները եւ մյուսնե-  
րը հանգստանում էին, ես եւ Ռոբերտ Քոչարյանը Գալինա Վասի-  
լենային տարանք Սոլնախ, Քարին տակ եւ մի ֆանի այլ գյու-  
ղեր, ցույց տվեցինք մեր դաշտամարտական ջոկատները, Սա-  
րավոյսովան ասաց, թե լավ կլինի, որ դաշտամարտ չլինի, եւ ի-  
րենք ամեն հնարավոր բան կանեն, որդեսոսի խուսափենք զին-  
ված ընդհարումներից: «Բայց, բոլոր դեմքերում դուր այսօր դի-  
տի դաստատու լինեք իմ ֆաշտամարտության», - ասաց նա:

Երեկոյան դասվիրակության անդամները հանդիպեցին  
շարժման ակտիվիստների հետ: Ռոբերտ Քոչարյանը ներկայաց-  
րեց մեր բոլոր որոշումները՝ խնդրելով, որ Անդրեյ Դմիտրևիչն իր  
ողջ հեղինակությունը օգտագործի, որդեսոսի իրականացվեն  
դրանք: Նա առաջարկեց, որ եթե այժմ ԽՍՀՄ Գերագույն խորհուր-  
դը չի կարողանում Ղարաբաղը միացնել Հայաստանին, աղա գոնե



ժամանակավոր նախագահական ղեկավարում մտնեն Մոսկվայի կողմից: Բորիս Առուսանյանն առաջարկեց, որ մեր ճնշեսական համակարգը չենթարկվի Ադրբեջանին, այլ բոլոր ադրանները ստանան Ռուսաստանից:

Սախարովը հարցրեց, թե բոլո՞րս ենք այդպես մտածում, ուրիշ կարծիքներ չկա՞ն: Ես ասացի, որ այլ կարծիքի եմ, որ թուրքերը վաղ թե ուշ հարձակվելու են Ղարաբաղի վրա, դրա համար մենք ղեկավարվում ենք սկսե՞նք լավ նախադասարարական դասեր ազգի: Սախարովը զարմացավ եւ հարցրեց, թե մյուս տղաներն ի՞նչ են մտածում: Նրանք ասացին, որ դա Ռազմիկի կարծիքն է...

Սախարովն ասաց, որ ինքը չի հավատում, թե բանը կարող է հասնել դասերին: Նա ասաց, որ կգնա Գորբաչովի մոտ, ամեն ինչ կդասերի եւ ամեն բան կանի, որ դասերը չլինի:

- Անդրեյ Դմիտրիևիչ,- ասացի,- Ադրբեջանն անդաման կհարձակվի մեզ վրա, եւ մենք արդեն սկսել ենք դասարարական ինքնադասարանություն:

- Եթե Ռուսաստանը չօգնի ազերիներին, մենք նրանց կփնջենք մինչեւ Արաբիայի ափը,- ասացի ես:

Սախարովը նորից ասաց, որ ինքն այնպես կանի, որ դասերը չլինի: Այդ ժամանակ ելե՞նա Բոները, որի հայրը Շուշիից էր, եւ ինքը լավ գիտեր թուրքերին, ասաց, որ ազերիները 1919-20թթ. կոտորել են հայերին:

- Անդրեյ Դմիտրիևիչ, Ռազմիկը ճիշտ է ասում,- ասաց ելե՞նա Բոները,- ադրբեջանցիները անդաման կհարձակվեն հայերի վրա: Այս մարդիկ ղեկավարվում են նախադասարարական ինքնադասարանությամբ:

Նա ասաց, որ ինքը այնքան էլ չի հավատում Միխայիլ Գորբաչովին: Նրան դասարանեց Ասարավոյսովան, ասելով, որ Ադրբեջանի ակադեմիայում իրենք արդեն տեսել են, թե ինչ թեմաներ են տեսնում հայերի նկատմամբ:

Հանդիման վերջում մեզ շնորհակալություն հայտնեցին անկեղծ գրույցի, խոստովանությունների համար եւ մեզ հավաստեցին, թե ամեն ինչ կանեն, որ դասերը չլինի:

Պատվիրակության բոլոր անդամները կատարեցին իրենց խոստումը: Նրանք ամեն ինչ արեցին Ղարաբաղյան հարցը Ռուսաստանում եւ նրա սահմաններից դուրս ճշմարիտ ձեւով ներկայացնելու համար, օգնություններ կազմակերպեցին Ղարաբաղի համար: Սակայն նրանք չկարողացան կանխել դասերը:

## ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԵՏ

1989 թվականին էր: Ստեփանակերտ եկան Լ. Տեր-Պետրոսյանը, Բ. Արարկյանը եւ Վազգեն Սարգսյանը: Մեր շարժումն արդեն անցել էր ահագին ճանադարի: Պետք էր գտնել գործի ֆաղափական, ճնշեսական եւ ռազմական կազմակերպման լավագույն ձեւերը, որոնցից չընկնեինք եւ Մոսկվայի, եւ Ադրբեջանի հարձակների տակ, եւ միաժամանակ կարողանայինք բարձր դասերի ժողովրդի ոգին ու, հարկավոր դեպքում էլ, հակահարձակ սայինք հակառակ կողմի հարձակումներին: Այն ժամանակ արդեն անձամբ ինձ համար դարձ էր, որ մեր հարցը լուծվելու է զինված ինքնադասարանության միջոցով: Եթե է, ֆաղափական դարձնում էր որոնք զլխավոր ուղղություն, բայց նաեւ հասկացել էինք, որ անվերջ Գորբաչովին խնդրելով գործն առաջ չի գնում, մանավանդ, որ Բաբիկ ցույցերում սկսել էին խոսել Ղարաբաղից հայերին փնջելու մասին: Մի խոսքով՝ շատ բարդ իրավիճակ էր, երբ ասածս մարդիկ եկան Ստեփանակերտ, որոնցից ծանոթանան ինքի ղեկավարների եւ գործի կազմակերպիչների հետ:

Եթե չեն սխալվում, Լ. Տեր-Պետրոսյանը եւ մյուսները հանդիմանում էին շարժման ֆաղափական եւ գաղափարախոսական ղեկավարների հետ, իսկ Վազգեն Սարգսյանն ուղիղ եկավ ինձ մոտ՝ մարզադատ, եւ առանց որեւէ այլեւայլության, ուղղակի ասաց.

- Ռազմիկ, ես սուտ խոսել չեմ սիրում, եթե մի բան արել եմ, արի գնանք՝ ցույց տուր,- ուզում էր համոզվել, որ մենք Ղարաբաղում, իրոք ջոկասներ ունենք կազմակերպած ու մեկ էլ՝ ինչ գնենք ունենք, որոնցից հետո Երեւանից անհրաժեշտ օգնություն կազմակերպի:

Եթե ասած, իմ ուզածն էլ հենց դա էր: Սիրով համաձայնեցի լինել նրա ուղեկցողը: Երեք օր օրջեցինք այն տեղերը, ուր ջոկասներ էին կազմակերպել: Հասկանալի է, որ առաջին զինված տղաները հիմնականում անտաններում էին բազավորված: Դե, ռուսական զորքի աչքի առաջ ինձ չէին զինվելու: Մտածում էի, որ Երեւանից եկած ջախել տղա է՝ կողմի, կբողոքի մեր դժվար ճանադարից: Բայց Վազգեն Սարգսյանը ոչ մի անգամ չզրոյեց: Անբողջ օրը օրջում էինք, հոգնած-ջարդոսված գալիս ու միասին էլ հենց մարզադատի իմ սենյակում մնում: Նրան առանձնապես հու-



զեց Սղնախ գյուղում ստեղծած մեր հեռակեսը, ինքնաշեն նռնակներն ու հրազենները, որ խնամով բախրել էին գաղսնի դահեստում, ասաց. «Չենց որ զաս երեւան, ես քեզ համար անդայան կարգին կարաքիններ ու փամփուլներ կզսնեն»: Ոգելուրված էր անչափ, որ նույնիսկ դասժիչ ջոկասների ներկայությամբ էլ Ղարաբաղը չի ընկճվում, այլ, ընդհակառակը, մտածում ենք զինված դայֆար կազմակերպելու մասին:

Մի քանի օրից խուճըրդ միտի վերադառնալով երեւան: Պարզվեց, սակայն, որ ներքին գործերը խիստ ռեժիմ են սահմանել օդանավակայանում: Բոլոր ճանադարհները համարյա փակել էին: Լ. Տեր-Պետրոսյանը եւ Ռ. Քոչարյանը երկար ֆննարկում էին, թե՛ ի՞նչ էլ կարելի է զսնել: Վազգենն անստիպելի հայտարարեց.

«Դուք ինչ ուզում ե՛ք՝ արեք, ես գնում եմ Ռազմիկի մոտ՝ մարզադաս: Ռ. Քոչարյանն էլ թե. «Ճիշտ ես ասում, մենակ Ռազմիկը կարող է դասավորել ու ձեզ ինքնաթիռով երեւան ուղարկեն»: Ինձ համար, իհարկե, հաճելի էր, որ շղաները վստահում են, բայց մյուս կողմից էլ մտածում եմ՝ կկարողանա՞նք կազմակերպել այդ գործը: Ախր թե՛ Լ. Տեր-Պետրոսյանի, թե՛ մյուսների անուններն արդեն հայտնի էին ՊԱԿ-ին ու ներքին գործերի հրամանատարությանը: Բայց միտի մի բան անեինք: Նույն օրը՝ երեկոյան կողմ, հավաքվեցինք ինձ մոտ՝ որոշելու անելիքը:

Այստեղ մեր աշխատակից Բենիկ Սողոմոնյանը այդի ունեցավ: Մի փոքրիկ հյուրասիրություն կազմակերպեցինք: Վազգենն այս անգամ էլ իր անմիջականությամբ եւ սրաբացությամբ աչքի ընկավ: Խորովածն իր ձեռքով արեց ու հեսագայում միտս հիշում էր՝ Լ. Տեր-Պետրոսյանն այդ խորովածը շատ հավանեց: Ասում-խոսում էինք, բայց զլխավոր հոգսն ինձ վրա էր՝ միտի մի ձեռք հնարեինք, որ խուճըրդ անվնաս-անփորձանք հասներ երեւան: Այն ժամանակ նրանք շատ մանր ժողովրդական կազմակերպիչներն էին, եւ մեզնից ոչ ոք չէր կարող դասկերացնել, թե աղաքայում մեր ճանադարհները Լ. Տեր-Պետրոսյանի կամ Վանոյի հետ բաժանվելու են:

Չանգեցի օդանավակայան: Պարենն ազգությամբ քաջիկ էր՝ Անասուլի Սամարահիմով: Պայմանավորվեցինք, որ նա գալիս է ինձ մոտ մարզադաս: Մի ժամից Անասուլին իրոք եկավ: Շատ արագ համաձայնության եկանք: Պարենին սվեցի 10 լիտր կոնյակ եւ կեռիխուճի համար փող, որի կեսը Վազգենը սվեց: Փաստաթղթերն

ու տոմսերի արժեքն փոխանցեցինք Անասուլին: Չաջորդ օրը նա իր մեքենայով եկավ: Կան նա ինչ արել էր: Տարավ ու շղաներին ճանադարհեց երեւան: Չեւակերպել էր, որ իբր Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի դասախոսներ են: Ի դեպ, ասեմ նաեւ, որ Անասուլին հեսագայում էլ մեզ շատ հարցերում օգնեց: Իհարկե դայմանավորվածության համաձայն, բայց այն օրերին մենք դասրաս էինք շատ բան զոհաբերել, միայն թե կարողանայինք Ստեփանակերտ հասցնել անհրաժեշտ կամ մեր վստահելի մարդկանց համար աղաքովել անվնաս շեղաբարձեր թե՛ Ղարաբաղի ներսում, թե՛ հասկաղես երեւան գնալ-գալու հարցերում: Չետ, երբ Սաֆոնովի կարգադրությամբ ձերբակալվեցի, իմ ճակատագրով ամենից շատ հետաքրքիր էր Վազգեն Սարգսյանը:

1990թ. մայիսին ընտրվեցի Չայասանի Գերագույն խորհրդի դասգամավոր: Պե՛տք եղավ աշխատել ԳԽ որեւէ մեծական հանձնաժողովում: Վազգեն Սարգսյանն առաջարկեց, որ ընդգրկվենք դաստանության, ներքին գործերի եւ անվնասության հարցերի մեծական հանձնաժողովում: Թե՛ն խորհրդարանական, բայց մեր հանձնաժողովն իրականում ձեռնամուխ եղավ հայոց ազգային բանակի եւ Արցախի ինքնադաստանական ուժերի կազմավորման բարդ ու դժվարին գործին: Նախաձեռնողն ու ամենաեռանդուն գործիչը, իհարկե, Վազգեն Սարգսյանն էր: Չանձնաժողովի անդամներն էինք՝ Վահան Շիրխանյան, Յուրի Չարությունյան, Սմբատ Այվազյան, Սլավիկ Առուսանյան, Լեւոն Ստեփանյան, Ռազմիկ Պետրոսյան: Հիշում եմ այսօրվա դեպք, առաջին նստաժամից հետո, երբ դասրասվում էի Ստեփանակերտ վերադառնալ, Վազգեն Սարգսյանն իր վարորդի՝ Մոսոյի միջոցով 16 մարտական կարաքին սվեց, որդեսգի շեղափոխեմ: Այն օրերի հաշվով դա մեծ զինադասար էր մեր ջոկասների համար: Թե՛ ի՞նչ ոգելուրությամբ ու դակաս կարելու չէ, ի՞նչ հնարներով կարողացա շեղ հասցնել թանկագին բեռը, կարելի է երկար դասնել, բայց երեւի այսօր դեռեւս դրա ժամանակը չէ, դասերազմը չի ավարտվել, եւ շատ բան, իրոք, դե՛տք է գաղսնի դակի: Իհարկե, ես նկատում եմ շատ ռազմական գաղսնիք, այլ ոչ թե այն, ինչ այսօր ոմանք են սիրում անել՝ ցանկացած հարց հայտարարելով դե՛տական գաղսնիք:

ՀՀ ԳԽ-ում աշխատելու առաջին ամիսներին համոզվեցի, որ Վազգեն Սարգսյանն օժտված է կազմակերպչական մեծ ընդունակություններով, նրան սիրում եւ հարգում էին բոլորը: Ինձ հասկաղես դուր էր գալիս Վազգենի գործնականությունը: Եթե որեւէ



հարց իր ուժերից վեր էր, երբեք չէր շոշափում, անում էր այն, ինչ հնարավոր էր: Հիմա, շուրջ 10 տարի անց, փորձելով վեր լուծել այն օրերի իրավիճակը, հասկանում եմ, որ նա առաջնորդվում էր ոչ թե գաղափարներով (թեև հարկավոր դեղմեղում Վազգենը նաեւ փայլուն գաղափարախոս էր դառնում), այլ կոնկրետ ֆայլեր էր անում: Երկին դա այնքան մեծ էր: Ախր Հայաստանն էլ, թեև անկախության ուղին բռնած, դեռևս խորհրդային բանակի հսկողության տակ էր: Իսկ զորքը, հասկանալի է, կասարում էր Գորբաչովի հրամանը: Ահա թե ինչու Հայաստանի սահմաններում գրեթե նույն վիճակն էր, ինչ՝ Ղարաբաղում: Ադրբեջանից անընդհատ հարձակվում էին Նոյեմբերյանի ուղղությամբ, Իջևանի մոտ: Խիստ վստահավոր էր Նախիջևանի հետ սահմանում ստեղծված դրությունը: Պատահական չէր, որ առաջին լուրջ ընդհարումները հենց այնտեղ եղան: Դա Վազգեն Սարգսյանի հարազատ օրջանն էր: Իր մանկության եւ երիտասարդության ընկերներից էլ նա կազմավորեց իմֆնադատականական առաջին ջոկատները, որոնք Երասխի մոտ լուրջ հակահարված հասցրին հակառակորդին:

Երբ սկսվեց իսկական դաշերազմը, ես իմ ջոկատով մտա կանոնավոր բանակի կազմի մեջ: Ինչ-որ բան այդ տարիներին կարծես թե փոխվեց: Աստիճակ եկան նոր մարդիկ, որ ամենօրյա կառույցին ՀՀ դատականության նախարար Վազգեն Սարգսյանի հետ: Դաժան, բարդ ժամանակներ էին: Այնքան, որ նույնիսկ չէին հասցնում լինել Երևանում, մասնակցել ԳԽ աշխատանքներին: Ես մարտական առաջադրանքներ էի կատարում ռազմաճակատի տարբեր ուղղություններում: Շատրում ֆիչ էի լինում: Այդ տարիներին, իհարկե, Վազգեն Սարգսյանը հաճախ էր Ղարաբաղ գալիս, բայց մենք ֆիչ էինք հանդիպում:

1994 թվականին հրադադար հաստատվեց: Մեր դատականավորական խումբն արդեն լիարժեք կարող էր մասնակցել ԳԽ նստաօրջաններին: Արդեն հաճախ էինք լինում Երևանում: Միտ էլ որեւէ կերպ Վազգեն Սարգսյանը ժամանակ էր գտնում հանդիպելու մեզ հետ: Երբեմն նույնիսկ թեթեւ խնջույքներ էր կազմակերպում: Այդպիսի դաշերին նա կրկին ինձ հիտեցնում էր Եարժման սկզբի Վազգենին վարակիչ ծիծաղով, Եարժում ու հետաքրքրատեր: Չէր մոռանում ոչ մի մանրամասնություն, մանավանդ՝ դատերազմի տարիներից: Ուտադիր էր մեր դատականավորական խմբի անդամների հանդեմ: Հայաստանում Վազգեն Սարգսյանն այդ տարիներին արդեն մեծ հեղինակություն ուներ:

Թվականը կոնկրետ չեմ հիտում, բայց երեւի 1995-ն էր, որ Կատանում մարգական տոն կազմակերպվեց, «Ղարաբաղ» եւ «Արարատ» ֆուտբոլային թիմերի վետերաններս էլ խաղացին: Վազգեն Սարգսյանին դուր էր եկել մեր խաղը: Իհարկե, չիաղթեցինք, բայց չդատրվեցինք էլ, խաղն ավատրվեց 1:1 հաշվով: Ներկա էր նաեւ Սուրեն Արահանյանը, որ, եթե չեմ սխալվում, Սյունիքի մարզդեան էր: Հանդիպման ավատրին Վազգեն Սարգսյանը մեզ հրավիրեց իր մոտ, գովեց ու խոտտացավ «Ղարաբաղ» թիմին մարգահագուտտ նվիրել: Մի ֆանի օրից գործով երեւանում էի: Չանգեցի, դայմանավորվեցինք հանդիպման մասին: Երբ գնացի, Վազգեն Սարգսյանն իր մոտ հրավիրեց նաեւ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Արմեն Սարգսյանին եւ դատրվիրեց, որ մարգահագուտտ հատկացնի մեր թիմին: Հիտում եմ, ատտաց, գումարը ես եմ տալու: Ստացանք այդ նվիրը, եւ առ այտօր, կարծեմ, վետերանների մեր թիմը նույն մարգահագուտտով է դատտ դուրս գալիս:

1995թ. մայիսին ավատրվում էին մեր դատտանավորական լիազորությունները: Հայատտանը դատտատտվում էր նոր խորհրդատտանական ընտրությունների: Պիտի հանտրավելի դրվեր նաեւ Սահմանադրությունը: Բավական բարդ իրավիճակ էր: Այն ժամանակ արդեն ընդդիմությունը բացահայտ Լեւոն Տեր-Պետրոսյանի դեմ էր: Մեր՝ Ղարաբաղի դատտանավորներիս դիրտրոտումը խորհրդատտանում երեւի վճռորոտ էր: Մեմք, սակայն, աշխատում էինք հեռու մնալ Հայատտանի ներքին հակատտություններից եւ առաջնորդվում էինք կայունությունը սատտրելու սկզբունքով: Պատտերազմից նոր էինք դուրս եկել, մտածում էինք, որ ինչքան Հայատտանում վիճակը հանգիտտ լինի, այնքան Ղարաբաղի ֆայտայված տնտտությանը Եատտ կօգնի: Բայց ընդդիմությունն ուտում էր, որ Սահմանադրությունը չընդունվի, ատտում էին՝ դա մի մարդու համար է գրված եւ ամտրադուն է Լեւոնի իտտանությունը: Ահա այդ լարված օրերին գնացինք նտտաօրջանի:

Եթե ճիտտն ատտեմ, որոտ դեղմեղում մեմք տտան վիճակի մեջ էինք ընկնում: Հատկատդեմ ֆվեարկությունների ժամանակ: Որոտ դատտանավորներ մեզ սխալ էին հատկանում՝ մտածելով, թե Լեւոնի օգտին եմք գործում: Բայց դա այդդետ չէր: Մի բնորոտ փատտ հիտեմ. նտտաօրջաններից մեկի ժամանակ Արկադի Մանուչարովը ելույթ ունեցավ եւ մեղադրեց Տեր-Պետրոսյանին, որ Ղարաբաղի հարցում նա ճիտտ չէ: Դա բոլորիս կարծիքն էր, որ դատրգատտե Արկադի Մանվելովիչն ատտաց: Ընդմիջմանը Լեւոն Տեր-Պետրոսյանը



մոտեցավ մեր խմբին եւ անստանալի դաժան ծայրով հայտարարեց.

- Արկաղի Մանվելովիչ, այսօրվանից ես Ձեզ համարում եմ իմ համար մեկ թեմանին:

Հայաստանի նախագահից նման բան չէին ստասուն, այդո՞ղես կողմիս խոսել ղոսգամավորների՞ հետ: Բոլորս էլ վաս զգացին, բայց հասկաղես ծանր էր Մանուչարովի վիճակը՝ շասերն էին լսել Տեր-Պետրոսյանի խոսերը: Առանց այդ էլ Արկաղի Մանվելովիչին Սեփանակերսուն խեթ աչոով էին նայում, աշխատանք չէին տալիս եւ այլն: Բայց Մանուչարովն իրեն չկորցրեց, ասաց.

- Ոչինչ, թող ես Ձեր անձնական թեմանին լինեմ, բայց Դուք հայ ժողովրդի թեմանին եմ:

Սա վերհիշում եմ, որոնցիկ հասկանալի լինի, որ ամեն ինչ այնքան էլ հարթ չէր, բայց նույն Մանուչարովը երբեք այս անձնական հակակրանքը չդարձրեց ֆաղափական շահարկման առարկա: Մենք, օրինակ, կարող էինք հարց բարձրացնել, թե ինչո՞ւ նոր ընտրական օրենքով ՀՀ ԱԺ-ում Դարաբաղից ղոսգամավոր չղիտի ընտրվի: Դա, սակայն, չգիտեմ ինչղե՞ս կհասկացվեր աշխարհում: Ահա այդղիտի հարցերի շուրջ գերաղասում էինք ոչ մեկի կողմն էլ չանցնել, այլ փետրկել այնղիտի որոշումների օգտին, որ ձեռնտու եմ Դարաբաղին, աղահովում եմ մեր ներքին կայունղթյունը:

Ահա այդ նստաշրջանից հետո էր, որ մեզ ասացին, որ Վազգեն Սարգսյանն ուղում է Դարաբաղի ղոսգամավորների հետ հանղիղել: Համարյա ամբողջ խմբով էինք՝ Էղուարղ Դուկասյան, Համլես Գրիգորյան, Արկաղի Մանուչարով, Ռղես Աղաջանյան, Գեորղի Պետրոսյան, Գրիշա Բաղյան, Վլաղիմիր Աղաջանյան, Վահրան Աթանեսյան, Սլավիկ Առուշանյան: Ռրքան հիշում եմ Գեորղի Պետրոսյանը մեզ չմիացավ: Մյուսներս գնացինք: Ներկա էր նաեւ Ռազմիկ Դանիելյանը: Հետո եկավ Սերժ Սարգսյանը: Անկեղծ մթնղորս էր: Ում սրտում ինչ կար՝ ազատ ասում էինք: Այդ երեկո նույնիկ տղաներից մեկը կատակով Վազգենին հարցրեց, թե եկղղ տարի Աղղանի կորղյոկ ուտելո՞ւ եմք: Այն ժամանակ էլ խոսում էին, թե հողերը շուտով ես եմ տալու, Վազգեն Սարգսյանը ծղծաղեց, ասաց հանղիտ եղեք, կորղյոկ միտ էլ ուտելու եմ: Եվ հատուկ շեշտեց Աղղանի կորղյոկը: Հասկացանք, որ ինքն էլ շատ հարցերում Տեր-Պետրոսյանի նման չի մտածում: Այդ երեկո էլ



Աղղրեջանի չեմաղիոն «Դարաբաղ» ֆուտբղղային թիմը (1977թ.)



Ռ-ազմիկ և Չարմիկ Պետրոսյանները



Ռ-ազմիկ Պետրոսյանի որղին՝ Գաղիկը





Երևանի «Արարատ» և «Ղարաբաղ» ֆուտբոլային թիմերը Ստեփանակերտում



Հրաչյա Ռոյսկյանի դստեր և Վազգեն Օվյանի հետ

Վազգենը կես լուրջ, կես կասակ ասաց. «Տղեր, սա երեւի վերջին նստաօրջանն էր ձեզ համար, ինչ ուզում եմ ասացեմ»: Կասակում էր, իհարկե, մենք էլ մեր հերթին ամեն մեկս մի բան ասացինք, բայց հետո դարզվեց, որ, իրոք, բոլոր հարցերով էլ հետաքրքրվել է, հնարավոր մի լուծում գտել:

Ահա այդքան անմիջական ու անկեղծ մարդ էր Վազգեն Սարգսյանը: Երբ նրան շնորհեցին «Արցախի հերոս» կոչումը, ես ու Ռուբեն Աղաջանյանը մոտեցանք ու շնորհավորեցինք, ասաց. «Դուք, տղերք, ավելի բարձր կոչման եմ արժանի, քան «Արիության» մեդալը»:

Սիրում էր ճանաչությունն ասել: Դրա համար էլ մտավ ֆաղափական կյանք, որդեսպի իր կուսակցության եւ Կարեն Դեմիրճյանի հեղինակության ուժով Հայաստանում հաստատվելու օրենքի իշխանություն: Վազգեն Սարգսյանի համար Ղարաբաղը հայրենիքի անբաժանելի մի մասն էր: Ցավում էր Ղարաբաղի համար: Նրա միջամտության շնորհիվ 1998թ. ամռանը կանխվեց մեր ներքին լարվածությունը: Հայաստանի վարչապետ նշանակվելուց հետո Վազգեն Սարգսյանը սասարեց ԼՂՀ նախագահ Արկաղի Ղուկասյանին, դաժնաբանեց Ղարաբաղում բարեփոխումների ֆաղափականությունը:

Ես հուսով եմ, որ հոկտեմբերի 27-ի ողբերգության գաղտնիքը կբացահայտվի, մեղավորները կդատվեն օրենքով, եւ Հայաստանում ու Արցախում վերջնականապես կհաղթանակի օրենքը, կհաստատվի կարգուկանոնը:

Իսկ Արցախի եւ Հայաստանի վերջնական վերամիավորմանը մենք ամենամեծ հարգանքները կմատուցենք Վազգեն Սարգսյանի հիշատակին:



## ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐՈՎԱԲԱԴՂՈՒՄ

### ՇՐՋԱՓՈԱԿՎԱԾ ՀԱՅԵՐԻՆ

(1989թ. դեկտեմբեր)

1989թ. վերջերին ծննդավայրիս՝ Կիրովաբադի հայերը հայ-սնվել էին ահավոր վիճակի մեջ: Վայրենացած թուրք խուժանը, հրահրված Սոււմգայիթի, Բաֆվի ու այլ վայրերի հայերի ջարդերը կազմակերպած ու անդաժիժ մնացած ազերի ազգայնամուլների կողմից, սկսել էին վայրագություններ անել նաև Կիրովաբադի հայերի նկատմամբ: Կիրովաբադի հայերը, որոնց թիվն այն ժամանակ հասնում էր 60-70 000 հոգու, Երջափակման մեջ էին: Հայկական թաղամասը բարիկաղներով ամրացված էր բոլոր կողմերից: Ամենուրեք հայերը դռներ էին դրել եւ զինված զոհաները թույլ չէին տալիս թուրքերին ներխուժելու հայկական թաղամաս:

Հեռախոսագանգ եղավ Կիրովաբադից եւ մենք սեղեկացանք, որ հայ բնակչությունը գրկված է հացից: Թուրքերը արգելել էին հացի մատակարարումը հայերին:

Ես անմիջապես գնացի ֆաղխուրհրդի նախագահի սեղակալ Յուրի Ավագիմյանի մոտ: Նա հավաքեց առեւտրի բաժնի աշխատակիցներին եւ ես դասնեցի Կիրովաբադի հայերի ծանր վիճակի մասին: Բաժնի ղեկավար Մանուկ Լալայանը, սեղակալը՝ Ալբերտը, խոստացան ամեն բան տալ. ալյուր, դահաժոններ եւ այլն, եւ ամեն ինչ անվճար:

Ես գնացի մարզգործկոմի նախագահ Ս. Բաբայանի մոտ: Նա եւս հավանություն տվեց Կիրովաբադի հայերին անհատադրարենային օգնություն հասցնելու իմ ծրագրին: Ես ասացի, որ լավ գիտեմ Շահումյանով Կիրովաբադ սանող ճանապարհը եւ կարող եմ բեռներն անցկացնել այդտեղով: Նա խորհուրդ տվեց նախադես սուրբել ճանապարհը եւ վստահի սակ չդնել սանելի մթերքները: Նույն գիշեր Եսաբի դեսը, այսինքն ես, իմ սեղակալ Ռոլեն Աղաջանյանը եւ Եսաբի անդամ, բնության դահաժության կոմիտեի նախագահ Գարիկ Գրիգորյանը «ՈՒԱԶ» մեքենայով մեկնեցին Շահումյան: Բոլորս հագել էին զինվորական համազգեստներ: Երբ հասանք Շահումյան, Երջխուրհրդի նախագահ Վոլոդյա Աղաջանյանը զանգահարեց Մանաչիդի գյուղխուրհրդի նախագահին, որ օգնություն ցույց տա մեզ: Մեկնեցին

Մանաչիդ: Այնտեղ մեզ միացավ գյուղխուրհրդի նախագահը, որը հայտնեց Թողան գյուղի մոտ թուրքերի դահակակեսի գոյության մասին: Թողանը հեռու էր եւ նրա բնակիչները դահակակես էին դրել Շահումյան-Գեսալեն ճանապարհի վրա:

Գնացինք: Երբ հասանք այդ դահակակեսին, տեսանք երկու ադրբեջանցիներ են կանգնած: Նրանք հրացանները բռնեցին մեր կողմը եւ կարգադրեցին կանգնել: Ես դուռը բաց արեցի եւ թուրքերին հայիոյելով նրանց մոտ կանչեցի: Մեկը եկավ մոտս, մյուսը մնաց հեռվում: Ասացի, որ Բաֆվից եմ, դասախազ եմ, գնում եմ Գեսալեն: Հրամայեցի կանչել իր ընկերոջը: Նա ինձ ադրբեջանցու տեղ դրեց եւ ձայն տվեց ընկերոջը, թե արի, մուսուլման է: Նրանք երկուսն էլ հրացանները իջեցրած եկան կանգնեցին մեր մեքենայի մոտ: Գարիկը ետեւի դռնից դուրս եկավ ասրճանակը ձեռքին, ես էլ դուրս եկա եւ արագորեն նրանցից խլեցինք հրացանները, նրանք սկսեցին խնդրել. « Ընկեր դասախազ, ե՛ս տուր մեր հրացանները»: Ես սկսեցի բղավել նրանց վրա, թե ի՞նչ գործ ունեն իրենց գյուղից այդքան հեռու դահակակես են դրել: Գեսալենում սղանություն է եղել, գնում ենք ֆնտելու այդ գործը: Հրացանները կտանենք եւ հետ կուղարկենք ձեր գյուղը, իսկ եթե դուր նորից կլինեն այս տեղում, երկուսիդ էլ կծեբակալենք:

Երբ հասանք Գեսալեն, տեսանք ամենուր հայերը դահակակեսներ են դրել եւ Եսա զինված մարդիկ հեքթադահում էին այնտեղ: Նրանք մեզ հյուրասիրեցին եւ այդ ընթացքում մենք դասնեցինք Կիրովաբադ օգնություն հասցնելու մեր ծրագրերի մասին: Գեսալենցիները զգուշացրեցին մեզ, որ ճանապարհների վրա թուրք գյուղացիները միլիցիոներների հետ դահակակեսներ են դրել, բայց կարելի է Թագալեն հասնել խաղողի այգիների միջով: Գնացինք, սուրբեցինք դահակակեսները, իմացանք թե ինչդես կարելի է անվստահ անցնել դեղի Կիրովաբադ, հետ վերադարձանք Մանաչիդ, որտեղ մեզ սղասում էին ագրոդոմի նախագահ Շահեն Մեղրյանը եւ Վոլոդյա Աղաջանյանը: Պե՛տ է ասեմ, որ Շ. Մեղրյանը ակտիվորեն մասնակցում էր զենք ու զինամթերք ձեռք բերելու աշխատանքին: Գնացինք նրա տուն: Գալի սեղանի շուրջ նրանք խոստացան ամեն ձեռով օժանդակել մեզ, եթե դես լինի, մարդիկ էլ կտան: Նույն օրը վերադարձանք Ստեփանակես:

Երեկոյան սկսեցին մթերքները բարձել երկու «Կամազ» մեքենաների մեջ: Ես գնացի ֆաղաֆաղիական դահաժության Եսաբի դես Գեորգի Պեքոսյանի մոտ եւ խնդրեցի զինվորական հա-



մազզեսներ: Վարորդների համար նա սվեց զինվորների, իսկ ինձ համար՝ գնդադեսի համազզես: Մյուս օրն առավոտյան մեկնեցին Կիրովաբադ:

Մինչև Շահումյան ամեն ինչ լավ էր: Խանլարի մոտ միլիցիայի դահակակետ կար, որտեղ հերթադահում էին թե՛ ռուսներ, թե՛ ազերիներ: Տեսնելով, որ զինվորական համազզեսով ենք, մեզ բաց թողեցին: Կիրովաբադի մոտ մեզ կանգնեցրին: Մոտեցավ մի ռուս սերժանտ եւ ուղեգիր դահանջեց: Ասուգելուց հետո ուղեգիրը, նա կարգադրեց բաց անել ճանադարհի արգելածողը: Դրանից հետո հաջողությամբ անցանք նաեւ մյուս դահակակետերով, մտանք Կիրովաբադ եւ կանգ առանք հայկական եկեղեցու մոտ:

Կիրովաբադի հայերը հասուկ կոմիտե էին ստեղծել, որը զբաղվում էր հայերի ինքնադաշնակության կազմակերպման, սնունդ հայթայթելու եւ բաժանելու գործերով: Այդ կոմիտեի անդամ էր նաեւ եկեղեցու ֆահանա սեռ Սահակը:

Հայերը օրջադասեցին մեր մեքենան: Սկզբում կարծում էին, թե Հայաստանից ենք գալիս, բայց երբ իմացան, որ այդ օգնությունն ուղարկել են օրջափակված Ղարաբաղից, շատ հուզվեցին, սկսեցին լաց լինել: Մինչ կղատարեին մեքենաները, մի-մի կողմից մեզ մի բան եղավ: Մենք ասացինք, որ Ղարաբաղը դաշնաւս է օգնել նրանց թե՛ մթերներով, թե՛ զենքով:

Կիրովաբադում էր բնակվում հորեղբորս աղջիկը՝ Անալյա Պետրոսյանը: Նա 59 տարեկան էր, ամուսնացած չէր եւ աղորում էր ֆրոջ երեխաների հետ: Ես նրան առաջարկեցի ինձ հետ գալ Ղարաբադ, բայց նա հրաժարվեց: Հրեա եւ թուրք ընկերուհիներ ուներ, հույսը դրել էր նրանց դաշնակցության վրա: Այն ժամանակ կային մարդիկ, որոնք միանջորեւն հավատում էին, թե դեռ ամեն ինչ կորած չէ, որ դաշնակցութեւնը կվերականգնի կարգ ու կանոնը: Դրանցից էր նաեւ հորեղբորս աղջիկը, որը չեկավ ինձ հետ Ստեփանակետ:

Վերադարձանք Գեւազեանի վրայով: Գեւազեանցիները, իսկ հետո նաեւ Շահումյանցիները շատ ուրախացել էին: Այդ մեքենաներով մենք Ստեփանակետ բերեցինք 10 երեխաների՝ 10-14 տարեկան եւ 26-27 ղարաբաղցի կանանց, եւ տղամարդկանց, որոնք տարբեր գործերով գնացել էին Կիրովաբադ:

Շատ չանցած, մենք կրկին մեկնեցինք Կիրովաբադ: Դարձյալ երկու մեծ բռնասար մեքենաներով: Տարել էինք այլուր, դահաժոներ եւ հազարից ավելի թխած հաց:

Մեր երկրորդ այցելության ժամանակ տեսանք, որ դրությունն ավելի է ծանրացել: Հարձակումները հայերի վրա հաճախակի էին դարձել: Վերադարձին մեզ հետ բերեցինք 42 հոգի՝ մեծ մասամբ երեխաներ եւ տարիքավոր մարդիկ: Պահակակետում խստացրել էին ստուգումները, հերթադահողների մեջ երեւում էին նաեւ սղաներ:

Իմ գնալն արդեն վստահավոր էր, ուստի երրորդ եւ չորրորդ անգամ Կիրովաբադ մեկնեցին իսկական կադրային սղաներ՝ փոխգնդապետ Կոլյա Բաբայանը եւ ֆաղաֆաղական դաշնակցության դեսի սեղակալը Շահումյանից: Մտանք հետ Ստեփանակետ եկավ Կիրովաբադի ֆահանա սեռ Սահակը, որին այնուհետեւ ուղարկեցինք Էջմիածին: Նա իր հետ բերել էր տեսաժառանգներ, որտեղ նկարահանված էին ազերիների վայրագությունները Կիրովաբադում:

Չորրորդ անգամ Կիրովաբադ մեկնեց Գրիգոր Աֆանասյանը, որը բերեց Կիրովաբադում աղորող իր ծնողներին, ինչդեպ եւ այլ մարդկանց:

Դեկտեմբերի կեսերին երեւանից եւ Ռուսաստանի ֆաղաֆաներից ինձ մոտ եկան 7 երիտասարդներ: Նրանց մասին լսել էի, գիտեի որ կիրովաբադցիներ են: Խնդրեցին իրենց ուղարկել Կիրովաբադ: Իմ սված մեքենայով նրանք ծամփա ընկան եւ բարեհաջող տեղ հասան Թազազեանի վրայով: Շուրջ երկու շաբաթ անց այդ տղաները վերադարձան Ստեփանակետ:

Նրանք եկան ինձ մոտ՝ մարզադաշտ: Չեռներին դայուսակներ կային: Նրանք ուղղակի ասացին, որ իրենք կռվել չէին կարող, բայց կարող էին գողություն անել եւ այդ նպատակով էլ մեկնել էին Կիրովաբադ: Նրանք թալանել էին հայկական թաղամասում աղորող թուրքերին: Գիտեցիք մտնում էին նրանց սները, կառկառում բոլորին, վերցնում թանկարժեք իրերը եւ դրանք: Մի ֆանի հոգու սղանել էին: Այնքան մեծ էր վախը նրանցից, որ ադրբեջանցիները հասուկ զինվորներ էին դահում իրենց սներում:

Ստեփանակետում նրանք շատ դրամ սվեցին Կիրովաբադից գաղթածներին: Ասում էին, որ վճռել են Կիրովաբադի ֆոնդ ստեղծել փախսականներին օժանդակելու համար: Հետագայում նրանք նյութական օգնություն ցույց սվեցին փախսականներին:

Ինչ վերաբերում է հորեղբորս աղջկան, առաջ նրան այլեւս չեստա: Իմացանք, որ նրան վերջին անգամ տեսել էին Կիրովաբադի բանտում: Մեր որոնումներն արդյունք չսվեցին:



## ՍՈՒՄՂԱՅԻԹԻՑ ՅԵՏՈ

1988թ. փետրվարի 27-ից 29-ը սեղի ունեցավ Սոււմգայիթի եղեռնագործությունը: Հարկավոր էր օգնություն ցույց տալ փախսականներին: Սոււմգայիթում հաստատված հայերը դարաբաղցիներ էին, նրանց հարազատները աղորում էին Ղարաբաղում եւ միանգամայն հասկանալի էր հայրենիք վերադառնալու նրանց ձգտումը: Բայց Ադրբեջանը թույլ չէր տալիս, որ սոււմգայիթցիները գան Ղարաբաղ: Նրանց սանում էին Հայաստան, Ռուսաստան, Աույնիսկ Թուրքմենստան, բայց ոչ Ղարաբաղ: Նոյասակը դարձ էր. Ղարաբաղը դեռ էր աստիճանաբար հայաթափվել, հայերի սեղը գրավելու էին Ադրբեջանի սարքեր շրջաններից, ինչդեռ նաեւ Հայաստանից գաղթած ազերիները, այնպես որ Սոււմգայիթի հայերը չդեռ էր աղորեն Ղարաբաղում: Մեսխեթցի թուրքերին բերում էին Ստեփանակերտի տակ՝ Խոջալլու, Ղալաբալու եւ Շուշիի շրջանի գյուղերը, իսկ սոււմգայիթցի հայերը չդեռ էր սեղ ունենալին իրենց ծննդավայրում:

Այդ օրերին Ստեփանակերտ էր եկել «Իզվեստիա» թերթի թղթակիցը՝ Պավել Գուսեւսովը, որին հասուկ մեքենայով ուղարկեցին Սոււմգայիթ եւ Բաբու: Նա սեղում ծանոթացավ կացութեանը եւ «Իզվեստիայում» տղագրեց հողված այն մասին, որ սոււմգայիթցիներին թույլ չեն տալիս մեկնել իրենց հայրենիք՝ Ղարաբաղ: Ադրբեջանական իշխանությունները ստիղծված եղան արգելի չհանդիսանալ սոււմգայիթցիների Ղարաբաղ մեկնելուն:

Սոււմգայիթի դեղերից հետո «Կռունկում», իսկ հետո «Ազգային խորհրդում» ստեղծեցին հանձնաժողով, որը դեռ էր գրադվել փախսականների սեղավորման, նրանց օգնություն ցույց տալու հարցերով: Հանձնաժողովի նախագահ ընտրեցին ինձ: Արդեն Ղարաբաղ էին հասել Սոււմգայիթի փախսականների առաջին խմբերը: Մենք սկսեցինք նրանից, որ կազմեցինք Ստեփանակերտ հասած փախսականների ցուցակները: Միաժամանակ թողնումների միջոցով ցուցակագրեցինք բոլոր ազատված բնակարանները: Փախսականների նկատմամբ բացառիկ հոգատարություն ցուցաբերելով՝ մարդիկ հայտնում էին իրենց ունեցած հնարավորությունների մասին եւ նրանց սանում իրենց սները: Ատխասում էին փախսականներին սեղավորել ըստ իրենց ծննդավայրերի: Եթե նրանք մարտակերտ էին, ուղարկում էինք այնտեղ, հաղորդեցինք, մարտունեցիներին եւ մյուսներին ուղարկում էինք

իրենց հարազատների մոտ:

Չնայած ադրբեջանցիների հարուցած արգելներին, այնուամենայնիվ, կարողացանք Ղարաբաղում ընդունել 12 հազար սոււմգայիթցիների: 1988թ. մարտ ամսից մինչեւ հունիս կարողացանք Սոււմգայիթ ուղարկել 570 բեռնասար մեքենաներ, որոնք սեղավորվում էին փախսականներին իրենց սնային առարկաներով եւ ունեցվածքով: Անհրաժեշտ է նեղ, որ փախսականների Ղարաբաղ փոխադրման գործում մեծ աշխատանք կատարեց Ստեփանակերտի ավտոբազայի դիրեկտոր Մախսիմ Միրզոյանը: Դրամական միջոցները մեզ տրամադրում էր սիրելի դերասան Սոս Սարգսյանի ստեղծած ֆոնդը: Երեւանից զգալի օգնություն էր գալիս: Գրող Ջորի Բալայանի եւ Սոս Սարգսյանի նախաձեռնությամբ Ստեփանակերտ հասավ մի բեռնասար մեքենա, որը լեցուն էր ներհնակներով ու ծածկոցներով: Մեր կազմած ցուցակներով Սոս Սարգսյանի ֆոնդից նյութական օգնություն էր հասկացվում սոււմգայիթցիներին:

Սկսեցինք կիրառել բնակարանային փոխանակման յուրօրինակ մի եղանակ՝ Ղափանից, Ջերմուկից, Գորիսից, Սիսիանից ադրբեջանցիներին ուղարկում էինք Սոււմգայիթ: Նրանց ազատված բնակարանների հասցեները տալիս էինք Հայաստանից տարիներ առաջ Սոււմգայիթ գնացած եւ այժմ այնտեղից հեռացող հայերին: Փոխանակումը, իհարկե, համարժեք չէր, որովհետեւ սոււմգայիթցիները, իսկ հեռագայում նաեւ բախվեցի հայերը, թողնում էին բարեկարգ, մեծ մասամբ նորոգված, երբեմն էլ կահավորված հրաժարի բնակարաններ եւ փոխաբերելով սանում ադրբեջանցիների կեղտոտ, անհարմար եւ անբարեկարգ սները: Բայց կարելու էր այն էր, որ թուրքերը հեռանում էին եւ նրանց բնակարանները տրվում էին երբեմն անեն բան կորցած եւ հուսահատության եզրին հասած սոււմգայիթցի հայերին: Ստեփանակերտի Արմենավան թաղամասում հող հասկացվեց եւ մեծ թափով սկսեցինք նրանց համար սներ կառուցվել:

Մեքենաները Ստեփանակերտից մեկնում էին առավոտ օր: Երեկոյան հասնում էին Սոււմգայիթ: Գիշերը բարձում էին իրերը, իսկ առավոտյան վաղ վերադառնում: Տեղ էին հասնում երեկոյան: Այն բոլոր մարդիկ, որոնք Սոււմգայիթից Ղարաբաղ եկան իրենց իրերով եւ անմիջապես սեղավորվեցին, այդպես էլ ընդմիջ մնացին Ղարաբաղում: Իսկ նրանք, որ եկել էին առանց իրերի, մեծ մասամբ հեռացան այլ վայրեր:



Սունգայիթցիներն աշխատանքի լծվեցին եւ աստիճանաբար հարմարվեցին նոր դայմաններին: Երբ Ադրբեջանը հարձակվեց Ղարաբաղի վրա եւ սկսվեց մեր ժողովրդի ազատագրական դասերազմը, փախստական սունգայիթցիները կազմակերպեցին մի մարտական ջոկատ, որին սվեցին «Վրեժ» անունը: Նրանց մեջ եռում էր իրենց սանջամահ արված հայրենակիցների վրեժը լուծելու արդար ցասումը: Սունգայիթցիների հրամանատարը Յուրան էր, որը հերոսաբար զոհվեց Առաջածորի դաշտամարտության ժամանակ: Շուրջ 30 հոգի էին եւ սկզբում կռվել չզիսեին, բայց հետագայում լավ մարտիկներ դարձան եւ ամեն ինչ անում էին իրենց համաֆաղաֆացիների վրեժը լուծելու համար:

### ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ՀԵՏ

Ամենայն հայոց կաթողիկոսն Արցախ ժամանեց 1959 թվականին: Մարզի ղեկավարները, որ բոլորը աթեիստներ էին եւ իրենց դաշտումներում նշանակված էին Ադրբեջանի իշխանությունների կողմից, ոչ միայն չհամարձակվեցին դիմավորել Վազգեն Ա-ին, այլեւ նույնիսկ ընդունելության չարժանացրին Վեհափառին:

Միայն ժողովուրդն էր դուրս եկել դիմավորելու Վեհափառ հայրադարին, միաժամանակ նրանից առնելով Հայաստանի կարոտը: Երեխաները հետաքրքրությամբ այս ու այն կողմ էին ոտսվում նրա շուրջ, ոչինչ չհասկանալով Վեհափառն ու բարի այն մարդու հայտնության խորհրդից: Իսկ այն մտավորականները, ովքեր հասկանում էին, որ կաթողիկոսին ղեկ է արժանադասիվ ընդունելություն ցույց տալ, չէին համարձակվում հանդիպել Վեհափառին, որին «նշանառության» տակ էին վերցրել ՊԱԿ-ի գործակալները:

Միայն զիջելով, մոտավորապես ժամը 12-ի սահմաններում մի խումբ դարաբաղցիներ եկան հյուրանոց՝ կաթողիկոսին տեսնելու եւ նրանից օրհնություն ստանալու համար: Նրանց թվում էին Սեփանակերտի ղեկավարն ու նրան հարմարեցրած թատրոնի ղեկավար Միխայել Կորգանյանը՝ իր սիկնոջ՝ Ջարուհի Ներսեսովայի հետ, սիրված դերասանուհի Թամարա Մելիսյանը եւ այլոք: Նրանց տեսնելով, կաթողիկոսը շատ ուրախացավ: Մարդիկ համբուրում էին Վեհա-

փառի աջը, իսկ ոմանք ուրախությունից լաց էին լինում: Միֆայել Կորգանյանը Ղարաբաղի ողջ ժողովրդի անունից ներողություն խնդրեց Վեհափառին ոչ արժանավայել ընդունելության համար, դրանում մեղադրելով ղեկավարությանը:

Կաթողիկոսն ասաց, որ ինքն ամեն ինչ հասկանում է, եւ իր նղատակն է, որ ծանոթանա Ղարաբաղում դաշտամարտի երեւոյցներին, եւ որ ժողովուրդն իմանա, որ ունի Հայոց կաթողիկոս:

Հաջորդ օրը Վեհափառը մեկնեց Գանձասար: Ժողովուրդն այնտեղ շատ լավ ընդունեց նրան, իսկ բոլորից շատ ուրախացել էր վանքի դահլիճի Միքա Ֆեռին, որ 10-ից ավել երեխաների հայր էր: Նա կաթողիկոսին հրավիրեց իրենց տուն, հյուրասիրեց, իսկ վերջինս նվերներ բաժանեց երեխաներին: Ի դեպ, տարիներ հետո, մի անգամ Գանձասար եկան ԼԴԻՍ կոմկուսի 2-րդ ֆարսուղար Վոլոդիմիր եւ ՊԱԿ-ի վարչության ղեկավար Բասրովը: Հարբած, նրանք մտան երեւոյցի եւ հրազենից կրակ բացեցին Վեհափառի լուսանկարի վրա: Քեռի Միքան ջղայնացավ եւ սկսեց վիճել նրանց հետ, վերջիններս անվանելով խուլիգաններ: Մի ֆանի օր հետո վանքի դահլիճին աշխատանքից հանեցին: Քեռի Միքան նամակ ուղարկեց Վեհափառին՝ ամեն ինչ մանրամասն դասնելով: Վազգեն Ա-ի բողոքից հետո Բասրովին Սեփանակերտից հեռացրին...

Ամենայն հայոց կաթողիկոսը Ղարաբաղից ուղեւորվեց Կիրովաբադ՝ «Գանձակ», որտեղ գործող երեւոյցի կար: Այդ օրն իսկապես ազգային տոն էր Գանձակի հայ ազգաբնակչության համար: Մեծ ու փոքր դուրս էին եկել տեսնելու Վեհափառ Հայրադարին: Սեփանակերտից եւ էլ էի մեկնել Կիրովաբադ՝ ավելի մոտիկից տեսնելու նրան, եւ օրհնությունը ստանալու համար:

Քաղաքի հայկական թաղամասում ժողովուրդը գորգեր ու խալիչաներ էր փռել կաթողիկոսի ոտների տակ: Ամենուր ցնծություն էր, մարդիկ ամենուրեք ձգվում էին դեպի Վեհափառ եւ համբուրում նրա աջը: Կաթողիկոսը հարյուրավոր, ոսկյա եւ արծաթե խաչեր նվիրեց երեխաներին: Նման մի ոսկե խաչ էլ եւ նվեր ստացաւ:

Վեհափառին երկրորդ անգամ հանդիպեցի արցախյան շարժման ժամանակ՝ 1989թ.: Էջմիածնում բանաստեղծ Վարդան Հակոբյանն ինձ ծանոթացրեց Վազգեն Ա-ին, եւ համբուրեցի նրա ձեռքը եւ ստացաւ նրա օրհնությունը: Երբ Վարդանն ինձ ներկայացրեց որդես Ղարաբաղի ազգային-ազատագրական դայաբարի ղեկավարներից, Վեհափառը հուզված սկսեց դասնել Կիր-



վաբաղում հայերի հալածանքների եւ ջարդերի մասին: Նա ասաց, որ Քանձակի սեր-սեր Սահակը մի կերպ փախել է այդ դժոխքից՝ սեսածն իրեն զեկուցելու համար: Ես կաթողիկոսին ասացի, որ սեր Սահակին ես եմ փախցրել Կիրովաբաղից եւ ինքնաթիռով հասցրել երեւան:

Հետո Վեհափառն ասաց, որ ինքը Սոս Սարգսյանի միջոցով մեծ օգնություն է ցույց տալիս Սումգայիթից, Կիրովաբաղից եւ Բաքվից եկած փախսականներին:

Երբ մեզ սուրճ հյուրասիրեցին, իսկ կաթողիկոսն ինձ հարցրեց, թե ինչով կարող է օգնել, ես մի փիչ անսակս զսովեցի եւ ասացի, որ զենքից բացի ուրիշ ոչինչ չունեմ: Նա շատ ջղայնացավ եւ սկսեց խրատներ տալ, որ այդ ճանապարհից հեռու կանգնենք: Ասաց, որ ինքը ամեն ինչ կանի, որ բանը չհասնի դատարանին:

Երբ Վեհափառը հանդարտվել էր եւ մենք դատարանում էինք հրաժեշտ տալ, նա նորից հարցրեց, թե զուգե՞ս ինչ-որ բան է ունեցնում: Ես կրկին ասացի, որ մեզ միայն զենք է հարկավոր: Այդ պահին Սոսկվայի եւ Նոր Նախիջեւանի հոգեւոր առաջնորդ արքեպիսկոպոս Տիրան Կյուրեղյանն ասաց, որ ինքը ինձ լավ է ճանաչում, գիտե, որ ես դաժանակամ ջոկասներ եմ զինում, որոնցից անհրաժեշտության դեպքում կարողանամ դաժանանել մեր հողն ու երկիրը: Վեհափառը համբուրեց ճակասս եւ խորհուրդ տվեց զգույս լինել: Իսկ ես հնարավոր ամեն ինչով կօգնեմ ժողովրդին, - ասաց Վեհափառը: Եվ մինչեւ կյանքի վերջ նա հավասարիմ եղավ իր սուրբ խոստմանը:

## ՊԱԿ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆ ԱՐՑԱԽՈՒՄ

Երբ ես Ստեփանակերտի Սո. Շահունյանի անվան մարզադահլի սնորհն էի, մի օր ինձ մոտեցավ ֆաղաբաղական հազուստով, միջախասակ մի մարդ եւ հարցրեց, թե ե՞ս եմ մարզադահլի սնորհն: Նա ասաց, որ ուզում է զալ վազելու համար եւ եթե կարելի է, օգտվի մարզադահլի բաղնիքից: Պայմանավորվեցինք, որ հաջորդ օրը ժամը 6-ին գա: Երբ նա հեռացել էր, ինձ մոտեցավ մի երիտասարդ եւ ասաց. «Ռազմիկ, զգույս կլինես, նա ՊԱԿ-ի ներկայացուցիչ է»:

Հաջորդ օրը պայմանավորված ժամին նա եկավ, մի փիչ վազվզեց եւ լոգամբ ընդունեց: Թեյի հրավիրեցի, համաձայնվեց եւ ասաց, որ վազից հետո թեյը շատ օգտակար է: Հետո նրան ճաշի հրավիրեցի, համաձայնվեց: Ձրուցում էինք եւ թթօղի խմում: Աւխասում էի փիչ խոսել եւ սեսնել, թե նրան ինչ հարցեր են հետաքրքրում:

Ի՞նչ եմ ուզում, հարցրեց նա, գիտե՞ս, որ եթե այդպես շարունակվի, կարող է ընդհարումներ լինեն բանակի հետ, հետո էլ՝ ադրբեջանցիների հետ: Պատասխանեցի, որ մենք ձգտում ենք, որ ոչ ոք մի ընդհարում չլինի բանակի հետ: Իսկ ինչ վերաբերում է թուրքերին, ադա բանակը ոչ ոք է այնպես անի, որ զենք չկուտակեն, բանակը ոչ ոք է ադա հովի կարգ ու կանոնը ոչ միայն Ղարաբաղում, այլեւ Ադրբեջանի օրջաններում: Ես ասացի, թե ինչի համար է ՊԱԿ-ը, թող այնպես անի, որ զենք չկուտակեն: Նա ասաց, որ ըստ տեղեկությունների, թե Ադրբեջանում եւ թե Ղարաբաղում զենք են կուտակում եւ ջոկասներ կազմում: Հասկանալով, որ նա շատ բան գիտի, ասացի, որ իրականում ադրբեջանական տարածքից ավազակային հարձակումներ են գործում Ղարաբաղի նախիրների վրա, սղանում կամ թալանում հայերի ունեցվածքը: Իսկ մեզ զենքը ունեցնում է ոչ թե հարձակվելու, այլ մեր ունեցվածքը դաժանելու համար:

Երկու օրը մեկ նա զալիս էր մարզադահլի եւ հանդիպում ոչ միայն ինձ հետ, այլեւ մեր շարժման մի ֆանի ակտիվիստների՝ Ռաֆիկ Գաբրիելյանի, Համլետ Գրիգորյանի, Էռնեստ Հայրապետյանի, Բեգլար Ղուլյանի եւ Գարիկ Գրիգորյանի հետ:

Մի անգամ պայմանավորվեցինք, որ օգնի մեզ Աղղամից գնումներ կատարելու համար: Նա դատարանաց, որ իր համար դա ոչ մի դժվարություն չի կրում: Ասուզելու համար նա հետ



մեքենայով մի մարդ ուղարկեցինք եւ, իսկապէս, դահակակէտում նրա փաստաթղթերը նայելով, զինվորականներն իսկույն զգաս կանգնեցին եւ մինչեւ Աղղամ ավտոմեքենան առանց ստուգման գնաց եւ ետ եկավ: Իհարկե, այդ բանն ինձ շատ դուր եկավ, եւ ես սկսեցի մտածել, թե ինչպէս նրա մեքենայումն օգտագործեմ զեմբի սահալու եւ սեղափոխելու համար: Մի ֆանի անգամ մեր մարդիկ նրա հետ Աղղամ գնացին եւ գնումներով վերադարձան: Սակայն այլ բան է սովորական աղղամներ գնելը, այլ բան՝ ՊԱԿ-ի ներկայացուցչի օգնությամբ զեմբի սեղափոխելը:

Մի որոշ ժամանակ անցավ: Մենք հաճախակի էինք հանդիպում եւ մեր տղաների հետ հյուրասիրում նրան: Մի անգամ, երբ մենակ էինք, նա ասաց. «Ռազմիկ, ձեզ մոտ առանց ամուսին կին չկա», արդեն ֆան օր է՝ ես մենակ եմ»: Ասացի, որ մի բան կդասավորենք:

Ծանոթ ջախել կանայք կային, հետները դայանավորվեցինք եւ մի օր ՊԱԿ-ի ներկայացուցչի հետ ֆաղափց դուրս մի աղբյուրի մոտ խորովածի հրավիրեցինք աղջիկներին: Արկադի Կարապետյանի եւ Գարիկ Գրիգորյանի հետ նախադաս դայանավորվելով, երկու աղջիկներին հետ Արկադիի մեքենայով գնացինք Սդնախ: Ի դեպ, Գարիկին հանձնարարեցինք, որ լուսանկարչական աղարատ վեցնի իր հետ՝ ՊԱԿ-ի գործակալի սիրային զեղումներն անմահացնելու համար:

Ամեն ինչ մեր ծրագրած ժամանակ էր գնում: ՊԱԿ-ի ներկայացուցիչը, երբ մի լավ կոնծել էր, սկսեց համբուրվել աղջիկներից մեկի հետ: Չեսո շորերը մի կողմ նետեց եւ յուրաքանչյուր կենացից հետո կրֆոս համբուրում էր աղջկան, իսկ Գարիկը լուսանկարչական աղարատով անընդհատ նկարում էր:

Այդ օրը աղջիկները նույնպէս լավ խաղացին իրենց դերը: Մի ֆանի օր հետո, երբ նկարները ցույց տվեցի ՊԱԿ-ի ներկայացուցչին, գունասվեց եւ խնդրեց, որ նկարներն ու լուսանկարչական ժառանգները ոչնչացնի, իսկ ինքը խոստացավ ամեն ինչով օգնել մեզ:

Ասացի, որ հրաժեշտի օրը ձեր ներկայությամբ բոլորը կոչնչացնեն: Մենք արդեն շատ բան գիտեինք նրա մասին: Գնդադէտ է, աշխատում է Յարոսլավլի ՊԱԿ-ի բաժանմունքի տէրի տաշտոնում եւ օրումեջ զանգում էր Մոսկվա ու վերադասին հարողում, թե ինչ է կատարվում Ստեփանակէտում:

Մեզ մոտ մնաց երկու ամիս: Նրա միջոցով օղանավակայա-

միջ զեմբի էինք սեղափոխում տարբեր գյուղեր: Այդ գործում անգնահատելի աշխատանք էին կատարում Յանլէտ Գրիգորյանը, Էռնեստ Յայրապետյանը, Ռաֆիկ Գաբրիելյանը, Բեգլար Ղուլյանը եւ իհարկե, Արկադի Կարապետյանն ու Ռոլետ Աղաջանյանը, որոնք հիմնականում զեմբի սեղափոխելու գործով էին զբաղվում: Մի անգամ, երբ զեմբի տիտի տանեինք Կարմիր շուկա, իսկ այն-տեղից էլ Տող, Մագի կամրջի մոտ դահակակէտում խորհրդային բանակի զինվորները կանգնեցինք մեր մեքենան: Ավտոմեքենան բեռնված էր փայտով, իսկ դրանց տակ զեմբեր էին:

Մենք այդ մեքենայի հետեւից էինք գնում: Կանգնեցինք, ՊԱԿ-ի ներկայացուցիչը դուրս եկավ ավտոմեքենայից, մոտեցավ զինվորներին, կանչեց հրամանատարին եւ զրույկն ու թույլատրությունը ցույց տալով, ասաց, որ այդ փայտն իր համար են տանում: Չհամանատարը ներողություն խնդրեց զնդադէտից, եւ փայտով ու զեմբով բեռնված մեր ավտոմեքենան առաջ շարժվեց: Մինչեւ Շոտ նրանց ուղեկցեցինք եւ հետ վերադարձանք:

Նման դեպքեր շատ չեղան եւ ամեն անգամ ՊԱԿ-ի զնդադէտն օգնում էր մեզ: Եկավ հրաժեշտի օրը: Ինչպէս խոստացել էի, նրա ներկայությամբ ես ոչնչացրեցի լուսանկարներն ու լուսանկարչական ժառանգները:

Անցավ մի տարի եւ մի օր խորհրդային զինվորներն ու դաշտասան աշխատողները քաղաքացիներն մարզադաշտն ու ձերբակալեցին ինձ ու Ռաշիդ Մանգասարյանին: Բանսից դուրս եկա 4 ամիս հետո միայն:

## «ՑԱՎԴ ՏԱՆԵՄ»

1989թ. գարնանը, երբ արդեն ստեղծվել էր հասուկ կառավարման կոմիտէն, Ստեփանակէտն ուղարկեցինք մի ֆանի խորհրդային զորամասեր, որոնց թվում եւ Բելոռուսիայի ներքին գործերի մինիստրության Սինսկի միլիցիայի ուսումնարանը: Բելոռուս միլիցիոներների խնդիրն էր երկրում կարգ ու կանոն աղափոխել, դաշտացնել ռազմավարական նշանակություն ունեցող վայրերն ու հաստատությունները: Թուրքերն անընդհատ դայթեցնում էին Ստեփանակէտն ֆաղափր ջրով սնուցող Ղայրալու կոչվող ջրամբարը եւ ջրատար խողովակները: Բելոռուս միլիցիոներները դաշտացնում էին



ջրասարը նորոգող մեր բանվորներին: Եվ ֆաղափ ջրամասակարարունը կարգավորվում էր: Նրան հսկում էին Շուշից, Լաչինից եւ այլ վայրերից եկող ճանադարհները:

Ադրբեյլվ Սեփանակերտի բժշկական ուսումնարանի ժեմբում նրան մոտիկից օփվում էին դարաբաղցիների հեռ: Ասիճանաբար նրան սկսեցին ընթռնել մեր դահանջների արդարությունը: Նրան հասկանում էին, թե ինչո՞ւ են դարաբաղցիները ձգտում անջասվել Ադրբեյջանից եւ միանալ մայր հայրենիքին: Մեր շարժման նկատմամբ համակրանքը նրանք դրսեւորում էին գործնական ձեւով: Հաճախ մեզ զգուցացնում էին սղասվող վսանգներից, ձերբակալություններից եւ խուզարկություններից: Երբ հարկ էր լինում օդանավակայանում դիմավորել կամ ճանադարհի զցել ազատագրական շարժմանը օգնության եկած մեր ընկերներին, նրանք սիրահոծար կերպով հանձն էին առնում նրանց անվսանգությունը աղաչովելու կարեւոր գործը:

Այսպէս, այդ միլիցիաները դիմավորել եւ հեռո ճանադարհ են զցել Լեւոն Տեր-Պետրոսյանին, Սուրեն Զոյլանին, Սոս Սարգսյանին, Սամվել Շահնուրադյանին, Զորի Բալայանին եւ ուրիշների:

Ես շատ մտերիմ էի գումարակի հրամանատար, մայր Իվան Բասեցկու հեռ: Կենսուրախ, գեղեցիկ տղամարդ էր, կլինեմ մոտ 34-35 տարեկան: Նա ամեն ինչ հասկացել էր եւ ամենեւին չէր թափանցում իր համակրանքը մեր ժողովրդի ու մեր շարժման նկատմամբ: Նա տեսել էր մեր վաները, խաչքարերը: Կարողացել էր համադասասխսան գրականություն, լսել էր մարդկանց եւ ասում էր, որ ինքը համոզված է մեր գործի արդար լինելու մեջ: Խիստ բացասական վերաբերմունք ուներ Ադրբեյջանի ղեկավարության նկատմամբ եւ զգնում էր, որ Արցախի մնալը այդ երկրի կազմում դատմական անարդարություն է:

Իր համակրանքը Արցախի եւ նրա ժողովրդի նկատմամբ նա ձգտել էր արտահայտել մի բանաստեղծությամբ, որը մի օր արագրեց ու սվեց ինձ: Նրա վերնագիրն էր «Ցավդ տանեմ»: Այդ բանաստեղծության սեղմ տողերում զգացվում էր սեր ու հարգանք արցախյան երկրի ու նրա ձգտումների նկատմամբ: Հեղինակն անսրող համակրանք էր դրսեւորում մեր ցավերի ու վեցերի նկատմամբ: Նա հավատում էր, որ մեր արդար գործը բարի վախճան կունենա, որ վերջապէս մեր երկիրը կզսնի հանգիստ ու խաղաղություն:

Նույն ուսումնարանի գումարակի հրամանատար, մայր Սա-

նիսլավ Տիեկեիչը երաժշտություն գրեց այդ բանաստեղծության համար: Նա լավ ձայն ուներ եւ հաճախ մեզ համար երգում էր ռուսական ու բելոռուսական երգեր:

Ամեն անգամ, երբ նրանք օդանավակայանում դիմավորում կամ ճանադարհ էին զցում մեր մարդկանց կամ մեր հանձնարարությամբ գնում էին Ադրբեյջան եւ այլ վայրեր, վերադարձին հավաքվում էինք ֆաղափային մարզադաշտի իմ առանձնասենյակում, որը մեր օտարն էր: Մի անգամ այդպիսի հավաքի ժամանակ, երբ հյուրասիրության սեղան էինք բաց արել նրանց համար, Սա-նիսլավ Տիեկեիչը վերցրեց կիթառը եւ, իրեն նվագակցելով, կատարեց «Ցավդ տանեմ» երգը: Մենք հիացած էինք այդ երգի թե՛ բառերով եւ թե՛ մեղեդիով: Հարմար առիթի դեպքում նա դարձյալ կատարում էր այդ երգը եւ ես մագնիսոֆոնով ձայնագրեցի դա: Որոշ ժամանակ անց, իմ խնդրանքով, Վալերի Աթաջանյանը տղագրական եղանակով բազմացրեց երգը, որն այստեղ բերում են ամբողջությամբ...

## ЦАВЫТ ТАHEM

Тысячи верст разделяют с семьей,  
С матерью-Белою Русью родной.  
Здесь над горами кружится беда,  
Вот почему нас послали сюда.

Припев:

Цавыт танм, древний Арцах,  
Боль твоя, скорб твоя - в наших сердцах,  
-Цавыт танм, Белая Русь,-  
Скажут друзья, разделив нашу грусть.

Солнцем нас встретил седой Карабах,  
Бытом блокадным, песком на зубах.  
Многострадальный арцахский народ,  
Разве тебя белорус не поймет?



Припев:

Цавыт танм, древний Арцах,  
Боль твоя, скорб твоя- в наших сердцах,  
-Цавыт танм, Белая Русь,-  
Скажут друзья, разделив нашу грусть.

Нет, нелегко расставаться с семьей,  
С матерью-Белой Русью родной,  
Но чтоб друзей миновала беда,  
Прибыли мы, белорусы, сюда.

Припев:

Цавыт танм, древний Арцах,  
Боль твоя, скорб твоя- в наших сердцах,  
-Цавыт танм, Белая Русь,-  
Скажут друзья, разделив нашу грусть.  
Верим: придут к вам и мир, и покой,  
Сможем и мы возвратиться домой.  
Скажем, прощаясь: "До встречи, друзья,  
Старую дружбу терять нам нельзя.

Припев:

Цавыт танм, древний Арцах,  
Боль твоя, скорб твоя- в наших сердцах,  
-Цавыт танм, Белая Русь,-  
Скажут друзья, разделив нашу грусть.

Երբ վերագվեց հասուկ կոմիսեն, Մինսկի միլիցիայի ուսումնարանի կուրսաններին փոխադրեցին Ստեփանակերտից: ԳՈՂԻ հրամանատարը եւ մի քանի սղաներ հրաժեշտի համար եկան մարզադահլ: Եոխ սեղան էին դասրասել: Սսանիսլավ Տիւկեւիչը կրկին երգեց «Ցավդ սանեն» երգը: հետո նրանք խմեցին մեր երկրի ազատության եւ անկախության կենացը: «Վստահ ենք, որ երբ կրկին գանք Արցախ, նա լրիվ ազատագրված կլինի օտար տիրապետությունից»: Մրանք նրանց հրաժեշտի խոսքերն էին:



Վազգեն Օվյան և Հրաչյա Ռոմիսկյան



Գանձասար. 1989թ.



«Ամարաս» տպարանում, Երևան, 1998թ.



Հանդիպում Քերոլայն Քոքսի հետ

## ՄԱՆԱՇԻԴԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1990թ. հունվարի 12-ին թուրքերը հարձակվեցին Շահումյանի Երջանի Մանաճիղ գյուղի վրա: Մինչ այդ ուղղաթիռի վթարի հետեւանով Պետաւեն գյուղում զոհվել էին մի քանի հայ երեխաներ: Շահումյանից 19 հոգի գնում են երեխաների թաղմանը: Ճանադարհին Կուլեջի Արմավիր գյուղի մոտ դարանակալ թուրքերը կարողանում են ձերբակալել նրանց: Կալանավածների մեջ էին նաեւ Շահումյանի Երջկոմի առաջին քարտուղար Վոլոդյա Աղաջանյանը եւ Երջխոհրդի նախագահ Շահեն Մեղրյանը: Այդ ընկերները գլխավորում էին Շահումյանի դաւաճոյանը գործը եւ նրանց գերի ընկնելը խիստ բարդացրեց վիճակը: Վ. Աղաջանյանի եղբայրը՝ Կառլեն Աղաջանյանը, որը Ասկերանի Երջանի միլիցիայի վարչոյան ղեկն էր, մեկնում է Շահումյանի դաւաճոյանը կազմակերպելու եւ, ընդհանրադէպ, այդ Երջանի ղեկավարոյանը իր ձեռքը վերցնելու համար:

Վախ կար, որ թուրքերը կարող են հարձակվել առանց ղեկավարոյան մնացած Շահումյանի Երջանի վրա, ուստի ես, որ այն ժամանակ՝ 1988-ից մինչեւ 1990 թ. դարաբաղյան ուժերի ԵՏԻ ղեկն էի, իմ ջոկասով (40 մարտիկներ) «Կամազ» ավազմաւորը մեկնեցի Շահումյան: Այդ մեքենայի վարորդը երեւմ էր, որը մինչեւ հիմա ծառայում է մեր բանակում: Տեղ հասնելուն ղեկն աներկայացա Կառլեն Աղաջանյանին: Նա ԵՏԻ ուրախացաւ եւ ասաց, թէ վստահ կա, որ թուրքերը հարձակվեն Դարաջինարի կողմից: Նա խնդրեց ինձ գնալ այնտեղ եւ ծանոթանալ դաւաճոյանը ղեկն: Մեկնեցիմ եւ էսկաւասորով խրամասներ փորեցիմ, դիրքեր դաւաճեցիմ: Մեմ, իհարկե, զինված էիմ եւ մեզ հետ սարել էիմ նաեւ նռնակներ, որոնց մի մասը սվեցիմ դաւաճոյանը կազմակերպող Վալերիկին եւ սովխոզի դիրեկտոր Գրիշիկին: Սդասում էիմ, որ թուրքերը ուր ուր է կհարձակվեն գյուղի վրա:

Այդտեղ հանդիպեցիմ Վազգեն Մանուկյանին եւ Դավիթ Վարդանյանին, որոնք բերել էին հունամիտար օգնոյանը, ինչ-ղեկն եւ Երջանի դաւաճոյանը համար խիստ անհրաժեշտ բեռներ (որսորդական հրացաններ, փամփուլներ, զինվորական համազգեստներ):

Շահումյանի դաւաճոյանը գործն ամուր հիմքերի վրա դնելու ուղղոյանը մեծ աւաճան էին սարել Շահեն Մեղրյանը,



Հակոբը եւ Վեյլանը՝ իմ ընկերոջ եղբոր որդին: Գիշեր-ցերեկ տղաները հերթադասում էին եւ թուրքերը չէին կարող նրանց հանկարծակի բերել: Նրանց ձեռքի սակ կային դյուրավառ հեղուկով 100 շերտ՝ անհրաժեշտության դեղումն սանկերի եւ զրահադաս մեքենաների վրա զգելու համար:

Քանի որ Երջանի ղեկավարները եւ էլի ուրիշ անձինք գերի էին ընկել թուրքերի ձեռքը, մենք որոշեցինք թուրք գերիներ վերցնել մեր մարդկանց հետ փոխանակելու համար: Նրանց ազատագրելու միակ ճանադարհը դա էր: Մեզ հաջողվեց բռնել հիսուսնից ավելի ազերիների, որոնք տարբեր զբաղմունքի տեղ մարդիկ էին: Նրանցից մեկը բժիշկ էր: Թուրք ղազանդներին բաժանեցինք սերերի վրա՝ դառնելու փոխանակման համար:

Այդ ժամանակ թուրքերը մի մարդ ուղարկեցին, որին բռնեցինք: Նա հայտնեց, որ եկել է ղազանդների փոխանակման հարցով: Մեր մարդիկ, ըստ նրա, զսնվում էին խանլար ֆաղափ բանտում:

Մենք բաց թողեցինք նրան, որ գնա եւ զբաղվի փոխանակությունը կազմակերպելու գործով: Հետո եկավ Ադրբեջանի ՆԳ մինիստրի տեղակալ Մամեդովը: Նրա հետ բանակցությունները վարում էինք ռազմախոս: Երբ նա եկավ իր մարդկանցով, մենք նրա հետ հանդիպեցինք մեր դիրքերից 400 մետր հեռավորության վրա: Նա հայտնեց, որ հայ ղազանդները լավ են եւ դառնում են խանլարում: Մենք թույլ սվեցինք, որ Ռուս Պարիս գյուղից մոլոկաններ գային եւ տեսակցեին մեզ մոտ զսնվող ազերի ղազանդների հետ: Հանդակվելով, որ ազերիները վատ ղայմանների մեջ չեն, մոլոկանները զնացին հաղորդելու ազերի ղազանդներ անձանց նրանց խնդրանքը՝ անհատադ փոխանակել իրենց հայ ղազանդների հետ:

Հաջորդ օրը առավոտյան ժամը 8-ին, երբ ստուգում էինք դիրքերը, հանկարծ ինացանք, որ թուրքերը հարձակվում են Մանաչիդի վրա: Այդ լուրը հեռախոսով Գրիչկին հայտնել էր Կառլեն Աղաջանյանը եւ խնդրել անմիջապես Մանաչիդ ուղարկել իմ ջոկատը: Ես հրաման սվեցի եւ իմ ջոկատը, ինչդեպ եւ Շահումյանի տղաները, բոլոր միասին 43 հոգի, լցվեցին «Կամազը», որն ուղղություն վերցրեց դեղի Մանաչիդ:

Հունվարի 12-ին էր կամ 13-ին, լավ չեն հիշում: Առաջ ձյուն էր տեղացել նախորդ գիշերը: Դեռ չէինք հասել տեղ, երբ ճանադարհին տեսանք Մանաչիդի բնակիչներին՝ կանանց ու երեխաների, որոնք փախչում էին գյուղից: Նրանցից ոմանք չէին հասցրել

կոչիկները հագնել: Սարսափահար մարդկանց այդ խուճադահար փախուստը հուզեց մեզ բոլորիս: Ձգսում էինք վայրկյան առաջ տեղ հասնել եւ դառնալու նրանց:

Պարզվեց հետեւյալը. թուրքերը խորամանկորեն ցույց էին տալիս, թե իբր ուզում են հարձակվել Ղարաչինարի վրա: Ուժեր էին կուտակում այն կողմում, մենք էլ նրանց այնտեղ էինք սղատում: Բայց նրանք որոշել էին հարձակվել Մանաչիդ գյուղի վրա: Ղարաչինարը Շահումյանի Երջանի արեւելյան կողմում էր, իսկ Մանաչիդը՝ հակառակ մասում: Սա թե՛նա՛նու առաջին ուժեղ հարձակումն էր Շահումյանի Երջանի վրա, որին մասնակցում էին ավելի քան 500 զինված ազերիներ:

Երբ մենք մոտեցանք, Մանաչիդի գյուղացիները վազեցին մեր կողմը եւ սկսեցին խնդրել մեզ, որ գնանք գյուղը դառնալու: Գյուղացի տղաներից մեկին բարձրացրեցինք մեքենայի թափի, որ նա մեզ ցույց տա ճանադարհը:

Թուրքերը հարձակվում էին Թողան ադրբեջանական գյուղի մոտից, որն ավելի բարձր դիրքի վրա էր զսնվում: Նրանք արդեն անցել էին երկու գյուղերը միմյանցից բաժանող ձորը եւ շատ փչ էր մնացել (մոտ 15 մետր) որ հասնեինք Մանաչիդի ծայրին զսնվող կոլոնիստության անասնադահական ֆերմային: Վերջինս համարյա միացած էր գյուղին:

Գյուղացի տղաներից 10-12 հոգի դիրքեր էին մտել ֆերմայի մոտ եւ չէին թողնում թուրքերին մոտենալու: Վերջիններիս անմիջական նոյազակն էր թուլացնել Շահումյանի Երջանի դառնալու նոյազակն գործը եւ, օգտվելով ստեղծված խուճադից, գրավել գյուղը եւ թալանել: Առաջին հերթին նրանք տեսնելու էին ֆերմայում զսնվող խոճոր եղջերավոր անասուններն ու ոչխարները: Այդ էր դառնալը, որ իրենց գլխավոր ուժերը նրանք կենտրոնացրել էին այդ ուղղությամբ: Երբ ձորը լցվել էր ազերի զինյալներով, գյուղի տղաները սկսել էին փախչել:

Մոտեցանք բարձունքին եւ ես 20 հոգու ուղարկեցի մեր դառնալուներին կողմը, որոնք, ինչդեպ արդեն մտեցի, դիրքեր էին գրավել ֆերմայի մոտ: Վեց հոգու ես թողեցի դիրքերում, այնդեպ որ նրանք կարողանան հսկել Երջանի վրա եւ թույլ չտան, որ Կուլչի Արմավիրի կողմից թուրքական ուժեր գային միանալու Մանաչիդի վրա զսնվողներին:

Մեր տղաների գնդակները, արձակված ուսողական հրացաններից, վնաս չէին հասցնում թուրքերին, բայց ստիպում էին



նրանց հրաժարվել Մանաժողի վրա հարձակվողներին միանալու ցանկությունից: Այդպես էլ նրանք չեկան օգնելու գրոհողներին: Նույնիսկ այն ժամանակ, երբ մենք կարողացանք Երջադասել վերջիններիս եւ առնել կրակե արցունքի մեջ:

Մնացած շղաներով մենք աշխատում էինք գրավել մի փոքրիկ բարձունք: Ես տեսնում էի, որ եթե մեզ հաջողվեր գրավել դա, ապա գրոհող թուրքերը կհայտնվեին Երջափակման մեջ: Այդ բարձունքի վրա դիրավորվել էին վեց թուրքեր եւ այնտեղից կրակում էին մերոնց վրա: Մենք շատ էինք մոտեցել, մնացել էր մոտ 80-100 մետր: Շուրջ կես ժամ կրակում էինք միմյանց վրա: Գնդակները ձյան մեջ թեփվելով անցնում էին մեր կողմով եւ բարեբախտաբար, մեզանից ոչ մեկին չէր հասնում:

Ես շղաներին կարգադրեցի թափում Երջանցել թուրքերին, իսկ ինքս մնացել էի իմ տեղում եւ կարաթինից կրակում էի նրանց վրա: Երջանցման ժամանակ շղաները կարողացան խփել նրանցից երկուսին: Մյուս ազերիները վերցրեցին խփածոներին եւ փախան: Մենք գրավեցինք բարձունքը եւ այնտեղ շատ հարմար դիրք ունեցանք :

Այդ ժամանակ թուրքերի շուրջ 200 հոգուց բաղկացած մի խումբ, սրակտորների ետեւ անցած, օգնության էր Եստողում գրոհողներին: Դրանք Ս-80 բուլդոզերներ էին, որոնց առջեւի մասը բարձրացած էր: Կողմերից զրահադաս էին դարձված ոլողդասի լայն շերտերով: Մենք ձեռքի հրթիռներ ունեւինք, որ մեր շղաները բերել էին Աֆղանստանից: Ամեն մի հրթիռ մոտավորապես 70,90 սմ երկարություն ուներ, թռիչքի հեռավորությունը 800-1000 մետր էր: Երբ կրակում էինք սրակտորների վրա, դայթող հրթիռների բեկորները հրեղեն անձրեւի նման թափվում էին գրոհող ազերիների վրա՝ ահ ու սարսափ սարածելով նրանց մեջ: Ես նշան բռնեցի սրակտորներից մեկի վրա: Հրթիռը հասավ նոյնակին: Լսվեց ուժգին դայթյուն եւ սրակտորը հայտնվեց բոցերի մեջ: Նշան բռնեցի մյուս սրակտորի վրա: Դա եւս խփեցի եւ գրոհող ազերիները, որ գալիս էին սրակտորների դաշտադաշտային սակ, ահաբեկված փախան եւ մտան մոտակայքում զսնվող դիրքերը:

Գրոհը կասեցվեց: Ձգտում էինք ելնել հաջորդ բարձունքի վրա, որը սիրադասող դիրք ուներ եւ այնտեղից կարող էինք կրակի սակ վերցնել գրոհողների առաջին խմբին:

Ես առաջացել էի մոտ 50 մետր եւ դառնել ձյան մեջ, որը

հասնում էր մինչեւ զոսկասեղս: Մոտ 30 բողբ մնացի այնտեղ: Փամփուլօսներս վերջացան: Չէի կարող ես գնալ, որովհետեւ թուրքերը կարող էին խփել ինձ: Կանչեցի մերոնց եւ փամփուլօս խնդրեցի: Մանաժողի մի գյուղացի տղա, մոտ 13-14 տարեկան, սողալով մոտեցավ ինձ՝ իր հետ փամփուլօսներ բերելով: Նա ուզում էր մնալ ինձ մոտ, բայց ես թույլ չսվեցի: Նա նույն ձեւով ես գնաց: Թուրքերը կրակում էին նրա վրա, բայց բարեբախտաբար վրիպեցին: Նա անվնաս դուրս եկավ կրակի սակից:

Մենք տեսնում էինք, որ մեր կրակը մարդկային զոհեր է խլում ազերիներից: Լսում էինք ազերիների ճիչերը, հառաչանքներն ու հայիտյանները:

Այդ ժամանակ երեջի կողմից հայերը գրոհ սկսեցին թուրքերի առաջին խմբի վրա: Մենք տեսանք, որ վերին Շենի շղաները մեքենաներով արդեն հասել են: Նրանք միացան մեր շղաներին: Մի միլիցիոներ, որը կարծեմ սղա էր, վիրավորվեց:

Չյուների մեջ թողնելով 30 դիակ, թուրքերը դիմեցին փախուսի: Նրանցից 5-ին գերի վերցրեցինք: Շատ զենք ընկավ մեր շղաների ձեռքը: Ամեն ինչ թողեցինք Եստողմանցիներին: Ես ինձ համար վերցրել էի հրթիռ արձակող արճանակ (ռակետնիցա), հանկարծ տեսա այն փոքրիկ տղային, որը ձյան մեջ սողալով ինձ փամփուլօս էր հասցրել: Ես գրկեցի նրան, համբուրեցի: Նա ինձնից խնդրեց արճանակը իրեն նվիրել, եւ անմիջապես սվեցի: Այդ օրվանից նրան այլեւս չեմ տեսել, ոչ էլ անունն եմ հիշում: Շատ ուրախ կլինեի հանդիպել նրա հետ:

Երբ խուզարկում էինք զերիներին, դարզվեց, որ նրանցից երկուսի մոտ կային 2000-ական դոլարով թուրքական չեկեր: Մանաժողիցիները ծեծում էին նրանց: Մի մորուսավոր թուրք դիմեց ինձ եւ խնդրեց, որ չթողնեմ իրեն ծեծեն: Նա ասաց, որ ինքը խանլարի ժողովրդական ճակատի նախագահի տեղակալն է, եւ իրեն կարող եմ փոխանակել Շահումյանի Երջանի ղեկավարների հետ, որոնք զսնվում են խանլարի բանտում: Ես չթողեցի, որ նրան ծեծեն: Հետագայում նրան փոխանակեցինք Շահեն Մեդրյանի հետ:

Մանաժողի կռիվը սկսվեց առավոտյան ժամը 8-ին եւ վերջացավ 15.30-ին: Թուրքերի ամենամեծ սխալն այն էր, որ գրոհելով 500 հոգով, նրանք առաջ էին գալիս շատ նեղ ճակատով (շուրջ 500-600 մետր): Իսկ մենք, որ բոլորս միասին 180 հոգի էինք, ունեւինք 2-2,5 կմ ճակատ: Մենք կարողացանք Երջանցել նրանց:



Հասկաղես լավ էին կռվում թեւերում զսնվող տղաները երեջի ջուկասը եւ իմ սարած ջուկասը: Ես հայտնվել էի թուրքերի թիկունքում: Մերոնք այնքան էին առաջ շարժվել, որ բիչ էր մնում ընկնեին մեր տղաների կրակի սակ:

Այդ ժամանակ բանակցութիւններ էին գնում դասանդ սարված 19 շահումյանցիներին ազատելու համար: Թուրքերի դիակները զսնվում էին իրենց սարածում, բայց նրանք այնքան էին վախեցած, որ չէին համարձակվում գալ եւ սանել դրանց: Մեր բռնած գերիները փոխանակեցինք հայ դասանդների հետ:

Մի ֆանի օր մնացինք Ղարաչինարում: Պահում էինք դահակակետերը: Հունվարի 18-ին ինձ կանչեցին Ստեփանակետ, Ազգային խորհրդի նիստին:

### **ՁԵՐԲԱՎԱԼՈՒԹՅՈՒՆ (1990թ. հունվարի 18)**

Սանաճիդից վերադառնալուց մի ֆանի օր անց, երբ զենքերն արդեն թափքել էինք, դեսական անվստահության մի ֆանի սղաներ եկան մարզադաշտ եւ ցանկութիւն հայտնեցին վազելու եւ լողանալու: Ես, իհարկե, թույլ չվեցի եւ նրանք մի ֆանի օր գալիս էին մարզումների: Ըստ երեւոյթին նրանք հսկողության սակ էին վերցրել ինձ: Պարզվեց, որ Սանաճիդի կռվի առանձին էրիզողներ Նիսից հետո մարզադաշտ եկավ Ռաճիդ Սանգասարյանը, որը Ստեփանակետի էլեկտրատեխնիկական գործարանում մեր ներկայացուցիչն էր: Նա մոտ մենք զենքեր էինք նորոգում եւ նռնակներ սարում: Նա եկել էր ինձ մոտ փորձարկումների համար նռնակների կադետներ վերցնելու: Այդ գործում մեզ շատ էր օգնում Երեւանի «Ասրո» գործարանը: Այդտեղից մեզ ուղարկում էին ականանետներ՝ իրենց ականներով, նռնակներ, կադետներ, փամփուօսներ, որոնք մենք դահեստավորում էինք Չանախչիի մոտ եւ Վերին Հոռաթաղում: Մնացած մասն ուղարկում էինք Երջանները:

Երբ Ռաճիդի հետ մտանք իմ առանձնասենյակ, մի ֆանի բողե անց լսեցինք վազի ձայներ: Կարծեցի մարզիկներ են վազում, բայց դարձվեց, որ երեք ավտոմեքաններով մարզադաշտի սարածք են եկել 80 ռուս զինվորներ՝ ինձ ձերբակալելու համար: Նրանց բողորի

երեսները փակված էին սեւ դիմակներով: Հանկարծ նրանք երկու դռներից ներխուժեցին ներս եւ բռնեցին ձեռքերս: Նրանց թիկունքում ես տեսա ՊԱԿ-ի տղաներից մեկին, որը վազելու դաշտակալով գալիս էր մարզադաշտ: Փորձեցի ազատել ձեռքերս, չկարողացա, նրանք շատ էին, բռնել էին նաեւ Ռաճիդին: Ձեռքերս ետ տարան եւ ձեռնաշղթաներ հագրեցին: Նույն ձեռով վարվեցին նաեւ Ռաճիդի հետ: Ընդունարանում բռնել էին իմ տեղակալին՝ Հայրենական դաշտերում հաշտանդան, դահեստի մայր Սերգեյ Սաղյանին (այժմ հանգուցյալ): Նրան կանգնեցրել էին դաշտի դիմաց, ձեռքերը բարձրացրել, դաշտին էին դրել ու խուզարկում էին: Սեւ դիմակավոր զինվորների հանկարծակի ներխուժման վախից հաշտադաշտի Օֆելյա Գրիգորյանը եւ մարզադաշտի բանվորուհի Ռայա Սողոմոնյանը ուժազնաց էին եղել:

Սկսեցին խուզարկել իմ գրասենյակը: Բռնիչը արձանագրութիւն էր կազմում: Իմ գրասենյակի վրա նրանք զսան մի նռնակ, մի ֆանի կադետներ եւ մի տուփ հրացանի փամփուօսներ: Ձեռքերը մենք թափքել էինք մարզադաշտի դահալ Բենիկ Սողոմոնյանի այգում: Դրանից որոշ ժամանակ առաջ Երեւանից Ստեփանակետ էր եկել համերգային մի խումբ եւ թողել էին արկղեր: Ձեռքերը մենք դրել էինք այդ արկղերի մեջ եւ թողել հողի սակ:

Ես տեսնում էի, որ մեզ ձերբակալողները խիստ շատում էին: Նրանք երեւի վախեցնում էին, որ ջուկասի տղաները կարող էին օգնության գալ եւ ազատել ինձ: Անընդհատ խոսում էին ռացիայով եւ նրանց հրամաններ էին արկում շատ ավարտել ամեն ինչ եւ մեզ տանել:

Այդ ամենը տեսց շուրջ 8 բողե: Ինձից վերցրեցին շարժական փոքրիկ ռացիան (սայվանա-ամերիկյան արտադրության), որը թույլ էր տալիս կադետական 30 կմ հեռավորության վրա: Դա ես մկեր էի ստացել Արթուր Ալեքսանյանից: Նա ծառայում էր Ստեփանակետում եւ մեզ զենք էր մատակարարում: Հիմա աշխատում է ՀՀ ՊՆ-ում:

Բռնիչը մտած էր իմ գրասենյակի մոտ եւ շատ կարգով արձանագրութիւն էր կազմում խուզարկության մասին: Ամեն ինչ ստուգեցին: Նույնիսկ ֆանդեցին հասակի տախտակները, բայց չնկատեցին, որ իմ գրասենյակի աջ կողմում թղթով փակված դահալի վրա դրված էր մեր մեծ ռացիան: Դա մենք մկեր էինք ստացել Երեւանի օդանավակայանի վարչութիւնից, որի աշխատակիցները եկել էին եւ իրենց ձեռքով տեղադրել: Այդ ռացիայով ես



կաղվում էի Մարտակերտի, Մարտունու, Կարմի շուկայի եւ Ասկերանի հետ:

Այդ ժամանակ բազմեցի մի փախսական եկել էր ինձ մոտ աշխատանք գտնելու խնդրանքով: Ջիւղուրները հարձակվել էին նաեւ նրա վրա եւ ոլորել թելերը: Այնդիսի վայրենությանը էին դա արել, որ կոտրել էին նրա ձեռքը: Երբ ստուգելով փաստաթղթերը նրանք համոզվում են, որ նա փախսական է, իրենց մեքենայով նրանք ուղարկում են հիվանդանոց:

Չեկիսները բերել էին ականներ որոնելու գործիք եւ ստուգում էին Բենիկի այգին: Նրանք գտան զենքերի մի մասը (2 կարաբին, 2 որսորդական հրացան եւ 2 փոքր սրամաչափի հրացան): Բենիկ Սողոմոնյանի խեղճ-խեղճ հայացքից հասկացա, որ գտել են: Իսկ զենքի հիմնական մասը, որ դառնալիք էր թեյարանի դահլիճում, չէին գտել: Երբ ինձ տեսան էին, ես թույլտվություն խնդրեցի գրասենյակի բանալիները, կնիքը եւ սեյֆի բանալին հանձնելու ֆարսուղարուհուն: Վերջինս՝ Գալյա Եսայանը, որ Սունգայիթի փախսականներից էր, մոտեցավ, բանալիներն ինձնից վերցնելու: Ես ասացի, որ դատարկ են թեյարանը: Նա հասկացավ, որ դահլիճում գտնվող մյուս զենքերը դեռ է ուրիշ տեղ տանել:

Ռաշիդին եւ ինձ մտքեցին մեքենա եւ տարան օդանավակայան: Ուղղաթիռը դատարան էր թռչելի, արդեն աշխատում էին նրա դռները: Ուղղաթիռի դատարանից ես տեսա, թե ինչդեպ ինձ ձերբակալող սղային մոտեցավ վազելու դատարանով մարզադահլիճ եկող ՊԱԿ-ի ռուս սղայներից մեկը եւ ինչ որ բան հարցրեց: Ես հասկացա, որ նա ուզում էր իմանալ, թե գտնվում են արդյո՞ք զենքի մյուս մասը: Ստանալով բացասական դատաստիսան, այդ սղայն հրաման սվեց եւ 30 զինվորներ մեքենայով անմիջապես մեկնեցին օդանավակայանից:

Յետո ես իմացա, որ մարզադահլիճը հասնելուն դեպ նրանք Գալյայից դատարանը են բանալիները: Գալյան հայտնել էր նրանց, որ ոչինչ չգիտի եւ իրեն ոչինչ չեն սվել: Նրանք կոտրել էին թեյարանի դռները եւ գտել մեր դահլիճ մյուս զինամթերքը՝ նռնակներ, փամփուռներ եւ մի աստիճանակ: Սասիկ Շահաբեյով, նրանք թույլ էին սվել հետեւյալ սխալը. չէին կանչել վկաներ եւ նրանց ներկայությամբ չէին կատարել խուզարկությունը: Յաջողությամբ եկել էին եւ իմ աշխատակիցներին ստիպել, որ ստորագրեն այդ մասին կազմված արձանագրությունը: Նրանք հրաժարվել էին: Այդ բանը, ինչդեպ կեսսնունք, հետագայում հնարավորու-

թյուն սվեց ինձ ժխտելու զինամթերքը մեզ դատարանում մեղադրանքով:

Գիտերը տղաս Գագիկը եւ Դուլյան Բեգլարը (կահույքի ֆաբրիկայի գլխավոր ինժեները) գնացել էին իմ սեփական առանձնատունը, որը 1991թ. դաշտեցրեցին (այդ մասին դեռ կոչանան): Առաջին հարկի մի սենյակի տակ ես փորել էի մի ներհանարկ, որի մուտքը վերելից էր եւ դարձրել էի դահլիճ: Այնտեղ զենքեր էինք թաքցնում (որսորդական հրացաններ, ռացիա, փամփուռներ եւ այլն): Դրանք նոր էինք ստացել եւ դեռ է ուղարկեցին գյուղերը: Գագիկն ու Բեգլարը հանում են զենքերը եւ մեքենայով փոխադրում այլ դահլիճ: Յետո դրանք տեսնում են Չանախչի եւ Սղնաթ գյուղերը, որտեղ նույնպես դահլիճներ էինք հիմնել:

Յաջողությամբ ինձ ձերբակալողները գնացել էին առանձնատունս, խուզարկել ամեն անկյուն եւ ոչինչ չէին գտել: Նրանք գնացել էին նաեւ Բաղրամյան փողոցի հ.6 տնում գտնվող իմ բնակարանը եւ, դատարանի սանկցիան ցույց տալով, խուզարկություն կատարել: Կինս՝ Ասիան եւ Գագիկն ամեն ինչ (ռազմամթերք, թռուցիկներ, գյուղերը դատարանող խմբերի ցուցակներ) տեղափոխել էին հուսալի տեղ:

Իմ գրասենյակին դրված օրացույցի վրա գրված էին դաշնական նշաններ (դարձուկներ), որոնց օգնությամբ դրսից եկած ջոկատները տեղում ընդունելության էին արժանանում: Առանց դրանց ոչ մեկին չէին ընդունում: Գրված էին նաեւ ռացիաների կողերը: Բայց խուզարկողները ուժադրություն չէին դարձրել դրանց: Նրանք չէին հասկացել, թե ի՞նչ թվեր էին դրանք: Այդ թվերը ես գրել էի հայերեն այբուբենի տառերով:

## ԴԵՊԻ ՍՈՒՄԳԱՅԻՑ

Ուղղաթիռն օդ բարձրացավ: Ու՞ր էին տանում մեզ: Արդեն մութ էր, երբ անցանք Քուրի վրայով: Սկզբում կարծում էի, որ մեզ տանելու են թիլիսի, բայց տեսա, որ թռչում ենք անադատների վրայով: Դա Մուղանի դատարանն էր: Ուղղաթիռը թռչում էր Սունգայիթի կողմը: Եվ իսկապես, այն վայրէջք կատարեց Սունգայիթի զինվորական օդանավակայանում, որը շրջապատված էր հազարավոր թուրքերով: Լսվում էր վայրենի անբոխի ձայնը: Ուղղաթիռից մեզ



հրելով դուրս հանեցին եւ սկսեցին հարվածել: Չինվորները մեր թեւերից բռնելով ֆարս սվեցին մեկ այլ ինֆանթրի մոտ եւ մտրեցին մեջը:

Չեսագայուն ես իմացա, որ ՊԱԿ-ն արդեն արձանագրել էր, որ Ռազմիկ Պետրոսյանն օդանավակայանում ինֆարկտից մահացել է: Այդ մասին հեսագայուն մեզ ղատմեց Չորի Բալայանը: Նրանց մոտ արդեն ղատրաս էր այդ մասին հաղորդագրութունը եւ դա անելու էր Բափից եկած ՊԱԿ-ի ղուս սղան, որը հարցախննում էր ինձ: Դա հունվարի 18-ի գիշերն էր: Ռուսները զորք էին բերում Սոււմգայիթ, սանկեր էին իջեցնում ինֆանթրից, որոնք հետո շարժվեցին Բափի վրա: Սոււմգայիթի վայրագ թուրքերը գիտեին մեր մասին եւ խիտ օղակով շրջաղատել էին օդանավակայանը: Վսանգ կար, որ նրանք կհարձակվեն ինֆանթրի վրա: Իրարանցման եւ անսանելի ժխորի ղայմաններում ինձ ուղեկցողները չհասցրեցին կամ գուցե չուզեցին իրագործել ինձ ոչնչացնելու իրենց մտադրութունը: Երբ մտնում էին ինֆանթրի, ընդունող սղան հարցրեց, թե ինչն է եւ երկու հոգի, չէ՞ որ միայն մեկը ղեւս է լինել: Երեւում է, որ նախատեսվում էր ինձ սղանել Սոււմգայիթում: Ինֆանթրի շարժիչներն աւխատում էին: Բացի մեզանից, ինֆանթրի մեջ կային ղուս կանայք եւ երեխաներ: Նրանց փախցնում էին Սոււմգայիթից: Ունացող ու փոթորկվող ամբողջ բավականին հեռու էր եւ եթե հարձակում լինել, ինֆանթրիը կկարողանար օդ բարձրանալ: Ինֆանթրի մեջ մեզ հանձնեցին վեց հոգու հսկողութան, որոնց հրամանատարը ղուս սղա էր, ավագ լեյտենանտ: Սերժանը ազգութանք օս էր, իսկ մյուսները Միջին Ասիայից էին:

Ինֆանթրի օդ բարձրացավ եւ մի ֆանի ժամից վայրէջք կատարեց: Օդանավակայանի շենքի վրա կարդացի «Կրասնոդար» անունը: Ժամացույցը ցույց էր տալիս ժամը 11.30-ը:

Մեզ իջեցրեցին: «Սեւ ազոթավ» կոչված մեքենան կանգնած էր այնտեղ: Չմոռանամ ասել, որ երբ օդանավը վայրէջք կատարեց, մեր ձեռքերը արձակեցին: Մոտս փոքրիկ օրացույց կար Նժդեհի նկարով, որը նվիրել էր ինձ Բեյրութից եկած Պողոս անունով մի երիտասարդ: Նա մասնակցել էր Բեյրութի հայկական թաղամասերի ղատրոյանը: Այդ օրացույցի վրա գրեցի Երեւանում բնակվող ֆրոջս ժամնայի հեռախոսի համարը եւ 30 ղուրլու հետ միասին սվեցի սերժանին, որ ղանգ տա նրան եւ ղատմի իմ մասին: Նա խոստացավ կատարել խնդրանքս:

Նստեցին մեքենան, տարան բանս եւ հանձնեցին բանատար

ղատներին: Մոտս մնացել էր 50 ղուրլի: Խուղարկութան ժամանակ ես սվեցի նրանց 25 ղուրլի: Օրցագրոյանումս ղատեցի մնացած 25 ղուրլին, որը նրանք չգտան:

## ԿՐԱՆՆՈՂԱՐԻ ԲԱՆՏՈՒՄ

Բանտում մեզ առանձնացրեցին եւ յուրաքանչյուրիս տարան մեկ տեղանոց բանտախուց: Չնայած ձմեռ էր, բայց այդ փոքրիկ խցում տատ ճանճեր կային: Առաջին հերթին ղրաղվեցի ճանճեր սատկացնելու ղործով, բայց դրանց մի մասին ձեռք չսվեցի: Խուցի ղատերին սարդոսայներ կային: Ես բռնում էի մի ճանճ եւ ղցում էի սարդի հյուսած ոսայնի մեջ: Չանկարծ երեւում էր սարդը, մոտենում ճանճին, նոր թելերով կաղկոյում նրան եւ ձծում նրա հյութը: Չետո մի կողմ էր նետում:

Օտան մտերը ղատարել էին ինձ եւ այդ ղրաղմունքն օգնում էր փոքր ինչ շեղվելու դրանցից: Ի՞նչ եւ անելու ինձ հետ, ի՞նչ է նրանց հայտնի: Ռատիղին կարելի էր ազատել: Չենց սկզբից որոշեցիմ, որ նա եկել էր մարգաղատս լողանալու: Մրբիչն էր բերել եւ դրել էր սեղանի վրա: Նա ոչ մի կաղ չուներ ո՛չ ղեմերի, եւ ո՛չ էլ ղինամթերի հետ: Ամեն ինչ ղեւս էր ժխել: Ես էլ ունեի արղարացման իմ տարբերակը: Փամփուտները, կաղսուլները եւ սվել ինձ, մարգաղատսի տարածում ղեւ էին դրոցականները եւ սվել ինձ, իսկ ես դրանք հանձնելու էի ֆաղափ ղազմական ղարտեհին: Ինչ վերաբերվում է ղեմերին, աղատ ես ղեւս է ասելի, որ ղաղափար չուներ նրանց մասին: Երեւանից եկել էր համերգային ինչ-որ խումբ, իր բերած արղերի մեջ թաղել էր ղեմերը այղում ու ղմացել: Ես ոչ տետել եւ, ոչ էլ իմացել: Չատարվելու էի բոլոր կարղի մեղաղրաներից եւ ոչ մի թուղթ չէի ստորաղրելու: Այտղետ էի վձեղել եւ խցում անղում ղիշերվա ընթացղում մտղում ղատատխաններ էի տալիս ֆնղիչներին:

Չաջորղ օղն ինձ կանչեցին դուրս: Երկու ղինվորներ սղատում էին ինձ միջանցղում: Նրանց հետ էր ղերմանական ոչխատաղատ մի հսկա տուն: Կարղաղրեցին ձեռքերս ողնել ղխատվերեւ եւ շարժվել միջանցղով: Չետո ատիճաններով բարձրացա երրորղ հարկ եւ ինձ մտրեցին մի սեղայակ: Գրատեղանի մոտ նատած էր բանտաղետը՝ մայրղի ուտաղիղներով մի ղուս սղա: Նրա



սենյակում էր գտնվում կառվե վերարկու հագած մի այլ ռուս մայր, երեւի ԲՆԻՅԻՆ էր: Մայրն ինձ հարցրեց, թե ի՞նչ մասնագիտություն ունեն, որսեղացի՞ եմ, որսե՞ղ եմ ինձ ձերբակալել: Ես դասասխանեցի: Մյուս հարցն էր. «Ձե՞նքի հետ գործ ունեցե՞լ ես»: Ինչդէս որոշել էի, բացասական դասասխան սվեցի: Հետո կառվե վերարկուով մայրը հարցրեց, թե ի՞նչ տղայք է գնում Ղարաբաղում, ի՞նչ եք ուզում:

Ես բացատրեցի նրանց, որ Ղարաբաղը հայկական տարածք է եւ 1813թ. Գյուլիստանի դաշմանագրով միացել է Ռուսաստանին: 1921թ. Ասալիմի որոշմամբ հանձնվել է Ադրբեջանին, որն այնտեղ տանում է գաղութային ֆաղափականություն: Նախիջեւանը եւս նույն ձեւով սրվել է ադրբեջանցիներին, որոնք այդ հայկական երկրամասից լիովին վտարել են հայերին: Ուսումնառելու օրը եմ անել Ղարաբաղի հայերի նկատմամբ: Մեր շարժումը, բացատրեցի ես, ժողովրդական շարժում է: Ուզում եմ միանալ Հայաստանին: Դա մեր սահմանադրական իրավունքն է: Մենք հանցագործներ չենք եւ իզուր են մեզ հետ այստեղ վարվում:

Մայրն ասաց, որ ամեն ինչ հասկանալի է: Նա կարգադրեց ինձ տանել բանասխցիկ: Չմոռանամ ասել, որ դա գտնվում էր ներհանարկի ամենածայրում եւ կրում էր 9 համարը:

Գիշերը բաց արեցի խցիկի դռնից կախված երկաթե մահճակալը, որի վրա ոչ ներհանակ կար, ոչ էլ որեւէ ծածկոց: Երկաթե ցանցերն այնքան լայն էին, որ չէի կարողանում դառնալ: Նրանք սասիկ ցավ էին դասճանաչում եւ թույլ չէին տալիս կողմից-կողմից ցրվելու: Բաճկոնս ծալել էի եւ դրել գլխիս տակ, իսկ ամառային թեթեւ վերարկուն գցել էի վրաս: Ձեռնուցման մարտկոց կար խցիկում: Ցերեկը դա սափացվում էր, իսկ գիշերը՝ ոչ: Ցուրտ էր: Չուզարանը ներսն էր՝ վերելում ջրի ծորակով: Ես նախօրոք մի կերպ մաքրեցի դա, որովհետեւ սոսկալի կեղտոտ էր:

Կարծում էի, որ հաջորդ օրն ինձ կկերակրեն: Ոչ ոք չմոռացավ իմ խուցին: Մնացի առանց կերակրի ու տաք ջրի: Առավոտները եւ կեսօրին ֆիզկուլտ վարժություններ էի անում: Գիշերները լսում էի լուսնի հաչոց ու միջանցներով ցրող դասակների ոտնածայրը: Օրական խնամք էի մեկ բաժակ ջուր: Վարժությունները շատ հանգիստ էի անում, որ էներգիա չկորցնեմ: Ծխախոտ կար մոտ, ծխում էի: Չմայած չափազանց սոված էի, բայց ուտել չէի ուզում: Սաւոնոսի ցավեր ունեի, որոնք երբեմն ուժեղանում էին: Այդ ժամանակներից ես սաւոնոսի հիվանդություն ու-

նեցա, որից տառադրում եմ մինչեւ հիմա:

Երբեմն թափում էի դուռը: Գալիս էին դասակները եւ դռան հետեւից հայտնվում ինձ.- «Չայնդ կտրի, շուն,- ասում էին նրանք,- մեր գինվորներին սղանել են Բափում, իսկ մենք կգնդակահարենք քեզ»:

Հինգերորդ օրը, երբ արդեն ուժաստանված էի, լսեցի երկաթե անիվներով սայլակի ձայնը, որով կերակուր էին բաժանում բանասարկյալներին: Սկսեցի թակել դուռը: Մի երիտասարդ տղա, կլինե՞ր 20 տարեկան, մոտեցավ ու բացեց դռան վրա եղած փոփոխ դասուհանը: Նա նույնպես կալանավոր էր, երեւի լավ էր դասուհան իրեն, ուստի վստահել էին նրան կերակուր բաժանելու գործը: Նա հարցրեց ազգանունս եւ որսեղացի լինելու: Նա նայեց սվարաթղթի վրա գրված ինչ-որ ցուցակ, որ իմ անունը չկա եւ ինձ կերակուր չի հասնում: Նա անմիջապես փակեց դասուհանը:

Ուրեմն որոշել եմ ինձ սովամահ անել: Մի՞թե այստեղ եմ վերջացնելու կյանքս: Նստել էի երկաթե մահճակալի վրա եւ ուժ չուների այլեւս շարժվելու:

## ԱՆՍՊԱՍԵԼԻ ՕԳԵՈՒԹՅՈՒՆ

Կես ժամ անց կերակուր բաժանող այդ կալանավորը նորից եկավ եւ դասուհանից ներս գցեց մի թղթի կտոր եւ մասիտ: Ասաց, որ շատ դասասխան գրի ու տուր: Թղթի վրա ռուսերեն գրված էր.«Որսեղացի՞ ես եւ ինչու՞ ես բռնվել: Ռաֆիկ»:

Ես գրեցի. «Ստեփանակերտցի եմ, բռնվել եմ Ղարաբաղը Հայաստանի հետ միացնելու դաշմանի դասճանաչով, Ռազմիկ Պետրոսյան»:

Թուրքը սվեցի այդ տղային ու նա գնաց: Անցավ շուրջ 30 րոպե, երբ նա կրկին մոտեցավ դռան: Նա բաց արեց դասուհանը եւ լրագրի մեջ փաթեթված մի կաղոց նետեց ներս: Դա մեջ դարձյալ հաց կար, դեղեկներ, շաքար եւ ծխախոտ: Վրան գրված էր.«Ռուբիկ, Թիլիսիից»:

Նույն գիշերը ինձ ուղարկեցին մի ուրիշ փաթեթ. մեջը գաթա կար, խոզի ճարձ, սիգարետներ եւ շաքար: Թղթի կտորի վրա գրված էր «Արթուր, Սոչիից»:

Հուզումներ դասել էր ինձ: Հայրենակիցներ ունեի բանում,



որոնք գիտեին մեր դայաբարի մասին եւ ձգտում էին օգտակար լինել ինձ: Չգու՛մ էի, որ նրանք չէին թողնի ինձ սովամահ անել: Կուզե՛նայի ժեսնել նրանց, հայտնել երախտագիտութիւնս, բայց դա անկարելի էր: Այդպէս էլ նրանցից ոչ մեկին ես չսեսա:

Վեցերորդ օրը դուռս բացեցին: Երկու հոգով էին: Խուզարկեցին ինձ եւ հարցրեցին.«Ձրոսնել ուզու՞մ ես»: Բնական է, որ դրական դատաստան սվեցի: Նրանք ասացին. «Պատասխանիր»:

Հագա վերարկուս եւ նրանց հետ դուրս եկա: Երկաթե ասփճաններով բարձրացրեցին չորրորդ հարկ: Տանիքի վրա բարձր դասերով, ասֆալտադաս մի սենյակ կար, որի տանիքի փոխարեն ցանց էր անցկացրած: Այնտեղից երեւում էր երկինքը: Ուրիշ կալանավորներ էլ կային: Ես ֆայլում էի, վազում, վարժութիւններ անում: Կողքի նմանատիպ սենյակներից ձայներ էին գալիս: Հետո հերթադասը, որը շեկ մազերով մի ավագ լեյտենանտ էր, բոլորին տարավ խցերը: Ես մենակ էի մնացել: Նա բաց արեց դուռը եւ ներս մտավ, հարցրեց, թե որտեղա՞ցի եմ: Պատասխանեցի՝ հայ եմ: Պարզվեց, որ ինքն էլ հայ է, չնայած ռուսի էր նման: Երեւի մայրը ռուս էր:

Նա ինձ հայտնեց, որ իմ մասին լսել է Ռաֆիկից: Ինքը Կիրովաբադի Թագաշենից է: Հարցրեց, թե ի՞նչ եմ ուզում: Տվեցի եղբորս՝ Չարմիկի հեռախոսի համարը եւ խնդրեցի զանգել ու ասել, որ զգնվում եմ Կրասնոդարի բանտում:

Նա նորից ինձ տարավ իմ բանտատուը, դատավիճեց մեր խոսակցության մասին ոչ մեկին չասել:

Մի ֆանի օր նա չերեւաց: Ռաֆիկը եւ մյուս հայ տղաները ցարունակում էին ուսելիք ուղարկել ինձ:

Բանտային կերակուր ինձ սվեցին միայն 7-րդ օրը: Անհամ ու ջրիկ բորե էր: Հացը լավ թխված չէր: Ուսելուց առաջ ես այն չորացնում էի ջեռուցման մարկոցի վրա: Ուտում էի հիմնականում այն, ինչ ուղարկում էին Ռաֆիկն ու մյուս տղաները:

Ինձ կերակրելու իրավունք սալուց երեք օր անց կրկին եկավ շիկահեր հայ տղան մի ռուս ավագի հետ եւ ինձ տարավ գրոսանի: Վերելում նա սվեց ինձ մի թղթի կտոր: Իսկույն ճանաչեցի երեւանում ադրոզ եղբորս՝ Չարմիկի ձեռագիրը: Նա գրում էր, որ բոլորը լավ են, չվախենաս այդ տղայից, գրի ինչ դեպ է: Գրեցի դատաստան, որ ես ոչ մի բան չեմ իմանում, մարզադասում ոչինչ չեմ ունեցել: Շիկահերը գնաց եւ ինձ կրկին տարավ իմ խուցը:

10 օր անց ստացա եղբորս ուղարկած ծանոցը՝ մեջը սղորտային կոստյում, հաց, դախսիմաս, շաքար եւ շաքարեւոտներ: 20-ամյա կալանավոր տղայի միջոցով դրանցից բաժին հանցի Ռաբիդին, Ռաֆիկին, Ռուբիկին, Արթուրին, իսկ մի մասն էլ դաշտեցի ինձ: Այդ ամենն ինձ հանձնելու համար Չարմիկը սվել էր երկու շիշ հայկական կոնյակ: Նույն տղայից իմացա, որ Չարմիկը մեկնելու է Կրասնոդարից եւ կվերադառնա մի ֆանի օր անց:

Ես այդպէս էլ չիմացա, թե ո՞վ է զանգել եղբորս՝ ինքնաթիռի մեջ հանդիմանալու օս սերժանտը, թե՞ շիկահեր հայը: Չանգահարողը ասել էր միայն հետեւյալը. «Քո եղբայրը զգնվում է Կրասնոդարում»:

Շուրջ երկու օրաթ էր կեղտերի մեջ էինք թե՛ ես, թե՛ Ռաբիդը, որի հետ նամակագրական կապ էի հաստատել 20-ամյա կալանավորի միջոցով՝ սալով նրան մի ֆանի տուփ սիգարետ: Մեզ տարան բաղնիք: Ռաբիդի հետ միասին էինք: Հետո մեզ տարան լուսանկարելու: Նկարեցին դիմացից եւ երկու կողմից: Վերցրեցին մեր մասնահետքերը:

Ռաֆիկի մասին իմացա հետեւյալը. նա աշխատելիս է եղել Կրասնոդարի մի ռեստորանում որդես բուֆետային: Մի օր մի ֆանի «լավ տղաներ» եկել էին ռեստորան, կերել էին, խմել եւ երբ Ռաֆիկը դաշտանցել էր փողը, բռնել էին նրան եւ մի լավ ծեծել: Նրա գլուխը ջարդել էին: Պատշտանվելու ժամանակ Ռաֆիկը դանակահարել էր նրանց: Երկուսը մահացել էին, իսկ երրորդը՝ վիրավորվել: Ռաֆիկին դատարարել էին 10 տարվա ազատազրկման: Նա բողոքարկել էր դատարանի վճիռը եւ դատաստանի էր սղատում: Նրա ծնողները եվախցիներ էին: Ես ժեսնում էի, որ Ռաֆիկը արտակարգ հարգանք էր վայելում բանտում: Նրա խոսքն օրեց օր ոչ միայն կալանավորների, այլեւ հսկող զինվորների ու սղաների համար:

Ես այդպէս էլ չիմացա, թե ինչն էր էին կալանավորվել Ռուբիկը եւ Արթուրը:

14 թե 15-րդ օրը ինձ խուզարկելու եկավ մի ադրբեջանցի, որը ծնունդով Քյուրդանիից էր: Նա ասում էր, որ Ղարաբադի հայերը մեղավոր են, կոստում են ադրբեջանցիներին: Նա թույլ չէր տալիս, որ ինձ որեւէ բան ուղարկեն:

16-րդ օրը երեկոյան ժամը 11-ին նա եկավ ինձ մոտ եւ կարգադրեց, որ հավաքեմ իրերս: Միայն մի ֆիջ չորացած հացի կտոր ունեի մոտս, դրեցի գրողանս ու գնացի նրա առջեւից: Նա ինձ գցեց մի խուց, որի մեջ կային երեք կալանավորներ: Պարզվեց, որ



դրանք արվանդներ էին: Նրանց լոխրե տեսքը, անսովոր առաջարկությունները նողկանք առաջացրեցին իմ մեջ: Ես սկսեցի ծեծել նրանց: Բարձր ձայնով հայհոյում էի աղբբեջանցի զինվորին, որն ինձ այդ խուցն էր մտնել: Իմ ձայնն իր խուցում լսել էր Ռաֆիկը, մոտ էր կանչել ազերի զինվորին և հայտնել, որ նրա գլուխը կտրել կտա, եթե Պետրոսյանին անմիջապես չհանի այդ խուցից:

Կես ժամ անց եկավ աղբբեջանցի զինվորը և ինձ կրկին տեղափոխեց իմ խուցը: Նա ասում էր, որ ինձ իբր ուզել է լավություն անել:

Գիշերը ինձ, Ռաֆիկին և էլի 20 հոգու, մեծ մասամբ ռուսներ, վրացիներ և հյուսիսային Կովկասի մարդիկ, դուրս հանեցին բանտի սակ, մտնեցին «սեւ ազոսով» մեջ և տարան կայարան: Հարցնում էինք, թե ու՞ր են տանում, չէին պատասխանում:

## ՆՈՎՈՉԵՐԿԱՍԿԻ ԲԱՆՏՈՒՄ

Գնացի վագոնում մենք մնացինք 24 ժամ և այդ ընթացքում մեզ չկերակրեցին: Երբ տեղ հասանք, դարձվեց, որ մեզ բերել են Արմավիր: Նորից մտնեցին «սեւ ազոսով» մեջ և հասանք Արմավիրի բանտը: Ռաֆիկին և ինձ մի բանտախուց մտնեցին: Երեք օր մնացինք այնտեղ:

Ինչպես դայանավորվել էինք, Ռաֆիկն ամեն բան ժխտել էր:

Երբ թուրքերը «վրա սվեցին»՝ հարձակվեցին եւ գյուղի վրա կրակ էին բացել ականանեսներից ու թնդանոթներից, մերոնք դարձյալ առավոտները, եթե դահակակետում չէին, վարժություններ էին անում:

## ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՆՔ ՄՈԽՐԱԹԱՂԸ

Մենք զբաղեցնում էինք Մոխրաթաղ գյուղի մոտ գտնվող հեռուստատեսության աշարակի առջեւի խրամասներն ու դիտակետերը: Ունեինք չորս դիրք:

Առավոտ շաբ թեմամին սկսեց ըմբակոծել մեր դիրքերը: Ռումբերն ընկնում էին նաեւ գյուղի վրա: Մենք շաբին հայտնեցինք, որ թուրքերը կրակում են հեռուստատեսության սարի հետեւի կողմից: Մեր հրետանին կրակ բացեց այդ ուղղությամբ: Մերոնք համազարկեր էին տալիս «Գրադներով» եւ թնդանոթներով: Զգացվում էր, որ նրանք խնայում էին արկերը, բայց թուրքերի մոտ դրանք երեւի շաբ առատ էին, որովհետեւ կրակում էին անդադար: Մենք դառնված էինք դիրքերում եւ սղասում էինք թեմանու հարձակմանը:

Մեզ մոտ, գյուղի ետամասում, մի տանկ ունեինք, որը լավ ֆողարկված էր, ֆանի որ թեմանու ուղղաթիռներ էին հայտնվում եւ ըմբակոծում վերեւից: Այդ տանկի թնդանոթը շրջված էր թեմանու դիրքերի ուղղությամբ եւ նա ժամանակ առ ժամանակ արկեր էր ուղարկում նրանց վրա: Տանկի հրամանատարը Գրիգորն էր, որը վերադառնալիս վիրավորվեց տանկի լյուկն իր վրա ընկնելու դաժնով:

Երրորդ օրը նրանց կողմից տարժվեց (S-72) մակնիճի մի տանկ: Մեր տանկը, որը լավ դիրքերում էր, ուղիղ նշանառությամբ խփեց այդ տանկին:

Թեմանու տանկը բոցավառվեց: Թուրքերը, նոր զոհեր տալով (շուրջ 15 հոգի), կրկին դիմեցին փախուստի: Դրանից հետո հրետակոծությունն ավելի ուժեղացավ: Հասկադես զգացվում էր 120 միլիմետրանոց ականանեսների կրակի ուժը: Մենք խրամասներից դուրս չէինք գալիս: Մերթընդմերթ հեռադիտակներով մայրում էինք թեմանու կողմը:

Հրետակոծության ադմուկն, ռումբերի եւ հրթիռների թռիչքի ժամանակ արձակած սուլոցը, նրանց դաժնությունների ահավոր դողոցը սկզբում շաբ ծանր ազդեցություն էին ունենում հասկադես մարտական փորձ չունեցող տղաների վրա: Բայց ես չէի սեսնում խիստ վախեցած կամ ահաբեկված դեմքեր: Մի ֆանի օր անց նրանք վարժվեցին այդ անեմին եւ երբ լսվում էր ականանեսներից արձակված ականների սուլոցը, միայն այդ ժամանակ նրանք թաքնվում էին խրամասների մեջ:



Մեկ շաբաթ սեւած անօգուտ ռմբակոծություններից եւ հարձակումներից հետո, երբ շատ զոհեր էին սպել, թուրքերը փոխեցին հարձակման ուղղությունը եւ իրենց «Գրադները» եւ սանկերն ուղղեցին Մաղավուզ գյուղի կողմը: Շուտով Մաղավուզում սկսեցին տայթել թեմանու ռումբերն ու ականները:

## ՀԱՐՁԱԿՈՒՄ ՄԱՂԱՎՈՒԶԻ ՎՐԱ

Ուացիայով մենք շաբաթն հայտնեցինք, որ թուրքերը ուզում են զրոհել Մաղավուզի վրա: Սեյրանը բաց սեֆսով հրաման սպեց Մաղավուզին, որ ուժեղացնեն դաժադանությունը, քանի որ հարձակում է սղասվում:

Մաղավուզը դաժադանող ջոկատի հրամանատարը ինքնավստահ տնով հայտնեց, թե թող գան, հետո էլ իրենք կսկսեն իրենց հարձակումը:

Երբ թուրքերը սկսեցին հարձակումը, զգացվեց, որ նրանք շատ մեծ ուժեր են կենտրոնացրել այդ գյուղի վրա, ուստի Սեյրանը հրաման սպեց, որ Գիրոն եւ ես նռնականեցները սեղադրենք Մաղավուզի կողմը: Մենք սեղադրեցինք հինգ նռնականեց (3-ը Գիրոն, 2-ը ես), եւ զեկուցեցինք, որ դասրաս ենք եւ թույլ չենք տա, որ մեր կողմով տանկեր անցնեն:

Երբ հարձակվում էին Մաղավուզի վրա, ազերիների հրետանին կրակում էր նաեւ մեր ուղղությամբ՝ մեր հնարավոր սեղաշարժերը կանխելու համար: Մաղավուզի տղաները լավ էին դաժադանվում, բայց չէին նկատում թուրքերի մանյովները, որոնք կռվի ընթացքում հետեւակ էին ուղարկել գյուղի մոտ զսնվող գերեզմանասան կողմը եւ ձգում էին շաղախեղ Մաղավուզի դաժադաններին:

Հեռադիտակով մենք տեսնում էինք ամեն բան եւ «Բասմաչ» կոչված ռացիայի միջոցով, բաց սեֆսով զգուշացրեցինք, որ մաղավուզցիներին շաղախում են գերեզմանասան կողմից, թող միջոցներ ձեռք առնեն: Այդ լուրը հայտնվեց մաղավուզցիներին, որոնք կարողացան մեկ օր դիմանալ: Բայց հաջորդ օրը, երբ թուրքերն ավելի ուժեղացրեցին ճնշումը, նրանք թողեցին գյուղը: Այդ մասին մենք չգիտեինք: Տեսնում էինք տայթող ռումբերի արձակած բոցն ու ծուխը, լսում էինք դրանց խլացուցիչ ձայները,

ինչդեռ եւ ավտոմատ հրացանների կրակոցների աղմուկը:

Այդ ժամանակ Գիրոն եկավ իր ջոկատի դիրքերից եւ ինձ հայտնեց, որ հրաման ենք ստացել թողնելու դիրքերը, որովհետեւ Մաղավուզը վերցրել են, իսկ եթե ընկնի նաեւ Մեծ Շենը, աղա մենք կհայտնվենք շաղախում մեջ: Ես իրեն խնդրեցի հաղորդել, որ Մաղավուզը տայթեն, իսկ մենք չենք ուզում լքել դիրքերը եւ տայթանքի դեմքում կարող ենք օգնել նրանց: Թող օգնություն ուղարկեն Մաղավուզին: Իմ դասասխանը հաղորդվեց: Բայց հավանության չարժանացավ:

«Ձիլ»-ի եւ «Մոսկվիչ»-ի վարորդները եկել էին ինձ մոտ եւ ուզում էին հեռացնել մեքենաները, որ հնարավոր նահանջի դեմքում նրանք չմնային թուրքերին: «Մոսկվիչի» վարորդ Վալերիկին (Շոշին), որին խոհարար էի նշանակել (ի դեմք, նա շատ համեղ ճաշեր էր դասրասում), հարցրեցի, թե եփե՞լ է ճաշը: Նա դասասխանեց, որ հավով փլավ է եփել:

Պե՛տ է ասեմ, որ Մոխրաթաղ գյուղի տները լեցուն էին ամեն ինչով՝ կահույք, անկողիներ, ամանեղեն: Բակերում մնացել էին շատ կենդանիներ՝ հասկաղես խոզեր եւ հավեր: Այնտեղ մնացել էր նաեւ «Գազ-66» մի բեռնատար մեքենա, որը թողել էին բեռնահանումը մաղախում: Մեր տղաները ոչ մի բանի ձեռք չէին տալիս: Մեզ կցված տղան աղախում էր մեզ անհրաժեշտ սննդամթերքով:

Ես կարգադրեցի զինամթերքը բարձել բեռնատար մեքենայի՝ «Ձիլի» մեջ, որը մեզ հետ գալու էր, իսկ «Մոսկվիչը» դե՛տ է գնար Մեծ Շենի, Մարտանգի ջրամբարի, Հաթեր գյուղի վրայով եւ գար «Ալեան» սեղամասը:

Երկու ժամ անց ինձ հայտնեցին, որ մենք արդեն դե՛տ է դուրս գանք, քանի որ թուրքերը շարժվում են Մեծ Շենի վրա:

Արդեն մթնել էր: Ձինամթերքը բարձել էինք Ռ. Հայրյանի վարած «Ձիլ» մեքենայի մեջ, բայց քանի որ անձրեւ էր սկսվել, ցեխոտ ճանաղարհով անհնարին էր շարժվելը: Սիոված «Ձիլը» կաղեցինք տանկի հետեւից: Ես ասացի, որ նրանք շարժվեն Մեծ Շենի կողմը, իսկ մենք բարձրացանք Մոխրաթաղի վերելի սարը, որտեղից ոսփի ճանաղարհ կար դեմքի Քասաղես գյուղը:



## ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ ԵՆՔ ՄՈՒՐԱԹԱԿ

Մասիկ հոգնած էինք եւ սոված: Ափսոսում էինք, որ չհասցրեցինք ուսել Շո՛ւի եփած փլավը: Արագ սեմողով բարձրացանք վեր եւ անցել էինք արդեն 5 կմ, երբ մի աղբյուրի մոտ հանգստանալով իմացա, որ ռացիայով ինձ են հարցնում: Արդեն զիճերվա ժամը 12-ն էր: Ես գնացի մի բարձր սեղ եւ կաղվեցի ռսաբի հետ: Այնտեղից Սեյրան Օհանյանն ինձ հայտնեց, որ դե՛ս է կրկին վերադառնալ եւ գրավել Մոխրաթաղը, քանի որ Մաղավուզը դա՛հելու հնարավորություն է ստեղծվել:

Ես հավաքեցի շղաներին եւ դասնեցի այդ խոսակցության մասին: Նրանք գայրացած էին, որովհետեւ մենք կարող էինք դա՛ւսողանել այդ գյուղը, մեզ չթողեցին, իսկ հիմա, երբ հոգնածությունից եւ սովածությունից թուլացել էինք, անձրեւի թակ անցել 5-6 կմ, մեզ կարգադրում են վերադառնալ գյուղը դա՛ւսողանելու: Ես ասացի, որ սրված է հրաման, ուրե՛մն դե՛ս է կասարել: Ես գնում եմ, ով ուզում է, թող գա ինձ հետ:

60-70 հոգուց համաձայնվեցին գալ 12 հոգի: Վերցրեցինք մեր զենքերը եւ ճանադարի ընկանք: Վերադարձը ավելի դյուրին էր, քանի որ զառիթափ էր, բայց մենք դժվարությամբ էինք շարժվում: Առավոտյան ժամը 4-ին հասանք Մոխրաթաղ գյուղի վերին մասը: Սդասում էինք, որ իմանանք, թե թուրքերն արդյո՞ք մե՛ն էն գյուղ, թե ոչ:

Կես ժամ չէր անցել, հանկարծ սեսանք, որ մեր ջոկատի մնացած շղաները եկան եւ միացան մեզ: Նրանք խիստ հոգնածության դասճառով չուզեցին գալ, բայց երբ մենք հեռացել էինք, չէին դիմացել, միահամուռ որո՛ւել էին հասնել մեզ: Ինչ խոսք, շղաների այդօրինակ վարմունքը մեզ նոր լիցք հաղորդեց, որո՛ւեցինք հարձակվել գյուղի վրա, եթե այն գրավված է ազերիների կողմից:

Գյուղի վիճակը դարձելու համար ուղարկեցի 4 հետախույզների: Մեկ ժամ անց նրանք վերադարձան եւ զեկուցեցին, որ գյուղի ներքեւի մասում տեսել են մի գրահատաս մե՛քենա եւ 30-ի չափ թուրք զինվորների:

30 հոգու 2 նռնականերով եւ գնդացիով ուղարկեցի գյուղի ներքեւի մասը, որդեսգի հանկարծակի խփեն մե՛քենային եւ «ուռա՛» գոռալով հարձակվեն թուրքերի վրա:

Ես վախենում էի, որ թուրքերը Մաղավուզից մոտեցած կլիանն Մոխրաթաղ-Սե՛ծ Շեն ճանադարիին, ուստի ջոկատի հիմ-

նական մասով, Երջանցելով Մոխրաթաղը, գնացի դե՛տի մեր նախկին դիրքերը: Մեզ հետ էին նաեւ Վլադիմիրի ջոկատի շղաները: Այսպիսով մենք Երջանցած կլիանեինք Մոխրաթաղ մնած թուրքերին:

Մենք դայնանավորվել էինք, որ մեր 20 շղաները հարձակվեն այն ժամանակ, երբ մենք Երջանցած կլիանեինք Մոխրաթաղը: Ռացիայով խոսեցինք: Իմացանք, որ նրանք սենրի արանով մե՛ն են Մոխրաթաղ եւ հակառակորդից զսմվում են Եուրջ 100-120 մե՛ր հեռավորության վրա:

Հրաման սվեցի, որ հարձակվեն: Սկզբում լսեցինք նռնականերից արձակված նռնակների դայթյունների, աղա գնդացրի եւ ավսոմաս հրացանների կրակոցների ձայները: «Ուռա՛», բացականչություններով շղաները հարձակվել էին թե՛նամու վրա: Թուրքերի կեսն այն ժամանակ քնած էր եղել, իսկ մյուսները՝ մտած են եղել հետեւակի մարտական մե՛քենայի վրա: Նրանք ահաբեկված փախել էին, թալով 14 զոհ: Մերոնցից ոչ մեկը չսողանվեց, նույնիսկ վիրավորներ չունեցանք: Խուճաղոն այնքան մե՛ծ էր եղել, որ թուրքերը չէին հասցրել նույնիսկ կրակել: Նրանք սկսեցին կրակել, երբ արդեն գյուղից դուրս էին եկել: Նրանք փախչում էին եւ օդում կրակում: «ԲՄՊ»-ն նրանք թողել էին գյուղում, բայց դա արդեն խփված էր:

Մենք ռսաղ մսանք մեր հին դիրքերը եւ սկսեցինք նայել Մաղավուզի կողմը, որտեղից կրակոցները դե՛ս չէին դադարել: Ես մարդ ուղարկեցի իմանալու, թե փլավը մնացե՞լ է, թե՞ ընկել է թուրքերի ձեռքը: Պարզվեց, որ թուրքերը դե՛ս չէին հասել այդ տանը: Փլավը վաղուց եփված էր: Ես շղաներին հերթով (4-ական հոգով) ուղարկում էի ճա՛ւելու: Հետո էլ մենք գնացինք, կերանք փլավը եւ վերադարձանք:

Աղմուկից մենք հասկացանք, որ մեր երկու տանկերը կրակելով մե՛ն են Մաղավուզ: Հետո իմացանք, որ դրանք Յուրա Յովհաննիսյանի տանկերն են եղել, բերված Քելբաջարի գծից: Մաղավուզում մերոնք սվել էին 19 զոհ եւ տանկերը գյուղն էին ներխուժել նրանց դիակները բերելու համար: Մեր կրկին մուտքը Մոխրաթաղ նդատակ ուներ թույլ չժալ, որ թուրքերը կարողանային Մոխրաթաղի կողմից Երջանցել Մաղավուզը:



## ՄԵԾ ՇԵՆԻ ԱՆՏԱՌՈՒՄ

Ցերեկվա ժամը 11-ին հրաման ստացանք հեռանալ Մոխրաբաղից դեղի Մեծ Շեն: Մեր սանկերը գալիս էին եւ Յուրա Յովհաննիսյանը դասնեց մեզ Մաղավուզի անհաջողության մասին:

Երբ հասանք Մեծ Շենի անտառը, ինձ կանչեցին Սեյրան Օհանյանի մոտ: Նա փարսեզի վրա ցույց տվեց Մեծ Շենի անտառում մի սեղանի եւ ասաց, որ այնտեղ դեռ է դիրավորվել եւ կանգնեցնել թուրքերի առաջխաղացումը, այլապես վստահավոր դրության մեջ կհայտնվի Ղարաբաղի հյուսիսային մասը: Նա կանչեց բոլոր ջոկատների հրամանատարներին եւ ասաց, որ եթե թուրքերը հասնեն Մարտակերտ-Քելբաջար ճանապարհին, ադա Քսաթասում եւ Ներին Յոռաբաղի մոտակայքում զսնվող ջոկատը, որի հրամանատարը Սամվել Կարադեյանն էր, կհայտնվի Երջադասում մեջ: Մենք դեռ է 3-4 կմ երկարությամբ դիրքեր գրավեցինք եւ արգելակեցինք թուրքերի Երջադասումը: Այդ դաստիարակյալ զորքի հրամանատար նշանակեց ինձ:

Ես իսկույն կանչեցի զոհերին, բացատրեցի կացությունը եւ սկսեցինք դիրավորվել: Գրեթե վիրավորված էր եւ սանկի մեջ մնացել էին միայն մեխանիկը եւ նշանառու Յամիկը: Վերջինս դարձել էր սանկի հրամանատար: Նա Երեւանից էր, որովհետեւ իսկական ինստիտուտի ուսանող:

Ռաֆիկ Յայրյանի (Շոշի) գլխավորությամբ խոհանոցը ուղարկեցինք 500 մետր եւ սղաները սկսեցին կերակուր դաստիարակել: Սեյրանը մեզ հրաժեշտ տվեց խնդրելով ամեն զնով դառնել դիրքերը: Խոստացավ օգնություն ուղարկել: Մենք դիրավորվեցինք:

Թուրքերն ամեն օր «Գրադ»-ներից, որոնք սեղադրված էին 3 արբեր կետերում, ռմբակոծում էին մեզ: Նրանք կրակում էին Աղաբաղից, Մաղավուզի կողմից եւ Փափոզվեղից: Կրակում էին նաեւ թնդանոթներից: Գալիս էին նաեւ նրանց իմնաթիռներն ու ուղղաթիռները: Ռումբեր էին նետում, բայց ֆանի որ մենք անտառի մեջ էինք եւ լավ ֆողարկված, այդ ռմբակոծությունները մեզ վնաս չէին հասցնում:

Սկզբում մեծ բարձրության վրա գալիս էր հետախույզ իմնաթիռը, կես կամ մեկ ժամ անց գալիս էին ռմբակոծիչները: Նրանք ռումբեր էին գցում ճակատի ամբողջ երկարությամբ:

Ինչպես ասացի, մեր դիրքը խիստ կարեւոր էր Քսաթասում

զսնվող Սամվել Կարադեյանի ջոկատի անվտանգության համար: Նրանից աջ, Գյուլաթաղ գյուղի մոտ դիրավորվել էր Նորիկը, որը հետագայում դարձավ Մարտակերտի դաստիարակության դեկավարը: Զինգաթաղում դիրավորվել էր Առոս Ղուլյանի (Բեկորի) ջոկատը: Այս բոլոր հրամանատարները, երբ ռազմային կամ սուրհանդակների միջով կաղ էին հաստատում ինձ հետ, հայտնում էին, որ եթե մենք նահանջենք, ադա իրենք անդաման Երջադասում մեջ կընկնեն: Ուստի եթե այնպես դաստիարակ, որ մենք, այնուամենայնիվ, հարկադրված լինենք եւ փախչել, ադա այդ դեղում դեռ է գոնե մեկ ժամ առաջ սեղակ դառնալու իրենք:

Մեր դիրքը դաստիարակում էին իմ ջոկատը, Վլադիմիրի ջոկատը, որը դեկավարում էր Գիրոն, եւ Սեփանակերտից եկած հետախույզների 12 հոգուց բաղկացած խումբը:

Զինամթերք ունենալով, սանկը մեզ հետ էր, զոհները մարտակառուցում էին սրամադրված եւ վճռել էինք եւ Երջադասում, իսկ հնարավորության դեղում՝ առաջ գնալ:

## ԳՐՈՂ ՄԵՐ ԴԻՐՔԵՐԻ ՎՐԱ

Թուրքերը հարձակում սկսեցին մեր դիրքերի վրա: Ինչպես միշտ սկզբում եկան իմնաթիռները: Ռմբակոծեցին եւ եւ գնացին, հետո սկսվեց հրետանային նախադասությունը: Երբ նոր էին լռել հակառակորդի թնդանոթների արկերի դաստիարակները, լսեցինք գրախաղացիկային Երջադասումից հռնդումը:

Գիրոն եւ ես վազում էինք դիրքերով եւ զոհներին զգուցանում, որ չկրակեն, թույլ տան, որ թեմանու սեխնիկան հայտնվի մեզ համար հարմար սեղում: Բացի այդ, մենք չդեռ է թույլ տալիս, որ նրանք ճշտեն իմնային մեր սեղը:

Թուրքերն ուղարկել էին հետախույզական ջոկատ, որը դիրավորվել էր մեզանից Երջա 200 մետր հեռավորության վրա: Այդ ջոկատի ասկյարները նոնականեներից, գնդացից եւ ավտոմատ հրացաններից կրակ բացեցին մեր դիրքերի ուղղությամբ:

Տղաներին զգուցացրել էինք, որ չկրակեն, ֆանի դեռ թեմանուն որոշակիորեն չեն սեսել: Այդ ժամանակ մերոնք սկսեցին կրակել եւ ես հասկացա, որ նրանք սեսել են թեմանուն: Սոսկալի դղրոց ընկավ: Երկուստեք կրակում էին զենքի բոլոր սեսակ-



ներից: Ես Համիկին հրաման սվեցի, որ նա սանկը սեղից չբարձի եւ կրակ բաց անի սանկային հզոր գնդացրից: Նա սկսեց կրակել:

Մարտը բարունակվում էր 30 բողե, երբ լսեցինք հակառակորդի մոտեցող սանկերի բարձիչների աղմուկը: Անտառը շատ խիտ էր, մեր սեսադաճքը ընդամենը 70-80 մետր էր: Գիրոյի հետ դայմանավորվեցինք, որ սեղներիցս չենք բարձվելու: Հրաման սվեցինք դասառասել նռնականեցները եւ հակասանկային նռնակները: Իմ մոտ 2 նռնականեց կար, Գիրոն ուներ մեկ հաս: Հանկարծ շուրջ 80 մետր հեռավորության վրա, մեր դիմաց, միմյանցից 50-60 մետր հեռավորությամբ հայտնվեցին թուրքերի 6 սանկեր եւ թրթուրավոր զրահադաս մեքենաներ: Նրանք բոլորը կրակում էին մեր ուղղությամբ:

Երբ երեւացին ազերիների սանկերը, մեր զոհներից մի քանիսի մոտ խուճաղ սկսվեց: Աջ ու ձախ կողմից մի քանի հոգի սկսեցին փախչել: Գիրոն եւ ես սկսեցինք ավտոմատներից կրակել օդը, նրանց զլխավերելը: Նրանք իսկույն կանգնեցին, մենք հրամայեցինք ետ վերադառնալ:

Գիրոն վերցրեց նռնականեցը եւ շատեց իր զոհների մոտ հնարավոր նահանջը կանխելու համար:

Մի քանի բողե անց մի ուժեղ դայթյուն եղավ մեր առջեւ: Հասկացանք, որ թեմամու սանկը դայթել էր դրած հակասանկային արկերից մեկի վրա: Նռնականեցներով կրակ բացեցինք մյուս սանկերի վրա: Գիրոն խփեց մեկ հետեւակի մարտական մեքենա «ԲՄՊ», որը մեխվեց սեղում: Մեքենայի մեջ եղած դեսանտային խումբը սկսեց ցատկել մեքենայի վրայից, բայց ընկավ մեր զոհների կրակոցների տակ: Բոլորը սղանվեցին: Բայց մյուս սանկերը առաջ էին բարձվում:

Ես կրակում էի 2 նռնականեցներով: Ծառի տակ չոքել էի, նռնականեցը դրել էի ուսիս: Երբ կրակում էի եւ նռնակը թռչում էր դեղի թեմամին, վերցնում էի հաջորդը, որը մեր զոհներն արդեն լցրած էին լինում: Խփեցի մի սանկ, որը բոցավառվեց:

Վեց զրահաեթնիկայից թեմամին կորցրել էր երեքը, բայց մյուսները դեռ առաջ էին բարձվում: Նրանցից մեկը եկավ մեր բողարկված սանկի դիմաց: Մեր սանկի բարձիչներն աշխատում էին: Նրա թնդանոթն ուղղվեց թուրքերի թրթուրավոր զրահադաս մեքենայի կողմը, որի հետեւից գալիս էր հետեւակը: Մեր սանկը, որի հրամանատարը Համիկն էր, բողարկված էր կտրված ծառերի ճյուղերով եւ աննկատելի էր թեմամու համար: Մնացել էր շուրջ 40 մետր, երբ հանկարծ որոնաց մեր սանկի թնդանո-

թը: Մենք սեսանք, թե ինչդեպ թեմամու դայթող մեքենայի վրա եղած մարդկանց մարմինները ցրվել էին օդում:

Թեմամու խփված սանկերը վառվում էին մեքենից ոչ այնքան հեռու տարածության վրա (40-60 մետր): Հանկարծ նրանց մեջ եղած զինամթերքը սկսեց դայթել: Մենք թաքնվեցինք, որ դայթող արկերի բեկորները մեզ չհասնեն: Պառկած սեղից սեսանք, որ ադրբեջանական մյուս 2 սանկերի անձնակազմերը լրեցին իրենց մեքենաները եւ փախուստի դիմեցին: Մեր զոհները ոչնչացրեցին նրանցից մի քանիսին:

Կռիվը սեւեց շուրջ երկու եւ կես ժամ: Թեմամին նահանջել էր: Արդեն մթնում էր: Մենք դառնել էինք մեր դիրքերում եւ նայում էինք, թե ինչդեպ էր վառվում թեմամու զրահաեթնիկան: Տղաներն ուզում էին մոտենալ խփված սանկերին՝ գեներալ բերելու համար, բայց ես չթողեցի: Տղաներից մի քանիսը գեներալներին եւ հույս ունեին, որ սղանված ազերիների դիակների մոտ հրացաններ կգտնեն: Ամբողջ գիշեր դիրքավորված վիճակում մենք հետեւում էինք վառվող սանկերին, որոնց մեջ եղած փամփուլեցներն ու արկերը մերթընդմեք դայթում էին:

Առավոտյան 15 հոգով շոթա սված ծառերի արանով բարձվեցինք սանկերի կողմը: Անընդհատ կրակում էինք սանկերի ուղղությամբ: Ենթադրում էինք, որ թուրքերը կարող էին այնտեղ դարձնակալել եւ վնասել մեզ: 200 մետր առաջ գնացինք, դիրքավորվելուց հետո սկսեցինք հավաքել ռազմավարը: Մենք հավաքեցինք 20 ավտոմատ հրացան, որոնցից մի քանիսը սվեցինք գեներալներին, իսկ մնացածը՝ Յուրա Հովհաննիսյանին, որը եկել էր սեսնելու խփված սանկերը: Շատ հաճելի եղավ նրա բացականչությունը՝ «Ա՛յ, սա դաճաղանություն է»:

Մարտադաճքն թուրքերը թողել էին երկու հետեւակի մարտական մեքենա լրիվ սարքին վիճակում: Տեսնելով, որ սանկերը խփվել են, նրանց անձնակազմերը վախենալով, որ իրենք էլ կխփվեն կանգնեցրել էին մեքենաները եւ նրանց մեջ եղած զինվորների հետ փախուստի դիմել: Բայց շատ հեռու չէին կարողացել գնալ, որովհետեւ զրահադաս այդ մեքենաներից ոչ հեռու տարբեր դիրքերով փռված էին նրանց դիակները: Մեքենաների թնդանոթները, գնդացիրները եւ ռազմամթերքը միանգամայն անվնաս վիճակում էին: Մեքենաներից մեկը ես սվեցի վաղիմի-րի ջոկատին, մյուսը դառնեցի մեզ: Նրա դեկի մոտ նստեց մասնագիտությամբ տրակտորիս Ռաֆիկը, որը մեքենան փեց մեր



թիկունքը շուրջ 500 մետր հեռավորության վրա:

Հոգնածությունից տղաները հազիվ էին ոտքի վրա մնում, նաեւ սոված էին: Ունեին 5 վիրավոր, որոնց մասին ռացիայով հայտնեցի Ասլանի փրկարարների խմբին: Շուտով եկավ Վալերի Զավադյանն իր ընկերների հետ եւ վիրավորներին փոխադրեց դաժասային հոսպիտալ:

Պետք էր կերակրել տղաներին: Շուտով եւ Հայրյան Ռաֆիկը, մոտ կես կիլոմետր հեռավորության վրա, մեր թիկունքում էին: Երբ նրանք հայտնեցին, որ ճաշը դատարար է, ես ընտրությամբ մի ֆանիսին ուղարկեցի ճաշելու, իսկ մյուսները մնացին դիրեկտորում: Երբ վերադարձան նրանք, ես ուղարկեցի մյուսներին: Բայց բոլորը չկարողացան գնալ: Այնքան հոգնած էին, որ խրամասներից չէին կարողանում դուրս գալ: Ես մնացի նրանց հետ: Տղաս Գագիկը, որը արդեն իմ ջոկատում էր, թերմոսի մեջ լցրած բերեց մեր ճաշը եւ մենք դիրեկտի մեջ սկսեցինք ճաշել:

Կռիվների ժամանակ ջոկատների մեծ մասը բավարարվում էր չոր սննդով, բայց մեզ մոտ այնպես էին կազմակերպել, որ օրվա մեջ ազատամարտիկները գոնե մեկ անգամ չափ եւ սննդորար կերակուր էին ստանում: Շուտով եւ Ռաֆիկը համեղ ճաշեր էին եփում: Նրանք տղաներին նույնիսկ չափ թեյ էին հասցնում: Զոկասի անդամների կերակրվելու հարցին շատ կարեւորություն էին տալիս՝ համոզված լինելով, որ սոված զինվորը լավ չի կարողանա կռվել, նա չի դիմանա ահավոր հոգնածությանն ու անվտանգությանը:

Հաջորդ օրը հարեւան սեղանասերից եկավ ազատամարտիկների մի խումբ՝ տեսնելու մեր խփած ու գրաված գրահասեխնիկան: Երբ մենք ռացիայով հայտնել էինք, որ «6 հաս ղողոճ են թխալ» (ղողոճ՝ որ նշանակում է բլոճ կամ խավարասեր, մենք դաժանակամորտն անվանում էինք սանկերին) մեզ այնքան էլ չէին հավաստեցել: Դա 1992 թվականն էր եւ առաջին անգամ էր, որ թեմանին միանգամից այդքան գրահասեխնիկա էր կորցնում:

Գալիս էին տղաները, նայում եւ համոզվում, որ իրենք էլ կարող են նույնը անել:

Հաջորդ օրը ինձ կանչեցին Մարտակերտի դաժասայնության շտաբ: Սեյրան Օհանյանը մեկ օրով մեկնել էր Ստեփանակերտ, նրան փոխարինում էր գնդապետ Ֆելիքսը: Եկել էր Ղարաբաղի դաժասայնության կոմիտեի նախագահի սեղակալ Սամվել Բա-

բայանը (այժմ գեներալ-լեյտենանտ Ս. Բաբայանը ԼՂՀ դաժասայնության նախարարն է), որը անց էր կացնում խորհրդակցությունը:

Նա շուտով հայտնեց մեր տղաներին: Յուրա Հովհաննիսյանն ասաց, որ միայն շուտով հայտնեցինք բան չի լինի, տղաներին դարձեւ դեռ էր սալ: Ս. Բաբայանը դատարարացեց, որ Ռազմիկը շատ լավ գիտի, որ հիմա ոչինչ չունենք նրանց սալու, հետո կտանք:

Հետո, իսկապես, մեզ դարձեւ տեսնել 60 հազար ռուբլով, որը ես հավասարապես բաժանեցի բոլորիս միջեւ:

### ԱՎԻԱՑԻԱՅԻ ՀԱՐՎԱԾՆԵՐԻ ՏԱԿ

Պարտություն կրելուց հետո թուրքերն ուժեղացրեցին հարվածներն օդից, միաժամանակ մեր դիրեկտի վրա նրանք թնդանոթային կրակ էին բացում: Չորս-հինգ օր շարունակվեց այդ մարտությունը: Մենք լավ էինք դիրքավորվել եւ թեմանու ռումբերը մեզ առանձին վնաս չէին հասցնում: Մենք խրամասների մեջ էինք եւ լի էինք վճռականությամբ եւ մղելու թեմանուն, եթե նա հարձակման անցնեւ:

Հինգերորդ օրը նրանք նորից գրոհի անցան, բայց այս անգամ ոչ թե ճակատային գծով, այլ այն եւ ձախ թեւերի ուղղությամբ: Զգացվում էր, որ այդ հարձակման համար նրանք լրջորեն նախադատարարվել էին: Օգոստոս ամիսն էր: Խոսն արդեն կորցրել էր իր կանաչ գույնը եւ թուրքերը, որոնց առջեւից եկող գրոհայինների մեջ կային նաեւ այլազգի վարձկաններ, աշխատում էին հարմարվել սեղանին: Նրանք մինչեւ զոհակցեցին մեր կացել էին, մարմինները ներկել այնպես, որ չզանազանվեին դեղնած խոտերից: Եվ, իսկապես, երբ նրանք սողալով գալիս էին, համարյա չէին երեւում: Նրանք սնայոթներ էին բերել առաջավոր գիծ , որդեսգի դիմուկ կրակոցներով ոչնչացնեին մեր հրամանատարներին եւ գնդապետներին:

Մի անգամ ձախ թեւի կողմից, որտեղ դիրքավորված էր Լեւոնիանյանի ջոկատը, երեք թուրք, ձեռքներին նռնակներ, սողալով մոտենում են մեր դիրեկտին: Մնացել էր ընդամենը 30 մետր, որ նրանք հասնեին մեր խրամասներին, երբ մերոնցից մեկը՝ 17 տարին չլրացած մի դատարարի նկատում է նրանց: Բայց նա այնպես է վախենում, որ լեզուն կաղվում է ու չի կարողանում զու-



Շացնել իր ընկերներին: Նա կարողանում է նեղվել թմբի ետերը եւ կրակել դեղի վեր: Թուրքերը նետում են երկու նռնակ, որոնց դայթյունից զոհվում է մերոնցից մեկը, իսկ երկու հոգի վիրավորվում են: Մերոնք իսկույն կրակ են բացում թեմամու վրա: Նրանցից երկուսը սղանվում են, իսկ երրորդը վիրավոր վիճակում գերի է ընկնում: Այդ վիրավորը թուխ գույնի մարդ էր, նրա մարմինը ներկված էր դեղին ներկով, իսկ գլխին տեւուներ էին հարմարեցված:

Փորձեցիմք հարցախոնջել նրան, բայց նա չէր խոսում, իրեն խուլ ու համրի տեղ էր դրել: Տղաները փչել էր մնում մի լավ ծեծեին 17-ամյա հայ դասանուն, մենք չթողեցինք: Նա խոստովանեց, որ առաջին անգամ էր կռվի մեջ եղել, վախից իրեն լրիվ կորցրել էր եւ չգիտեր, թե ինչ է անում:

Երեք օր անընդմեջ գրոհներ ձեռնարկելուց հետո, թեմամին ավելի ուժեղացրեց ռմբակոծությունը ինքնաթիռներից: Ռուսները նրանք զգում էին մեր թիկունքը, որտեղ մեր խոհանոցն էր: Ըստ երեւույթին, նրանք նկատել էին օջախի ծուխը: Մենք աշխատում էինք այնպես անել, որ ծուխ չլինի, բայց այնուամենայնիվ լինում էր:

Չերթական հարձակման ժամանակ բոլորը թափվել էին «ԲՄՊ»-ի տակ, իսկ Ռաֆիկը հարմար տեղ էր փնտրում, երբ դայթյուն ռուսները: Նա ծանր վերք ստացավ թեւից եւ շատ արյուն կորցրեց: Շուրջ նրան տարավ Չլդրան՝ դաւաճային հոսպիտալ: Այնտեղ նրան վիրակապեցին եւ ուղարկեցին Ստեփանակերտ: Մի ֆանի ժամ անց Շուրջ վերադարձավ ու անցավ իր դարձակաճարությունների կատարմանը:

### ՏԱՆԿԱՅԻՆ ԳՐՈՂ

Մի անգամ, երբ դարձաւսվում էինք ճաշելու, ռացիայով լսեցիմք հետեւյալը. Ալեան տեղանում, մեզանից 3 կմ դեղի ձախ, դաւաճարությունը ստանձնած ջոկատի հրամանատար Մելիկը հայտնում է Մեյրան Օհանյանին, որ թուրքերը հարձակվում են սանկերով: Նա օգնություն է խնդրում մեկ «ԲՄՊ»: Մեյրանը մայել էր ֆարեգին, հետո հարցում արել մարտակերտներին, որոնք լավ գիտեին տեղանքը, եւ վերջիններս դասասխան էին սվել, թե «ԲՄՊ»-ն այդ տեղով չի կարող անցնել: Պետք է հույսը դնել նռնականետների վրա:

Մելիկը իր խնդրանքը մի ֆանի անգամ կրկնեց: Մեյրանը դասասխանում էր, թե ինքն ինքն ինքն ինքն, երբ լինի, կուղարկի: Նրան դասասխանեցին, որ արդեն տեսնում են երեք տանկ եւ տղաները վախենում են, որ չկարողանան նրանց խփել, հետեւադեպ կնահանջեն:

Ես կառավեցի ռացիայով Մելիկի հետ եւ հարցրեցի վիճակի մասին: Նա գիտեր, որ իմ ջոկատը իրենից 3 կմ վերեւ է գտնվում: Ես ասացի, որ այդտեղով թեմամու մեծ սանկերը չեն կարողանա անցնել: Իսկ եթե անցնեն «ԲՄՊ»-ներ, ադա դրանց կարելի է խփել նռնականետներով: Թեմամին մանուրներ է անում եւ եթե հարձակվի, ադա կհարձակվի իմ ջոկատի վրա:

Մի ֆանի բողբ անց, երբ Մելիկը նույն խնդրանքով դիմեց Մեյրանին, ես խառնվեցի նրանց խոսակցությանը եւ ասացի, որ դասարատս եմ օգնելու նրան: Մեյրանն ուրախությամբ համաձայնվեց:

Ես կանչեցի մեր հետեւակի մարտական մեքենայի հրամանատար Միտրին եւ առաջադրանք սվեցի օրջվել, գնալ Ալեան (շուրջ 10 կմ), այնտեղից կրակ բաց անել թեմամու վրա եւ շատ վերադառնալ: Նա իսկույն մեկնեց: Երբ նա տեղ հասավ, սկսեց կրակել: Թուրքերը ետ դարձան: 10 բողբ չանցած նրանք հարձակումն ուղղեցին իմ ջոկատի կողմը: Մեր վրա գալիս էին երկու տանկ եւ մի «ԲՄՊ»:

Ես իսկույն հայտնեցի Մելիկին, որ Միտրին ետ ուղարկի: Շատրին էլ իրագեկ դառնեցի թուրքերի հարձակման մասին: Կուսադասում լսել էին մեր խոսակցությունը ռացիայով եւ Չրայրը (Չրոն) ասաց, որ ինքն 10 հոգի է ուղարկում ինձ օգնության: Նա խնդրեց, որ մենք չսանք դիրքերը, հակառակ դեղիում իրենք օրջադասման մեջ կընկնեն:

Ես դասասխանեցի, որ թեմամու կկարողանանք ետ օդրտել: Ես վստահ էի տղաների վրա, որոնք արդեն փորձ ու հմտություն էին ձեռք բերել: Նրանք հանգիստ սղասում էին եւ գիտեին, թե ինչ պետք է անեն: Ես մի օր առաջ կանչել էի սակրավորներին, որոնց դեկավարը Արմենն էր: Նա եկավ եւ այնպես դրեց հակասանկային ականները, որ ոչ մի տանկ չկարողանար անցնել մեր կողմը: Պետք է ասեմ, որ իմ տեսած սակրավորների մեջ ամենալավը Մեյրանյան Արմենն էր: Ցավով արտի, ասկերանի օրջանի գյուղերի ազատագրման ժամանակ նա զոհվեց ականի դայթյունից:



Երբ լսեցինք թե՛նամու գրահատեխնիկայի շարժիչների աղմուկը, ես կարգադրեցի գործի զցել մեր սանկի շարժիչը: Մինչեւ այդ թուրքերը մեր վրա էին արձակել Շրադենլային ռումբեր, որոնք դայթուն էին շուրջ 50 մետր բարձրության վրա՝ վերածվելով հարյուրավոր կարմրավուն ասեղանման բեկորների: Չրանց հետեւանով մենք ունեցանք 8 վիրավորներ, որոնց Ասլանի ջոկատի միջոցով ուղարկեցինք հոսպիտալ:

Տանկի շարժիչն աշխատում էր: Համիկը (սանկի հրամանատարը) ինձ ձայն սվեց, որ եթե իմի՛ր սանկ խփի, մի ձեռք կոնֆլյաժ կսա՞մ իրեն: Կոնֆլյաժը խայտաբղետ գույնի գինվորական արտահագուստ էր, որից դառնել էի երկու ձեռք: Ես նրան խոստացա անդաման սալ:

Թե՛նամու սանկերը եւ «ԲՄՊ»-ն մոտենում էին: Նրանց հետեւից գրոհում էր թուրքերի հետեւակը: Դա նրանց 6-րդ հարձակումն էր:

Քանի որ մեր շղաները կրակում էին ծառերի ետեւից, թե՛նամին հրաժարվեց ուղիղ նշանառությամբ նրանց վրա կրակելուց եւ սկսեց կրակել թեւերից՝ խաչածեւ:

Ես մի ֆանի անգամ վեր կացա հրահանգներ սալու եւ զգացի, որ ընկնում եմ սնայոթների կրակի տակ: Ասի՞րված էի դառնել: Գալստյան Սերժիկին դատարեցի, որ նա իր կիսելը հրացանի վրա դրած վեր բարձրացնի եւ ինքս սողալով ես գնացի եւ մտա մի ծառի ետեւ: Դրանից հետո Սերժիկին ասացի՝ բարձրացրու: Նա բարձրացրեց կիսելը եւ սնայոթերն անմիջապես կրակեց: Ես նկատեցի կրակոցի բոցը եւ նրա ուղղությամբ ավտոմատով երկու կրակոց արձակեցի: Մի ֆանի բողբոջ անց Սերժիկին խնդրեցի, որ նորից բարձրացնի կիսելը: Նա բարձրացրեց, բայց սնայոթերը լռում էր:

Երբ մարտն ավարտվել էր եւ մերոնք հավաքվում էին սղանված թուրքերի զենքերը, ես շղաներին ասացի, որ գնան սնայոթերի զսնված տեղը եւ բերեն նրա հեռադիտակով հրացանը: Նրանք գնացել էին եւ տեսել սնայոթերի դիակը, իսկ կողքին հեռադիտակով հրացանը: Քիչ անց, այդ հրացանն իմ ձեռքին էր:

Դա մարտից հետո էր, իսկ դրանից առաջ սոսկալի դղրոց էր ընկել: Թե՛նամին կրակում էր զենքի բոլոր տեսակներից, մենք դատաստիսանում էինք: Հրատալի գործում էր մեր սանկի ընդամենը երկու հոգուց բաղկացած անձնակազմը: Վլադիմիրի ջոկատը երկու օր առաջ գնացել էր Ստեփանակերտ հանգստանա-

լու: Նրանց փոխարեն նոր շղաներ էին եկել Ստեփանակերտից, որոնց հրամանատարն էր Շահենը: Նրանք ծանոթ էին մեր գործերին եւ վստահեցնում էին, որ կարդարացնեն իրենց: Նրանք հերոսաբար դիմակայում էին թե՛նամուն, որը շատ զոհեր էր սալխու: Մերոնց մեջ միայն վիրավորներ կային:

Կռվի թե՛ ժամանակ վերադարձավ մեր «ԲՄՊ»-ն: Մարտը տեւեց 3 ժամից ավելի: Թե՛նամին կորցրել էր երկու սանկ, որոնցից մեկը դայթել էր Արմենի վարդեսորեն դրած ականի վրա, մյուսին խփել էր սանկի հրամանատար, Երեւանի դոկտորտեխնիկական ինստիտուտի 5-րդ կուրսի ուսանող Համիկը, որին ես հանձնեցի խոստացածս համազգեստը:

Թուրքերը մեծ թվով զոհեր սալուց հետո ետ էին ֆաշվում: Արդեն մթնել էր: Մենք տեսանք, որ թե՛նամին ուզում է խփված սանկերից մեկն իր հետ տանել: Համիկը կրակ բաց արեց իր սանկի գնդացրից: Թուրքերը փախան: Մեր շղաներն ուզում էին մոտենալ խփված սանկերին, բայց ես արգելեցի:

Առավոտյան ժամը 6-ին Համիկին կարգադրեցի աշխատեցնել սանկի շարժիչը եւ շարժվել հակառակորդի խփված սանկերի կողմը՝ օջանցելով, իհարկե, Արմենի դրած ականները: Տանկը շարժվեց, իսկ մենք 20 հոգով շրջա կազմած շարժվեցինք նրա հետեւից: Խփված սանկերի մոտ օջախի հետքեր տեսանք: Ուրեմն թուրքերը մնացել էին, որ սանկերին մոտեցող մեր շղաներին խփեին, իսկ երբ լսել էին սանկի հռնդյունը, փախել-զնացել էին:

Մենք հավաքեցինք սղանված թուրքերի զենքերը եւ հանձնեցինք Յուրա Հովհաննիսյանին, որը եկել էր օտարից: Մեր մեխանիկը զննեց թե՛նամու սանկը եւ ասաց, որ նրան ոչինչ չի դատարել: Տանկը նա սարավ մեր դիրքերի մոտ: Դա 3-րդ գրահատեխնիկական էր, որ մենք խլում էինք ադրբեջանցիներից:

Ես կառավարեցի Սլավա Ուսնունցի հետ, որը զինամթերքի գծով հրամանատարի տեղակալն էր, եւ խնդրեցի այդ սանկի համար անձնակազմ ուղարկել, բայց օտարում սանկիսներ չունեին: Նրանք մի մեխանիկ ուղարկեցին, որն աշխատեցրեց սանկը եւ սարավ դեղի օտար:

Ռացիայով ես կառավարեցի Սեյրանի հետ եւ բացատրեցի կացությունը: 24 օր շղաները դատարարության դիրքերում էին, այնպես էին հոգնել, որ դժվարությամբ էին շարժվում: Անգամ չէին կարողանում ճաշելու գնալ: Ճաշը թերմոսներով բերում էին խրա-



մասները: Տղաները ուսում էին, իսկ մենք 4 հոգով հսկում էինք: Բոլորս էլ անսանելի հոգնած էինք եւ սանջվում էինք անհուն-թյունից:

Տղաներին հանգիստ էր դեմք, այլադեպ նրանք չէին կարողանա դիմանալ թե՛նամու նոր գրոհներին:

Հաջորդ օրը մեզ չկարողացան փոխարինել: Հրամանատարության ձեռքի տակ դասարանի ջոկատներ չկային: Մեր տղաներից 17 հոգու հանգստի համար ուղարկեցի թիկունք (500 մետր հեռավորության վրա): Այդ ժամանակ թուրքերը կրկին հարձակվեցին, բայց այս անգամ առանց սանկերի: Մարտն արդեն սկսվել էր: Անցել էր մեկ ժամ: Հանգստի գնացած տղաները ռացիայով հարցնում էին մեզ՝ զանք, թե ոչ: Ես վստահ էի, որ թուրքերին ետ կօղբեցնեմ, այդ դասճառով մերժում էի նրանց: Նրանք, երբ տեսան, որ կռիվը երկարում է, սկսեցին զալ մեր կողմը: Ես կարգադրեցի, որ սողանեն 200 մետր հեռավորության վրա: Մարտն ավարտվելուց հետո թույլ սվեցի, որ նրանք վերադառնան: Թե՛նամին կրկին ետ օղբեց՝ սալով բազմաթիվ զոհեր:

Խփված սանկերը, որ մինչեւ հիմա այնտեղ են՝ Մեծ Շենի անջառում, իրենց տեսնելով ոգեւորում էին մեր տղաներին եւ, ընդհակառակը, ահաբեկում թե՛նամուն:

Հաջորդ օրը Սեյրանը նոր ջոկատ ուղարկեց, որը բաղկացած էր Մարտակերտի միլիցիայի աշխատակիցներից: Հրամանատարը Մարտակերտի միլիցիայի բաժանմունքի ղեկավարից մեկն էր: Վերջինիս ցույց սվեցի Արմենի դրած ակամների տեղը եւ այն վայրերը, որտեղով կարող էր թե՛նամին հարձակվել: Հետո մենք հանգստի համար ետ ֆազվեցինք՝ սանկերով մեզ հետ «ԲՄ-Պ»-ն, որը վարում էր սրակտորիս Ռաֆիկը:

Ճանադարհին «ԲՄՊ»-ի օւղթիչը կանգ առավ: Հանկարծ տեսանք Սեյրան Օհանյանին, որը մե՛նե՛նայով գնում էր դիրքերը սուղեւրու: Նա ողջունեց մեզ, շնորհակալություն հայտնեց: Երբ նա տեսավ մեր «ԲՄՊ»-ն, մտավ նրա մեջ եւ փչեց անց աշխատեցրեց օւղթիչը: Սեյրանը փորձված սանկիստ էր, եղել էր սանկային վաճառի հրամանատար: Նա խորհուրդ սվեց մինչեւ տեղ հասնելը օւղթիչն այլեւս չկանգնեցնել:

Մենք եկանք Սեփանակերտ: Հետո ինձ զանգեց Սերժ Սարգսյանը եւ հայտնեց, որ երկու օր անց դեմք է գնանք ռազմաճակատ: Ես մի նոր «Կամազ» բեռնատար մե՛նե՛նա էի ստացել, որի վարորդը իմ հարեւան Գե՛նան էր: Այդ մե՛նե՛նայով մեկնե-

ցինք: Երբ հասանք Սեփանակ գյուղի մոտ, իմացանք, որ մեր թողած դիրքերից մերոնք նահանջել են օւղթ 10 կմ եւ թե՛նամին դուրս է եկել Մարտակերտ-Քելբաջար խճուղի:

Գնացինք Չլդրան գյուղի մոտ գնվող մեր օւղթը, որտեղ մեզ ասացին, թե Մեծ Շենի մոտ գնվող դիրքերից նահանջել ենք, դեմք է գնանք Սեփանակ գյուղի մոտ: Սեփանակն հունական եւ հայկական խառը բնակչություն ունեցող գյուղ էր: Հուլյաները բարեկամական սերս կադերի մեջ էին իրենց հայ հարեւանների հետ եւ հաճախ դաստիարակում էին խառն ամուսնություններ: Երբ ադրբեջանցիները գրավեցին այդ գյուղը, բնակիչները տեղափոխվեցին Սեփանակերտ, որն այն ժամանակ ռմբակոծության տակ էր: Հուլյաների մի մասը դիմեց Հունաստանի կառավարությանը եւ թույլտվություն ստանալով տեղափոխվեց Հունաստան: Ղարաբաղում կային նաեւ այլ հունական գյուղեր, որոնց բնակիչները եւս նույն վիճակի մեջ հայտնվեցին:

## ՀԵՌՈՒՍՏԱՆԿԱՐԱՅԱՆՈՒՄ

Մի օր երեւանի հեռուստատեսության նկարահանող մի խումբ եկավ մեզ մոտ: Նկարահանեց ջոկատիս մարտիկներին արժավի դասին եւ անջառում հանգստանալիս: Հետո գրուցեցին մեզ հետ ու մեկնեցին այլ գործատուներ: Ամիսներ անց մենք իմացանք, որ նկարահանված նյութը ցուցադրվել է երեւանի հեռուստատեսությամբ: Գրող Բագրատ Ուլուբաբյանը դիտել էր այդ հաղորդումը եւ այդ մասին գրանցում կատարել իր օրագրում: Վերջերս լույս ընծայած իր «Արցախյան գոյադարձարի տարեգրություն» գրքում (հրատ. երեւանում, 1997թ.) այդ մասին նա գրել է հետեւյալը.

*«Հեռուստատեսությամբ ցույց սվին Մարտակերտի օւղթանի մի գործադրական, որի հրամանատարն է Ռազմիկ Պետրոսյանը՝ նախկին ֆուտբոլիստ, մարզիչ, Սեփանակերտի մարզադահլի սնօրեն, օւղթան առաջին օրերից էլ՝ գոյադարձարի կազմակերպիչների առաջին օւղթում: Ոգեւորությամբ խոսեց իրենց խնդիրների մասին, ցավով՝ ծախողանքներից: Լրիվ ծերմակել է, երկու տարի առաջ մեր տուն էր եկել, ոչ մի ծերմակ մազ չունեւ: Ծերմակել է, բայց նույն տիպը*



ու կրակոց երհասարդն է: Տղան իր զորաջոկասում է կռվում՝ գեղեցիկ, ամուր, ջլաղիմդ, ինչդեպ հայրը: Հարցնում են՝ ի՞նչ կարծիքի ես հրամանատար հորդ մասին: «Լավ,- ասում է,- փորձառու է, միշտ ծիծես է մտածում, հարաբերությունները զինվորի հետ հարգալից, դաստիարակչական: Աղյա կասակում է,- լավ է, որ հրամանատար է, թե չէ, որ շարժան լինե, ինձ դեպ չէր կարող կռվել: Դե տարեց մարդ է, 50-ն անց...»:

Ուրեմն տղան հորն ուրիշ կերպ չի դասկերացնում, քան կռվի դասում, բայց լավ է, որ հրամանատար է...» (էջ 551-552):

## ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿՌԻՎՆԵՐ

Մեհմանայի մոտ դիրքավորվել էր Հուրոյի (Հրայրի) ղեկավարության սակ զսնվող ջոկաճը: Նրանից աջ՝ դեղի Գյուլաթաղ, Իւլիչի խումբն էր: Նորիկի ջոկաճը դասում էր Գյուլաթաղից Մեհմանա սանող ճանադարից: Մենք զբաղեցրեցինք ձախ կողմը՝ Դրմբունի ուղղությունը: Այնտեղ լավ բարձունք կար, որի վրայից մեր հսկողության սակ էին վերցրել թե՛ ձորի, թե՛ սարի բարձրացող ճանադարները:

Հակառակորդի մասշտաբային էֆեկտիվ միջոցներ չունեինք այդ վայրում: Միայն ձեռքի հրթիռներ կային, որոնց միջոցով կարողացել էինք խփել թե՛ սանու մի քանի ինքնաթիռ եւ ուղղաթիռ: Ամեն օր ազերիների կողմից գալիս էին «ՍՈՒ-25» եւ «ՍԻԳ-25» ինքնաթիռներ, ռմբակոծում մեզ ու հեռանում:

Մի քանի օր անց թուրքերը նորից հարձակման անցան: Նրանք ճնշում էին զորձադրում սանկերով: Լավ էր դաստիարակվում Հուրոյի ջոկաճը, իսկ Մարտակերտի անփորձ մարդիկ փախուստի էին դիմում: Երբ հարցնում էինք նրանց, թե ինչու՞ էին փախչում, նրանք դասասխտանում էին, որ լավ հրամանատար չունեն:

Թուրքերը շարժվում էին դեղի Մեհմանա-Մարտակերտ-Դրմբուն ճանադարից: Այդ մասում մեր սանկերը խփել էին թե՛ սանու երկու հետեւակի մարտական մեքենա, ուստի ազերիները օջաղացում անելով Գյուլաթաղի կողմով եկան դեղի Մեհմանա՝ մեզ օջաղացման մեջ վերցնելու համար:

Այդ ժամանակ վիրավորվել էին Նորիկը եւ էլի մի քանի մար-

սիկներ: Նրանց կողմից դաստիարակությունը թուլացել էր եւ օջաղացման մեջ չընկնելու համար իմ ջոկաճի տղաներից մի քանիսին ուղարկեցի Նորիկի դաստիարակած դիրքերը՝ կասեցնելու թուրքերի առաջխաղացումը: Այդ մասին տեղյակ դաստիարակ հրամանատարությանը: Շարժից օգնություն ուղարկեցին Սամվել Կարադե-սյանին, որն իր հետ բերեց մի սանկ: Ճանադարից նա հավաքել էր եւ իր հետ բերել փախած մարտակերտցիներին: Մենք ժողովի դեպ մի հավաք սարկեցինք: Ուզում էինք մարտակերտցիներից իմանալ փախուստի դաստիարակ մասին: Նրանք նորից նույն էին ասում՝ չունեն լավ հրամանատար եւ չգիտեն, թե ի՞նչ են անելու: Նրանցից մեկին հրամանատար նշանակեցինք, բացառեցինք ջոկաճի անելիքները, ցույց սվեցինք տեղանքը, իմացանք, որ զենքերին տարաբանում են, դարձաբանեցինք հրամանատարին իր խմբին տրվող առաջադրանքները եւ դաստիարակեցինք, որ նա մասշտաբ կադրի մեջ լինի մեզ հետ:

Մարտակերտ-Քելբաջար ճանադարից ցատ մոտ էր (մոտավորապես 2կմ): Ժորայի (Գրաղ Ժորայի) ղեկավարության սակ լավ էր աշխատում մեր հրետանին: Հրետանավորները խփել էին մի քանի սանկ, իսկ մեր ուղարկած ջոկաճները հսկողության սակ էին վերցրել Մարտակերտ-Քելբաջար ճանադարից եւ խփում էին այնտեղով անցնող զինվորներ տեղափոխող թուրքական զինվորական մեքենաներին, ոչնչացնում զինվորներին, վառում եւ դայթեցնում մեքենաների մեջ եղած զինամթերք:

Մարտակերտը թուրքերի ձեռքին էր: Մեր խնդիրն էր կասեցնել թուրքերի առաջխաղացումը դեղի հարավ: Դիրքային համառ կռիվներ էին: Մի օր օդում երեւացին երկու ուղղաթիռ: Մենք կարծեցինք, որ թուրքական են եւ փչ էր մնում կրակ բացելու: Պարզվեց, որ դրանք հայկական ֆաղաբացիական ուղղաթիռներ էին: Խիզախ օդաչուները, խաբելով թուրքերին, սկզբում թռել էին Մարտակերտի վրա եւ այնտեղից, այսինքն թուրքերի թիկունքից, եկել էին մեր կողմը: Թուրքերը կարծում էին, թե դրանք իրենց ուղղաթիռներն են եւ ոչինչ չձեռնարկեցին նրանց դեմ: Ուղղաթիռները ցած բարձրությունից սկսեցին ռումբեր նետել թուրքերի դիրքերի վրա՝ մեծ կորուստներ դաստիարակելով նրանց: Եվ այդպես, մեր ուղղաթիռներն անարգել ռմբակոծեցին թուրքերին ու հեռացան:

Մի անգամ գիշերը Հաթերից նահանջող մեր ջոկաճներից



մեկը չէր կարողացել կողմնորոշվել եւ դեգերում էր մեր կողմերում: Ռացիայով կառուցված էր Եւրոպայի հետ եւ ուզում էին իմանալ, թե ո՞ր կողմը կարող էին գնալ, որ թուրքերի ձեռքը չընկնեն: Ես խորհուրդ սվեցի նրանց զալ մեր կողմը, քանի որ թուրքերը դեռի Դրսթոն ջոկասներ էին ուղարկում: Հայսնեցի նրանց, որ ընդառաջ եմ ուղարկում երկու հոգու, որոնք լուսային հետազոծ թողնող փամփուռներ կրակեն օդ եւ նրանցով ցույց կսան դեռի մեր կողմը զալու ճանապարհը: Այդպես էլ արեցին: Նրանք որոշեցին ճիշտ ուղղությունը եւ մոտ 3-4 ժամ անց բարեհաջող հասան մեզ: Նրանք փաստորեն հայսնվել էին թեմանու թիկունքում:

20 օր մնացին այնտեղ: Լավ դաստիարակված էին, երբեմն էլ հակահարձակումներ էին ձեռնարկում՝ թեմանու դասճառելով մարդկային ուժի եւ տեխնիկայի զգալի կորուստներ: Մի անգամ, երբ ես էի մտնում թուրքերի հերթական հարձակումը, ջոկասների հրամանատարները հավաքվեցին մեզ մոտ: Ասում էին, որ երբ լավ են համագործակցում, թեմանին ոչինչ չի կարողանում անել եւ որդես կանոն, դաստիարակում է կրում: Որոշեցին այդպես էլ շարունակել:

Ջոկասներից մեկի ղեկները կրակ էին վառել, որդեսզի չորացնեն ջրերի միջով անցնելու ժամանակ թրջված կոշիկներն ու հագուստը: Թուրքերը նկատել էին խարույկի ծուխը եւ ակամանեցներից սկսեցին կրակել այդ ուղղությամբ: Հրաման սվեցինք անմիջապես հանգցնել խարույկը եւ հեռանալ այդ վայրից՝ մարդկային կորուստներ չունենալու համար:

Քնել էին դիրքերում եւ շատ շուտ արթնացանք: Գեման մեկնալով զննեց ջուր բերելու, որ թեյ դաստիարակներ: Հանկարծ մեր վերելում շուրջ 300 մետր բարձրության վրա մի ինքնաթիռ հայսնվեց: Գողցանք «վոզդուխ», «վոզդուխ» («օդ, օդ»): Բոլորը թափվեցին: Ինքնաթիռը նետեց կասեթային մի հսկա ռումբ, որը դայթեց մեզանից ոչ այնքան հեռու: Մերոնցից յոթ հոգի վիրավորվեցին, այդ թվում նաեւ ես:

Մենք լուր ուղարկեցինք փրկարար ջոկասին (Ասլանի ջոկասին), որ գար: Բայց ղեկները արյունաբերում էին լինում: Ասիոված «Կամազ» մեքենայից բերված ջուրը թափեցինք ցած, վիրավորներին դասգարակներով դրեցինք նրա մեջ եւ շարժվեցինք դեռի Չլդրանի հոստիսալը՝ դասային հիվանդանոցը: Ճանապարհին հանդիմեցինք սանիտարների «Ուազ» ազոնմեքենային: Վիրավորներին տեղափոխեցինք նրա մեջ, իսկ «Կամազ» ուղարկեցինք ես:

Չլդրանում մեզ առաջին օգնություն ցույց սվեցին, բայց քանի որ վիրավորները շատ էին եւ անընդհատ նորերն էին բերում, մեզ ուղարկեցին Ասեփանակեր: Ամեն օր «Շատօգնության» մեքենաներ էին գալիս Չլդրանի հոստիսալ եւ վիրավորներին տեղափոխում մայրաքաղաք:

Ասեփանակերի հիվանդանոցում տեղ չկար: Այդ դասճառով բժիշկ Մարուքյանը, թեթեւ վիրավորներին խնդրեց գնալ իրենց տները եւ ամեն օր զալ հիվանդանոց՝ բուժումը շարունակելու համար: Նա մեզանց մեր վերերը, փոխեց վիրակաղերը եւ դրանից հետո մերոնցից մի քանիսին տարան տուն: Գիշերը քնում էինք մեր տներում, իսկ առավոտյան Շոբի մեքենայով հավաքում վիրավորներին եւ տանում հիվանդանոց:

Ջոկասիս մի մասը մնացել էր դիրքերում եւ ես անդամանակով ելալ վերադառնալի: Բայց մի քանի օր հետո ջոկասը եկավ Ասեփանակեր, որովհետեւ Մեքենայի ու Չլդրանի դիրքերը մերոնք հանձնել էին: Թուրքերը շարժվում էին դեռի կազմն գեջը:

Մեկ շաբաթ անց ինձ կանչեցին եւ կարգադրեցին ջոկասն ուղարկել առաջավոր զիծ: Գիշերին, որ վիրավորված եմ, ուսի առաջարկեցին մի հոգու դեկավար նշանակել: Որոշեցի ինքս մեկնել, չնայած քայլել չէի կարողանում: Տղաների հետ մեկնեցինք դեռի շաբաթ, որը զսնվում էր Կիչան գյուղի մոտակա ծորակում: Այնտեղ էր հաստատվել նաեւ դասային հիվանդանոցը:

## ԿՈՒՎՆԵՐ ՄԵՅՄԱՆԱՅԻ ՄՈՏ

Շաբաթում կային մարտակերտից մի քանի սղաներ, որոնցից իմացանք, որ մերոնք ես եմ գրավել Չլդրանը: Այդ ժամանակ Չլդրանի մոտակայքում էր զսնվում Սամվել Կարաղեյանի ջոկասը: Նա շաբաթի սղաներին խնդրեց, որ իմ ջոկասն ուղարկեն իր դիրքերը: Ուշ երեկոյան, երբ մութն արդեն ընկել էր, մենք անցանք ռմբակոծման տակ զսնվող ճանապարհը եւ գիշերվա մնացած մասն անցկացնելով Չլդրանի աղբյուրի մոտ՝ առավոտյան սկսեցինք գրոհել Չլդրանի առջեւում զսնվող Մեքենայի բարձունքը:

Բարձունքը գրոհողների, հասկաղես հետախույզների մեջ հրա-



Շալի ղեկավար կային: Նրանցից կուզեմայի հիշել Անդրյան (Անդրանիկյան), որը հետագայում դարձավ գնդի հետախուզության հրամանատարը, Վարդգեսին եւ չլորանցի Վիգենին:

Հարձակումը սկսել էինք առավոտյան վաղ: Անդրյան գնում էր աջ կողմից, իսկ մենք մեջտեղում էինք: Թուրքերը Մեհմանա-Չլորան խճուղին դառնում էին 3 թե 4 սանկերով, որոնք գնում-գալիս էին ու անընդհատ կրակում: Մենք շուրջ 2 կմ-ի վրա շղթա էինք կազմել եւ երբ մոտեցանք խճուղուն, թուրքական սանկերը սկսեցին կրակել մեզ վրա: Ես իսկույն նռնակաձեւից կրակեցի սանկի վրա, իսկ Վարդգեսի ղեկավարը կրակեցին «Մուխա» («ճանճ») կոչված հրթիռով եւ խփեցինք սանկին: Տանկն ուժեղ ցնցվեց ու կանգ առավ, բայց քանի որ նրա լույսերը բաց էին, անձնակազմը այդ ցնցումից մեծ վնաս չստացավ եւ անմիջապես փախուսի դիմեց: Մենք իջանք խճուղին եւ անցնելով այն առաջ շարժվեցինք այնպես անելով, որ ջոկատի շղթան մի ուղղությամբ լինի: Դա արեցինք նրա համար, որ դասահամար միմյանց վրա չկրակեմք: Այդ ժամանակ Անդրանիկի ջոկատը գրավել էր թուրքերի դիրքերը եւ խփել «S-72» մեկ սանկ:

### «ՅԱՇԱՍԸՆ ԱԶՐԲԵՅՋԱՆ ՀՈՔՅՈՒՄԱԹԸ»

Մենք հասանք այդ խփված սանկի մոտ եւ նայում էինք, թե որտեղից է դա այդպես վնասվել: Այդ ժամանակ վերելի կողմից նկատեցինք սեւ գույնի համազգեստով մի զինվորի, որը մոտենում էր մեզ: Նրա ձեռքերում երկու ավտոմատ հրացան կար: Մեկը բռնել էր աջ ձեռքով եւ փողոն ուղղել էր մեր կողմը, մյուսը ձախ ձեռքին էր, որը բարձրացրել էր վեր: Նա մոտենում էր: Մերոնցից մեկն ասաց. «Հանցա մեր էն ռիթի սանկիսներան ինի», մյուսը թե՛ «Ա, չէ, շատ ղեկավար հանցա թուրք ինի»:

Իսկ այդ զինվորը մոտենում էր մեզ: Երբ մնացել էր մոտ 40 թե 50 մետր, ես մեխանիկորեն ավտոմատ հրացանի փողոն ուղղեցի նրա կողմը եւ ռուսերեն բղավեցի. «Գցի՛ր զենքը»: Այն ավտոմատը, որ նա ձախ ձեռքով վեր էր բարձրացրել, վայր գցեց եւ մարմնով շրջվելով ուզեց փախչել: Այդ ժամանակ էլ աջ ձեռքին բռնած ավտոմատից կրակ բաց արեց: Երբ նա արդեն մարմնով շրջվել էր, գոռաց «Յաշասըն Ազրբեյջան հոֆյունաթը» («Կեցցե՛ ազրբեյջանական դեմքերը»):

Ես, ինչպես եւ մի քանի ղեկավար, կրակեցինք ու նա ընկավ: Վազելով մոտեցանք նրան: Արդեն մեռած էր: Վարդգեսի ջոկատի ղեկավարից մեկը՝ Կարենը, վերցրեց նրա մեռած ավտոմատը եւ մենք նրա խզակոթի վրա կարդացինք հայերեն գրված մի անուն՝ «Հարութ»: Եթե նա հասցներ կրակել, մեզ շատ վնաս կսար:

Կարենը եւ Վարդգեսը դասմեցին, որ այդ թուրք զինվորը Ներին Գոռաթաղ գյուղի մոտ եւս նույն բանն է արել: Երբ խփվել էր նրա սանկը, նա թռել էր սանկի վրայից եւ դառնել գետնին: Մերոնք, որ այդ ժամանակ զենվելիս են եղել շուրջ 100 մետր հեռավորության վրա, կարծել են, թե սղանված է, մոտեցել են նրան: Մնացել էր մոտ 100 մետր, որ հասնեին նրան, նա վեր է թռել եւ ավտոմատից կրակել մերոնց վրա: Չորս հոգի մերոնցից վայր էին ընկել: Երկուսը սղանվել էին, մյուսները՝ վիրավորվել: Նրան այժմ ճանաչեցին արտահագուստից եւ մազերից: Նա շփոթեցրել էր, իսկ դիմացի կողմից՝ ճաղատ: Այդպես էլ նա սղանվել էր ղեկավարի հիշողության մեջ:

Մի քանի օր անց Շահումյանի շրջանի Գյուլիսան գյուղի ջոկատի ղեկավարը թաղեցին նրան, որովհետեւ դիակը սկսել էր նեխել:

### ԱԶԵՐԻ ԿԱՊԱՎՈՐԻ ԳԵՐԵՎԱՐՈՒՄԸ. ՈՒՂԻՈՎԱՊ ՍՈՒՐԱԹ ՀՅՈՒՍԵՅՆՈՎԻ ՀԵՏ

Չլորանից առաջ էինք անցել մոտ 8 կմ: Դիրավորվել էինք եւ դառնում էինք շուրջ 2 կմ-ի չափ սարածություն: Իսկ Չլորանից դեղի մեր դիրքերը 3 կմ բաց սարածություն կար: Այնքան մարդ չունեինք, որ կարողանայինք տեղավորել այնտեղ: Այդ սարածքը, փաստորեն, անդաժողան էր մնացել: Այդ մասին ինձ հայտնեց Սեյրան Օհանյանը: Ես 3-4 հոգու ուղարկում էի այնտեղ եւ նրանք բարձունքին նստած, հսկողության տակ էին դառնում շրջապատը:

Թեմանին ամեն գնով ուզում էր գրավել Չլորանը: Հսկող ղեկավարը հանկարծ ինձ հայտնեցին, որ թուրքերից շուրջ 15 հոգի շարժվում են Չլորանի ուղղությամբ: Այդ մասին ես հաղորդեցի Չլորանի դաստիարակներին: Նրանց մոտ էր նաեւ Սամվել Կա-



րադեսյանն իր ջոկասի մյուս մասի հետ (մնացածները ինձ մոտ էին): մենք դայմանավորվեցինք, որ ես փակեմ այդ թուրքերի դարձի ճանադարհը, իսկ իրենք կբարձրեն Չլդրանից դեղի Մեհմանա: Հետո մենք կգնայինք դեղի Չլդրան եւ թուրքերին կվերցնեինք օդակի մեջ:

Այդդեպ էլ արեցինք: Մեր ջոկասները շարժվում էին գրահասեխնիկայի հուսալի դաժադանության ներքո: Երբ մոտեցանք թուրքերին, նրանք կրակ բաց արեցին ու փախան ետ: Այնտեղ մերոնք էին եւ նրանք հայտնվեցին շրջադասման մեջ: Բոլորին սղանեցինք, բացի մեկից, որը, դարձվեց, նրանց կադավորն էր: Նրա ռացիան միացած էր ազերիների շաքի ռացիային եւ մենք լսում էինք աղբբեջաններեն խոսակցություն:

Մենք լսեցինք Մարտակերտի ճակատի հրամանատար Սուրաս Յուսեյնովի ձայնը: Բրդի մթերման ֆաբրիկայի դիրեկտորությունից գորահրամանատար դարձած Սուրաս Յուսեյնովը, որը Մարտակերտը գրավելու համար դարձել էր Ադրբեջանի ազգային հերոս, այդ ժամանակ գլխավորում էր Չլդրանի եւ մյուս գյուղերի դեմ ծավալված ռազմական գործողությունները: Հետագայում նա ղեկավարեց նախագահ Աբուլֆազ Էլչիբեյի դեմ հայտնի խռովությունը եւ ճանադարհ հարթեց Հեյդար Ալիևի համար դեղի նախագահական աթոռ, իսկ ինքը դարձավ Ադրբեջանի վարչադեսը: Ալիևը ձգեց ազատվել նրանից եւ Գանձակի խռովությունից հետո Սուրաս Յուսեյնովը փախսական դարձավ: Նա թաքնվում էր Մոսկվայում, բայց Ալիևը լեզու գտնելով աղբբեջանական նավթից հարբած ռուս չինովնիկների հետ՝ նրան ձերբակալել սվեց եւ տեղափոխեց Բաֆլի բան: Այժմ Սուրաս Յուսեյնովը բանտում է եւ սղասում է իր դատին: Բայց այն օրերին նա ճակատի հրամանատար էր եւ մենք լսում էինք նրա ձայնը: Նրա ռացիայի թվահամարն էր 52-ը:

Մահվան սարսափի տակ գերի ընկած ազերի կադավորը համաձայնվեց կասարել մեր բոլոր հրամանները: Հենց որ Ս. Յուսեյնովը կադավեց 15 հոգուց բաղկացած ջոկասի հետ, որը փչ առաջ ոչնչացվել էր մեր կողմից, մենք կադավորին կարգադրեցինք օգնություն խնդրել: Դա գիշերվա ժամը 12-ն էր: Ս. Յուսեյնովը հրաման սվեց լուսային հետք թողնող փամփուլոսներ կրակելով վեր, ցույց տալ տեղը: Երկու հոգով սկսեցին կրակել այդ փամփուլոսներով դեղի վեր: Ս. Յուսեյնովն անմիջադեպ կադավեց կադավորի հետ եւ հայտնեց, թե «դուք գտնվում եք Չլդրան-

Մեհմանա խճուղու վրա»: Նա հարցրեց, թե «ձեզ նկատե՞լ են խոզերը» (այսինքն հայերը, նրանք մեզ խոզ էին անվանում):

Կադավորին ասացինք հաղորդել հետեւյալը. «Ցերեկը նկատե՞լ են, իսկ հիմա՝ ոչ»: Ս. Յուսեյնովը կարգադրեց. «Տեղից չբարձրվել, առավոտյան ժամը 4-ին մարդ կուղարկեն. նրանց հետ ետ կգաք»:

Այդդեպ ուրեմն, Ս. Յուսեյնովին խաբեցինք եւ նա մեզ «նվեր» դեսք է ուղարկեց լավ զինված մի ջոկաս, որը կարող էր ընկնել մեր լարած թակարդը: Այդդեպ էլ եղավ: Գիշերվա ժամը 2-ի կողմերը 20 հոգանոց մի խումբ թողեցինք այն կետում, որտեղից կրակել էինք, մնացածներով դարան մտանք: Երկու ժամ անց տեսանք, որ մի խումբ է մոտենում մեզ: Թուրքերը կամաց-կամաց, ցաս զգուշորեն մոտեցան եւ հեռվից ձայներ էին հանում, որոնք նմանվում էին բորենու հաչոցների: Թուրք կադավորին հարցրեցինք, թե ո՞րն է նշանախոսը: Նա ասաց՝ բորենու հաչոցը: Մերոնցից չլդրանցի Վիզենն ասաց, որ ինքը կարող է այդդեպի ձայներ հանել: Երբ թուրքերը բավականին մոտեցան, Վիզենն իսկադես սկսեց բորենու նման հաչել: Մենք դարձուրեց լսեցինք թուրքերեն հետեւյալ խոսքերը՝ «Մերոնք են, եկե՛ք»:

Երբ նրանք մոտեցան, տեսանք, որ կլինեին 17-18 հոգի: Ես հրամայեցի կրակել: Միաժամանակ կրակեցինք ավտոմատ հրացաններից եւ 2 գնդացիներից: Նրանք էլ կրակ բաց արեցին, բայց անօգուտ: Համարյա բոլորն ընկան մեր կրակահերթերի տակ: Երբ մոտեցանք, հաճվեցինք 15 դիակ: Մի ֆանիսին հաջողվել էր փախչել:

Առավոտյան ժամը 9-ին Ադրբեջանի դաժադանության մի-նիսր Ռահիմ Գազիևը խոսեց «52-ի» (այսինքն Սուրաս Յուսեյնովի) հետ եւ հարցրեց. «Չլդրանը վերցրե՞լ եք, թե ոչ»: Սուրասը բացասական դասատխան սվեց եւ հայտնեց, որ Մեհմանայի բարձունքն իր կոկորդին է նստել, արդեն 30 զոհ է սվել: Նա խնդրեց «Գարանգոներ» ուղարկել: Պատասխանն այսուրիս էր. «Վաղը կուղարկենք, բայց ինչ գնով էլ լինի Չլդրանը դեսք է գրավեք»:

«Գարանգո» աղբբեջաններեն նշանակում է «Ծիծեռնակ»: Այդդեպ էին ասում ինքնաթիռներին: Մենք էլ ռացիայով խոսելու ժամանակ օգտագործում էինք զանազան ծածկանուններ. «S-72» անկին ասում էինք «Մեծ դողոճ», «Փոքր դողոճ» անվանում էինք հետեւակի մարտական մեքենան: «Վոլեյբոլիս» նշան-



նակում էր սղանված, «ֆուսբոլիս» վիրավոր: Ինֆնաթիռին մենք էլ էինք ասում «ծիծեռնակ», իսկ ուղղաթիռին «թիթեռ»: Թուրքերը երբ ասում էին «Խիյար ուղարկեմ», մենք հասկանում էինք, որ նրանք արկեր են դահանջում, իսկ երբ «Սենոչկա» էին ուզում, նշանակում է փամփուլոսի կարիք ունեն:

Այսպես ուրեմն, Ադրբեջանի դաժնադրության մինիստրը խոստացավ մյուս օրը մեզ վրա ինֆնաթիռներ ուղարկել: Ես հավաքեցի ջոկատների հրամանատարներին և կարգադրեցի բոլոր մեքենաները մտնել անհատ և լավ բողարկել, որովհետև մեզ ռմբակոծելու են օդանավերից: Մարտիկները ղեկ է իմանան այդ մասին և դիրքերից դուրս չգան:

Հաջորդ օրն առավոտյան լսեցինք ինֆնաթիռների շարժիչների հռնդյունը: Բայց երբ նրանք մոտեցան, դարձվեց, որ ուղղաթիռներ են: Երեք հաս էին «Կոբրա» մակնիշի: Նրանք վախեցան գալ մեր գլխավերելը և հեռվից հրթիռներ արձակեցին մեր կողմը: Բայց դրանք բոլորն ընկան մեզանից շուրջ 100 մետր հեռավորության վրա՝ ոչ մի վնաս չդատարարեցին մեզ:

### ԱՁԵՐԻՆԵՐԸ ԽԱՐՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹՅԱՆԸ

Երեկոյան նորից լսեցինք «52»-ի խոսակցությունը: Սուրաթ Յուսեյնովը մինիստր Ռահիմ Գազիեևին հայցնեց, որ Չլդրանը չի վերցրել և խնդրեց նորից «Ծիծեռնակներ» ուղարկել:

Հաջորդ օրը եկան ինֆնաթիռները և ռմբակոծեցին խճուղին: Մենք ունեցանք մի ֆանի վիրավոր: Լավ հասկանում էինք, որ Ս.Յուսեյնովը խաբուր է իր հրամանատարությանը: Լինելով ավելի հեռու Չլդրանից (մոտ 8 կմ), փաստորեն Դմբոնի մոտ, նա հայցնել էր, որ շատ մոտ է Չլդրանին (2 կմ) և ինֆնաթիռները ռմբակոծում էին Չլդրանի օջակայքը, իսկ մենք անվնաս էինք մնում:

Ս. Յուսեյնովի դարձնակոտությունը մեզ շատ օգուտներ տվեց: Օգտվում էինք նաև իրենց հրամանատարությանը խաբող ազդերի այլ «զորավարների» խաբեբայություններից: Այսպես, ադրբեջանական հրամանատարությունը մի գործնապես էր ուղարկել Չլդրանը գրավելու համար: Թուրքերը եկել էին Դմբոնի մոտ,

սղասել մինչև երեկոյան ժամը 6-ը և զենքի բոլոր տեսակներից կրակ բաց արել մեզ վրա: Բայց մենք նրանցից հեռու էինք շուրջ 6 կմ և միայն դայթյունների ձայներն էին մեզ հասնում: Մենք լռում էինք: Թուրքերը հետ կառավեցին իրենց հրամանատարության հետ և հայցնեցին, որ հանդիպել են հակառակորդի, այսինքն մեր ուժեղ դիմադրությանը և չեն կարողացել գրավել Չլդրանը: Նրանք թույլտվություն խնդրեցին վերադառնալ Դմբոն:

